

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԱՂ ՀԱՍԱԿԻ ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ

ԽՄԲԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳԻՐ

(Կյանքի առաջին և երկրորդ տարի)

ԵՐԵՎԱՆ 2012

ՀՏԴ 373.23 (073)

Երաշխավորված է ՀՀ ԿԳ նախարարի՝ 23.11.2012 թ.

ԳՄԴ 74.1

№ 1070-Ա/Ք հրամանով

Ս 260

Ծրագրի համակարգող՝ Ասյա Հովհաննիսյան

Հեղինակներ՝

Ասյա Հովհաննիսյան

Սվետլանա Մարության՝ *մանկավարժական գիտությունների
թեկնածու, պրոֆեսոր*

Կարինե Ղազարյան

Հասմիկ Մինասյան

Ս 260 Մանկապարտեզի վաղ հասակի առաջին և երկրորդ խմբերի կրթական համալիր ծրագիր: Կյանքի առաջին և երկրորդ տարի /Ա. Հովհաննիսյան, Ս. Մարության, Կ. Ղազարյան, Հ. Մինասյան ; ՀՀ ԿԳՆ. - Եր. : Կրթության ազգային ինստիտուտ, 2012 – 168 էջ:

ՀՏԴ 373.23 (073)

ԳՄԴ 74.1

ISBN 978 – 9939 – 806 – 60 – 0

© ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, 2012

Նախադպրոցական վաղ տարիքի երեխաների առաջին և երկրորդ խմբերի կրթական համալիր ծրագիրը նպատակ ունի ժամանակի պահանջներին համապատասխան բարելավել երեխաների խնամքի, առողջության և դաստիարակության հետ կապված գործընթացների կազմակերպումը՝ սկսած կյանքի առաջին օրերից:

Ծրագիրը հասցեագրված է բոլոր տիպերի նախադպրոցական հաստատություններին:

Ծրագրի ներդրման և գործածության մատչելիությունն ապահովելու նպատակով կից ներկայացվում են մեթոդական ցուցումներ:

Հարգելի գործընկեր

Ձեր մանկավարժական գիտելիքների գինանոցը հարստացվում է ևս մեկ ժամանակահունչ ծրագիր-ձեռնարկով, որը կօգնի հրականացնել երեխայակենտրոն դաստիարակություն՝ սկսած մանկան կյանքի առաջին օրերից:

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ

Ծրագրի հիմնական առանձնահատկությունները

- Այն նախատեսված է բոլոր տիպերի նախադպրոցական հաստատությունների համար:

- Ծրագրում առկա են կառուցվածքային բարեփոխումներ, որոնք ներառում են վաղ տարիքի երեխաների բնութագրիչները, զարգացման փուլերը, ինչպես նաև զգայական, ֆիզիկական, մտավոր, բարոյական, գեղարվեստագեղագիտական զարգացման և դաստիարակության խընդիրներ ու մեթոդներ, ուսումնադաստիարակչական աշխատանքների առաջատար ուղղություններ, օրվա մոտավոր կարգացուցակի (ռեժիմ) կազմմանը ներկայացվող պահանջներ. ներկայացված է միջավայրի և պայմանների, խաղերի ու պարապմունքների, երեխաների ինքնուրույն գործունեության նկարագրություն:

- Ծրագրի յուրաքանչյուր հատվածի վերջում տրված են չափորոշիչներ. ինչ պետք է իմանա և կատարի երեխան տարեվերջին:

- Ծրագրային նպատակների և խնդիրների արդյունավետ իրականացման համար բոլոր մեթոդիկաների նկարագրությանը կից տրված են մեթոդական ցուցումներ:

- Առաջին պլան է մղված «մանկապարտեզ-ընտանիք» համագործակցությունը. համագործակցելով ընտանիքների հետ հնարավոր է իրականացնել նաև ծնողների կրթություն՝ անդրադառնալով ինչպես երեխաների խնամքի, առողջության, այնպես էլ ուսուցման և դաստիարակության խնդիրներին:

Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015թթ. ռազմավարական ծրագրում նշված է. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն նախադպրոցական տարիքը բնութագրվում է որպես երեխայի ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական զարգացման ժամանակաշրջան, որը բաժանվում է հետևյալ տարիքային շրջափուլերի՝

-
- ա) Վաղ տարիք՝ մինչև 3 տարեկան,
 - բ) Կրտսեր նախադպրոցական՝ 3- 5 տարեկան,
 - գ) Ավագ նախադպրոցական՝ 5- 6 տարեկան:

Մանկապարտեզում գործող խմբերի անվանումներն են՝

1. Վաղ հասակի 1-ին խումբ (0-1 տարեկաններ)
2. Վաղ հասակի 2-րդ խումբ (1-2 տարեկաններ)
3. Կրտսեր 1-ին խումբ (2-3 տարեկաններ)
4. Կրտսեր 2-րդ խումբ (3-4 տարեկաններ)
5. Միջին խումբ (4-5 տարեկաններ)
6. Ավագ խումբ (5-6 տարեկաններ)

Կարելի է խմբերի համար ընտրել խորհրդանշական անվանումներ, օրինակ՝ «Ծիլ», «Կոկոն», «Բողբոջ», «Ծաղիկ» և այլն:

Սույն ծրագրի ստեղծումը պայմանավորված է հասարակության սոցիալական զարգացման, բարեփոխումների ոգով մանկավարժական գիտության նվաճումների գործնական կիրառման օրինաչափ անհրաժեշտությամբ:

Ծրագրում շարադրված են ծնված օրվանից մինչև երկու տարեկան երեխաների տարիքային և անհատական առանձնահատկություններին համապատասխանող ֆիզիկական, մտավոր, գեղագիտական դաստիարակության հիմունքները, կրթական աշխատանքի բովանդակությունը, ծրագրային նպատակներն ու խնդիրները: Մշակված են օրվա ռեժիմի սահմանման, շարժումների զարգացման, խաղ-պարապմունքների, առարկայական (առարկաներով, խաղալիքներով, գործիքներով և կառուցողական նյութերով) գործունեության և հուզազգացմունքային դաստիարակության պահանջները, ընդգծված է խոսքային հաղորդակցման առաջատար դերը: Տրված են ծնված օրվանից մինչև մեկ տարեկան երեխաների զարգացման չափանիշներն ըստ ամիսների:

Ոչ միշտ է պահպանված ծրագրի կառուցվածքային տարբեր մասերի (օրինակ՝ ծրագրային խնդիրներ և մեթոդական ցուցումներ, խաղ-պարապմունքներին ներկայացվող պահանջներ և այլն) հստակ տարանջատումը, քանի որ տարիքային փուլերի շարունակականության առումով

շատ են ընդհանրությունները: Վաղ տարիքի առաջին և երկրորդ խմբերի համար ընդհանրական մոտեցումները, նպատակները, աշխատանքի կազմակերպման ձևերն ու մեթոդիկան մշակվել են միասնական պահանջների հիման վրա և ներկայացվել առաջին մասում՝ երկու խմբերի համար: Իսկ երեխաների առօրյայի, պարապմունքների կազմակերպման, հոգեբանական զարգացման առանձնահատկություններն ու չափանիշները տրված են առանձին-առանձին:

Ծրագրի կատարման հիմնական չափանիշը երեխաների պատկերացումների ձևավորման, նրանց խաղային, կառուցողական, գեղագիտական և գործունեության այլ տեսակների զարգացման մակարդակի ապահովումն է:

Վաղ հասակի առաջին (0-1 տարեկան) և վաղ հասակի երկրորդ (1-2 տարեկան) խմբերի համար պետությունը առավել կարևորում է ընտանիքի դերը և այդ տարիքի երեխաների զարգացման ու դաստիարակության հարցերում առաջնային է համարում ընտանիքի դերը՝ միաժամանակ խրախուսելով ու նպաստելով ծնողների կրթությանն ուղղված ծրագրերի իրականացմանը: Համայնքներն օժանդակում են վաղ տարիքի խմբերի պահպանմանը և ըստ պահանջարկի աջակցում դրանց ավելացմանը: Ի՞նչ անել, ինչպե՞ս կազմակերպել երեխայի օրը, ընտանեկան ծեսերն ու տոնակատարությունները, զբոսանքները, որպեսզի վաղ տարիքի երեխայի համար հետաքրքիր լինի:

Սույն ծրագիրը ուղղորդող դեր կունենա դաստիարակի համար՝ համակարգված ներդրելու այն ողջ տարվա ընթացքում:

Վաղ տարիքը կյանքի կատարյալ առանձնահատուկ շրջափուլ է՝ հիմնականում շարժումների և ակտիվ խոսքի զարգացման շրջան: Վաղ տարիքում մեծապես որոշակի է դառնում երեխայի անհատականությունը, նրա ապագա սոցիալական առաջադիմությունը: Հասկանալի է, որ երիտասարդ մայրերը մի կողմից շտապում են երեխայի զարգացման («մեծանալու») հարցում, մյուս կողմից լավ չեն պատկերացնում երեխայի տարիքային առանձնահատկությունները:

Վաղ հասակը բնութագրվում է ֆիզիկական, հոգեբանական (անգամ սոցիալական) զարգացման արագ տեմպով:

Ծրագրի շրջանակում խնդիրների հաջող իրականացման պայման է մանկապարտեզի և ընտանիքի (ընտանեկան մշակույթի առանձնահատկությունների հաշվառմամբ) փոխադարձ վստահելի կապն ու համագործակցությունը, որին ուղղություն տվող և կազմակերպող առաջնային դերը պատկանում է մանկապարտեզին:

Ընտանիքների ներգրավումը և մասնակցությունը ներմանկապարտեզային աշխատանքերին, միասնական աջակցության համակարգի ձևավորումը և ժամանակակից դաստիարակի երեխայակենտրոն մոտեցումը կխթանեն երեխաների ներդաշնակ զարգացումը սկսած վաղ տարիքից:

Վաղ տարիքում երեխաների դաստիարակությունը տարրական կրթության որակի հիմնաքարն է. այն դրական ազդեցություն ունի սահուն անցում կատարելու դպրոց, հեշտ հարմարվելու և անցնելու ակտիվ ուսումնառության, նախապատրասվելու հետագա կյանքին:

Մանկապարտեզում երեխայի դաստիարակության և ուսուցման կազմակերպիչը, ղեկավարն ու պատասխանատուն դաստիարակն է, որի մասնագիտական և անձնային որակներով պայմանավորված են երեխաների զարգացման ընթացքը և արդյունավետությունը:

Հայաստանում նախադպրոցական կրթությունը պետք է դիտարկել որպես ընդհանուր կրթության բաղադրամաս՝ վաղ զարգացմանն ուղղված միջոցառումների համատեքստում: Մինչ երեք տարեկանը հետագա զարգացման նախադրյալների ստեղծման ամենահարմար ժամանակահատվածն է: Ընդգծելով վաղ տարիքի կարևորությունը, շատ մանկավարժների կարծիքով, երեխայի դաստիարակության և կրթության գործընթացը պետք է սկսել հնարավորինս վաղ, այլապես հետո ուշ կլինի:

Մանկիկային շրջանը (0-1տ.)՝ բացառիկ ընկալունակ ժամանակահատված է երեխայի կյանքում: Այն ամենը, ինչ կատարվում է շրջապատում, մեծ ազդեցություն է գործում երեխայի իմացական զարգացման վրա, նպաստելով նրա անձի հետագա ձևավորմանը: Ծնողները և մանկավարժները պետք է ծանոթ լինեն երեխաների զարգացման շրջա-

փուլերին և ամիս առ ամիս հետևեն, թե որքանով է երեխաների զարգացումը համապատասխանում չափորոշիչներին:

Ժամանակակից ճանաչված հոգեբանները համարում են, որ երեխայի մտավոր զարգացումը ծնունդից մինչև երեք տարեկանը, ընկալման հնարավորությամբ համարժեք է չորսից մինչև տասնյոթ տարեկանին:

Պաստիարակության հիմնական խնդիրները

- Ֆիզիկական լիարժեք զարգացման ապահովում, առողջության պահպանում և ամրապնդում, հիմնական շարժումների ձևավորում, զարգացնող և անվտանգ միջավայրի, հանգիստ մթնոլորտի ստեղծում,
- կողմնորոշման ակտիվության ձևավորում, զգայական փորձի ընդլայնում, խաղալիքներով և առարկաներով կատարվող տարբեր գործողությունների զարգացում, խոսքը հասկանալու և ակտիվ խոսքին անցնելու խրախուսում և նպաստում,
- ակտիվության և ինքնուրույնության խթանում,
- շարժողական, լսողական և տեսողական ակտիվության ապահովում. տարբեր հնչյուններին ականջ դնելու, խոսքը լսելու և արձագանքելու, ձայնի հնչերանգները տարբերելու կարողություն, զգայական կապերի ստեղծում, օժանդակում՝ բառի և առարկայի միջև կապերի ստեղծմանը,
- հնչարտաբերման ապարատի և լսողական կենտրոնացման զարգացում,
- երաժշտության հետ կապված ձայնային ուրախ արձագանք և աշխույժ շարժումներ,
- ինքնուրույն քայլքի նախապատրաստման շարժումների կատարելագործում,
- քնի, կերակրելու և արթուն ժամանակը կազմակերպելիս երեխաների ցանկությունների ու առողջական վիճակի հաշվառում,
- երեխայի անհանգստության, լացի պատճառների պարզում և վերացում,
- լավ ախորժակի, խոր քնի, բավարար չափով թարմ օդ շնչելու պայմանների և հիգիենիկ խնամքի ապահովում,
- բոլոր գործընթացների նկատմամբ դրական վերաբերմունքի դաստիարակում,
- տարիքային հնարավորությունների սահմանում հիգիենիկ ունակությունների, վարքի կանոնների և ինքնուրույնության դաստիարակում:

Վաղ տարիքի երեխաների դաստիարակության և ուսուցման ընդհանուր խնդիրներն են՝

- առողջության ամրապնդում և պահպանում,
- լիարժեք ֆիզիկական զարգացում,
- տեսողական և լսողական ընկալման ձևավորում,
- ուշադրության, հիշողության, մտածողության ձևավորում և զարգացում,
- մեծահասակի խոսքը հասկանալու կարողություն,
- ակտիվ խոսքի տիրապետում,
- բառապաշարի ընդլայնում,
- մտերիմների նկատմամբ բարյացակամ վերաբերմունքի մշակում,
- ինքնասպասարկման, վարքի, գեղագիտական ընկալման զարգացում,
- երաժշտության նկատմամբ հետաքրքրության ձևավորում,
- առարկաներով, խաղալիքներով գործողություններ կատարելու կարողությունների զարգացում:

Վաղ տարիքի երեխաների հետ ուսումնադաստիարակչական աշխատանքի առաջատար ուղղություններն են՝

- Վաղ տարիքի երեխաների սոցիալականացումը հասակակիցների շրջանում,
- մեծերի և երեխաների հաղորդակցական միջոցների ձևավորումը,
- երեխաների անհատական զարգացման կողմնորոշումը,
- առաջատար գործունեության ձևերի զարգացումը՝ հաշվի առնելով երեխաների հետաքրքրությունները և հնարավորությունները, ծնողների պահանջարկը:

Ցանկալի է, որ վաղ տարիքի խմբերն ունենան առանձին մուտք և հանդերձարան: Սեղան-աթոռները պետք է համապատասխանեն երեխաների հասակին: Հարկավոր է ունենալ պահարաններ՝ խաղալիքների ու պիտույքների, և աթոռներ՝ ծնողների համար նույնպես: Խիստ կարևոր է խաղալիքների ճիշտ ընտրությունը: Խաղալիքների քանակը պետք է նա-

խատեսվի երեխաների ցուցակային թվին համապատասխան, յուրաքանչ-յուր տեսակից՝ 2-3-ից ոչ քիչ: Ըստ դիդակտիկ պարագաների և նյութերի տիպային անվանացանկի՝ վաղ տարիքի խմբերում պետք է ունենալ փոքրիկ բազմոցներ, սեղանարգելափակոց, փափուկ երկրաչափական մոդելներ, փչովի գնդակ, ջրային խաղերի դիդակտիկ հավաքածու, ձկներ, որսի ցանցիկ, խճանկար, լեզոներ, կոճկվող և կապվող մասերով խաղալիքներ, տիկնիկներ՝ անհրաժեշտ իրերով, սյուժետային, երաժշտական, թատերական, մարզական և այլ խաղալիքներ:

Վաղ տարիքի երեխաների ընդունելությունը կազմակերպելիս հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել յուրաքանչյուր երեխայի հետ անձնական շփմանը: Այս տարիքում հաղորդակցման առաջատար ձևը համագործակցությունն է և գործարար շփումը:

Շատ օգտակար է երեխաների բացօթյա ընդունելությունը: Այն նպաստում է հարմարման գործընթացի ավելի հարթ ու սահուն ընթացքին, խմբում երեխաների սոցիալականացմանը, առողջության պահպանմանը: Երեխաների ընդունելությունը խմբում կազմակերպելու դեպքում առավել կարևորվում է խոսքի, շարժումների, զգայական զարգացման ուղղությամբ անհատական կամ 2-3 երեխայի հետ աշխատանքը:

Վաղ տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության խնդիրներն ու մեթոդները

Երեխան ծնվում է անօգնական, սակայն բնածին ոչ պայմանական ռեֆլեքսներով: Բնականաբար, այս շրջանում, ավելի քան երբևէ, կարևորվում է երեխային շրջապատող և նրանով հետաքրքրված մեծահասակների աջակցությունը: Մեծերը պետք է սիրեն և լավ ճանաչեն երեխաներին, հասկանան նրանց կարիքների ու հետաքրքրությունների շրջանակը և փորձեն ընդառաջ գնալ նրանց պահանջներին: Նման մոտեցումներով առաջնորդելու միտում ունի նաև սույն ծրագիրը: Այն կոչված է լուծելու երեխաների տարիքային և անհատական առանձնահատկություններին համապատասխան կրթական և առողջապահական որոշակի խնդիրներ՝ մանկավարժների և ծնողների միասնական ու համակարգված աշխատանքով: Վաղ տարիքում երեխայի առողջության պահպանման և ֆիզիկական լիարժեք զարգացման միջոցներն են՝

- սնունդ,
- հիգիենիկ պայմաններ,
- բնական գործոնների (օդ, ջուր, արև) ճիշտ օգտագործում,
- ռեժիմի սահմանում,
- առօրյա շարժողական ռեժիմի(խաղ, խաղ-պարապմունք, մարմնամարզություն) իրականացում:

Նշված միջոցների ճիշտ կազմակերպումը՝ քնի, կերակրման, և արթուն վիճակի հերթագայումը, ֆիզիկական դաստիարակության անհրաժեշտ պայման ու նախադրյալ է:

Լիարժեք քունը, ակտիվ արթնությունը ի ծնե տրված չեն երեխաներին: Դրանք ձևավորվում են աստիճանաբար՝ սկսած կյանքի առաջին ամիսներից: Անգամ մինչև մեկ տարեկանը երեխան սովորում է խոր քնել և լինել ակտիվ արթնության մեջ:

Ակտիվ արթուն վիճակը շարժումների զարգացման, խոսքի ընկալման և շրջապատի հետ ծանոթացման հիմք է դառնում:

Ֆիզիկական դաստիարակության էական մաս է կազմում սկզբնական կուլտուր-հիգիենիկ ունակությունների(ուտելուց հետո պարտադիր կերպով ձեռքերը լվանալ, անհատական սրբիչից օգտվել և այլն) ձևավորումը, որը նպաստում է առողջության պահպանմանը և հիվանդությունների կանխարգելմանը:

Ռեժիմային պահերի անցկացման ժամանակ լուծվում են դաստիարակության հետևյալ խնդիրները՝

- ռեժիմային պահերի հանդեպ ձևավորել դրական վերաբերմունք, չխախտել ռեժիմը, պահպանել երեխաներին ներկայացվող պահանջների մշտական պայմանները և միասնականությունը,
- պահպանել խմբում աշխատող մեծահասակի կողմից միջոցների մշտական պայմանները և միասնականությունը:

Օրվա մոտավոր կարգացուցակ (ռեժիմ)

Երեխայի վարքը կազմակերպվում է կենսաբանական երկու հիմնական՝ քնի և արթնության վիճակներով, որոնց համար պետք է ստեղծել հարմարավետ պայմաններ՝ առանց աղմուկի և այլ ուժեղ գրգռիչների: Երեխաների ակտիվ արթնության պահպանման համար, առաջին ամիսներից սկսած, անհրաժեշտ է բազմազան խաղալիքների առկայություն, շարժումների ազատություն, զանազան տպավորություններ և մեծերի հետ շփում:

Ակտիվ արթուն վիճակը կարող է տևել որոշակի ժամանակ, որին անպայման պետք է հաջորդի հանգիստ քունը: Հակառակ դեպքում առաջանում է հոգնածություն, իսկ չափից ավելի արթնության դեպքում՝ նյարդային վիճակ:

Վաղ տարիքի առաջին խմբի երեխայի քնի, կերակրման և արթնության տևողության հաճախականության մեջ կատարվում է փոփոխություն (տե՛ս աղյուսակ 1):

Քունը և կերակրումը կարգավորելու դեպքում ուտելու և քնելու պահանջ առաջանում է որոշակի ժամերի, իսկ դրանցից հետո սկսվում է հանգիստ արթուն շրջանը: Ցերեկային քնի կանոնավոր ռիթմի մշակումը հեշտ է, եթե ամեն օր նույն ժամին երեխան գտնվի թարմ օդում: Ցանկալի է, որ քունը նույնպես կազմակերպվի դրսում՝ հատկապես մեկուկես տարեկանից հետո՝ տարվա բոլոր եղանակներին:

Եթե ռեժիմով առաջնորդվելն ուշանում է, երեխան արագ ընտելանում է անկազմակերպ կյանքին:

Երեխայի դրական հուզական գործուն վիճակի ապահովումը պայմանավորված է լիարժեք քնով, կերակրման և արթնության ճիշտ կազմակերպումով:

Կյանքի առաջին տարում, նկատի ունենալով երեխաների բուռն զարգացումը և անհատական առանձնահատկությունները, ֆիզիկական զարգացումն ու առողջական վիճակը, քնի, կերակրման և արթնության հերթագայումը, ըստ իրավիճակի, փոփոխությունների են ենթարկվում, և հատկապես վաղ տարիքում կիրառվում է սահող ռեժիմը: Տարիքի աճին

համընթաց փոփոխվում են ցերեկային քնի քանակը և տևողությունը, սակայն գիշերային քնի տևողությունը մնում է անփոփոխ (10-11 ժամ), օրվա մեջ բաց օդում խորհուրդ է տրվում լինել 4-6 ժամ: Արագ և խոր քնի համար պետք է ստեղծել պայմաններ. օդափոխված ննջասենյակ, անաղմուկ, խաղաղ մթնոլորտ:

Երեխային պետք է կերակրել առանց շտապելու և ստիպելու, ութ ամսականից՝ բարձր սեղանների մոտ, 9-10 ամսականից՝ հատուկ սեղանի մոտ և աթոռակին:

Երեխային տարիքային հաջորդ ռեժիմին պետք է փոխադրել ոչ միայն տարիքի բերումով, այլև այն ժամանակ, երբ նա դանդաղ է քնում, կամ հրաժարվում է ցերեկային քնից, շուտ է արթնանում, պահպանում ակտիվություն քնի համար հատկացված ժամին, անհանգստություն ցուցաբերում ուտելիս և ուտելուց առաջ:

Արթնության հարմար պահերին կազմակերպվում են զվարճանքներ, խաղ-պարապմունքներ, ինքնուրույն գործունեություն: Ստեղծվում են ամենօրյա շարժողական ռեժիմի համար պայմաններ, տարածք, խմբասենյակի տարբեր մասերում՝ առարկայական զարգացնող փոփոխվող միջավայր, իսկ շփման համար՝ ջերմ մթնոլորտ:

Ծրագրում տրված է (տե՛ս էջ 50) քնի, կերակրման և արթնության պահերի տևողությունը, որի հիման վրա ցանկացած նախադպրոցական հաստատություն և ընտանիք կարող են կազմել օրվա կարգացուցակ՝ յուրաքանչյուր տարիքային խմբի կամ երեխայի համար:

Եթե կարգացուցակը ճիշտ է կազմված և կիրառվում է հետևողականորեն ու խնամքով, ապա երեխան արթնության ողջ շրջանում կլինի գործունե(ակտիվ), հավասարակշռված վիճակում, կքնի համեմատաբար խոր և հանգիստ, կարթնանա առույգ, կունենա լավ ախորժակ: Օրվա կարգացուցակի ճիշտ կազմակերպումը շատ կարևոր է մանկապարտեզում, քանի որ այնտեղ ընդգրկվում են տարբեր տարիքի, առողջական վիճակի և նյարդային համակարգ ունեցող բազմաթիվ երեխաներ:

Ռեժիմը նպաստում է երեխաների կազմակերպված վարքի դաստիարակմանը: Եթե միշտ միևնույն ժամին երեխան ուտում է, քնում, զբոս-

նում, ապա այդ պահանջներն առաջանում են ճիշտ նույն ժամին: Այսինքն՝ երեխայի մեջ ձևավորվում է պայմանական ռեֆլեքս և նա, առանց հակադրվելու, մեծի առաջարկով անցնում է այդ գործողությունների կատարմանը:

Կարևոր է նաև հանգստի և գործունեության տարբեր ձևերի ճիշտ հերթագայումը, որի դեպքում երեխայի ակտիվ արթնության և նյարդային համակարգի զարգացման համար ստեղծվում են բարենպաստ պայմաններ:

Կյանքի առաջին տարիների ընթացքում օրվա ռեժիմը բազմիցս փոխվում է՝ կախված եղանակից և ըստ երեխաների զարգացման ընթացքի (օրինակ՝ երկարեցնել արթնության ժամանակահատվածը, հանել ցերեկային քունը կամ տեղափոխել): Տեղափոխումից հետո ռեժիմին ընտելացումը կատարվում է աստիճանաբար: Երեխային ցերեկային երկու քնով ռեժիմի պետք է փոխադրել 9-10 ամսականից ոչ շուտ, քանի որ այդ ժամանակ արթնության ժամանակահատվածի տևողությունը հասնում է մինչև 3-3,5 ժամի:

Հիվանդ, դյուրագրգիռ և թույլ երեխաներն ունեն անհատական ռեժիմի կարիք: Եթե նույն խմբում ընդգրկված են տարբեր տարիքի երեխաներ, ապա նրանք կարիք ունեն արթնության և քնի տարբեր ռեժիմների. ուստի անհրաժեշտ է սահմանել երկու կամ երեք տարբեր ռեժիմների և երեխաներին կազմալրել որոշակի տարիքային ենթախմբերով: Դաստիարակը պետք է օգնի ծնողներին՝ կազմելու տնային ռեժիմ՝ սկսած առավոտյան արթնությունից, ավարտած գիշերային քնով՝ շեշտադրելով առավոտյան «վերկացը», հիգիենիկ արարողությունները, երեկոյան զբոսանքը, լողը և գիշերային քունը: Եթե երեխան վատ քնելու պատճառով տնից եկել է վատ տրամադրությամբ, թույլ, ապա նրան կարելի է պառկեցնել առաջինը և արթնացնել վերջինը: Տարիքի աճին զուգընթաց, երբ երեխայի արթնության ժամանակն ավելանում է, և վարքը դառնում ավելի բարդ ու բազմազան, անհրաժեշտ է ռեժիմում ավելացնել գործունեության տեսակների ճիշտ հերթագայումը. ինքնուրույն խաղ, դաստիարակի կողմից կազմակերպվող խաղ-պարապմունք(անցկացնել՝ խմբասենյակում՝ զբո-

սանքից, շարժուն խաղից հետո), սեղանային խաղ, պատմություն լսելուց կամ նկար դիտելուց հետո՝ շարժուն խաղ:

Երեխայի նկատմամբ այս կամ այն մոտեցման դրական արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նրա անհատական առանձնահատկությունները: Նախ պետք է տարբերել երեխաների նյարդային համակարգի աշխատունակությունը: Դիտումները ցույց են տվել, որ որոշ երեխաներ շուտ են հոգնում, քան թե նույն տարիքի մյուս երեխաները: Դրա հետ կապված՝ երեխաների ռեժիմը պետք է որոշ չափով տարբեր լինի: Գերհոգնածության դեպքում ցերեկային քնի մեկ անգամվա փոխարեն պետք է անցնել երկու անգամյա քնի, կամ՝ պահպանելով ռեժիմը, նրան պառկեցնել մյուսներից ավելի շուտ: Տարբեր է երեխաների զարգացման ընթացքը, պայմանական ռեֆլեքսների, կարողությունների և հմտությունների ձևավորման արագությունը: Տարբեր կերպ են պահում իրենց երեխաները նաև կերակրման ժամանակ: Ոմանք ուտում են արագ, կենտրոնացած, ոչինչ չնկատելով իրենց շուրջը, մյուսները՝ դանդաղ, որոշ երեխաներ էլ շեղվելով արտաքին գրգռից, ուտում են լավ, արագ՝ միաժամանակ հասցնելով նկատել և վերաբերմունք դրսևորել շրջապատի հանդեպ: Տարբեր է նաև քնի արագությունն ու բնույթը տարբեր երեխաների մոտ: Որոշ երեխաներ պառկեցնելուց հետո քնում են հանգիստ, ինչը բնութագրում է նրանց նյարդային համակարգի արագ անցումը գործունյա վիճակի արգելակմանը: Մյուսները քնում են հանգիստ, բայց դանդաղ քնով: Նրանց մոտ աշխույժ վիճակից քնին անցնելն ընթանում է աստիճանաբար: Տարբեր է նաև արթնանալու արագությունը: Կան երեխաներ, որոնք արթնանալով, անմիջապես բացում են աչքերը, առույգ են, պատրաստ գործունեության: Ուրիշների մոտ արթնացման ընթացքը դանդաղ է: Մինչև վերջնական արթնացումը, նրանք մերթ բացելով, մերթ փակելով աչքերը, դժգոհում են մահճակալում, անմիջապես չեն առույգանում և ակտիվանում են որոշ ժամանակ անց: Այս ամենից ելնելով՝ անհրաժեշտ է կիրառել դաստիարակության տարբեր մեթոդներ: Օրինակ՝ հանգիստ, բայց դանդաղ քնող երեխաներին պետք է պառկեցնել առաջինը, իսկ նրանց, ովքեր արթնանում են անմիջապես, չի կարելի

թողնել մահճակալում: Այն երեխաներին, ովքեր արթնանալուց հետո թույլ են, չպետք է շտապել հագցնել, այլ ինչ-որ բանով հետաքրքրել՝ նպաստելով առույգ վիճակի ստեղծմանը: Անհատական առանձնահատկություններ ի հայտ են գալիս նաև խաղերում և պարապմունքներում: Կան երեխաներ, որոնք հանձնարարություն ստանալուց անմիջապես հետո թողնում են իրենց զբաղմունքը և կատարում այն: Մյուսները չեն կարողանում մի գործունեությունից արագ անցնել մյուսին: Նման երեխաներից չի կարելի պահանջել հանձնարարության անմիջական կատարում:

Տարբեր երեխաների մոտ տարբեր կերպ են արտահայտվում քաղցի զգացումը, հիվանդության սկիզբը: Անհրաժեշտ է ուշադրությամբ հետևել երեխաների վարքագծին, իմանալ յուրաքանչյուրի անհատական առանձնահատկությունները և ըստ այդմ էլ կիրառել դաստիարակության տարբեր մեթոդներ:

Օրվա ռեժիմը ժամանակին և ճիշտ կատարելու համար անհրաժեշտ է՝

- ապահովել երեխաների արթնության և քնի կազմակերպման համար անհրաժեշտ պայմաններ,

- պահպանել խմբում աշխատող անձնակազմի պարտականությունների հստակ բաշխումը և իրազեկել նրանց՝ իրենց աշխատանքային գործառույթների մասին,

- կարգավորել կերակրման ընթացքը՝ ուղեկցելով այն կերակրման պահին առնչվող (օրինակ՝ սպասքից օգտվելու, ճիշտ ուտելու, սննդի և այլնի մասին) երկխոսությամբ կամ փոքրիկ զրույցով:

Յուրաքանչյուր երեխայի տարիքին, զարգացմանը, ինչպես նաև անհատական առանձնահատկություններին համապատասխան պետք է՝

- ապահովել օրվա ընթացքում անհրաժեշտ քնի, արթնության, կերակրման քանակը,

- սահմանել արթնության ընթացքի տևողությունը, որը չպետք է գերազանցի նյարդային համակարգի աշխատունակության սահմանը, ինչ-

պես նաև ցերեկային քնի քանակը և տևողությունը. միայն նման պայմաններում հնարավոր կլինի վերականգնել երեխայի ակտիվ, գործունյա վիճակը,

- ապահովել միջավայր՝ նյարդային համակարգի գործունեության և հանգստի առավել ռացիոնալ ռիթմի համար՝ համապատասխանեցնելով կերակրման ռեժիմին,

- քնի, կերակրման և արթնության միջև սահմանել ճիշտ հաջորդականություն:

Վաղ տարիքի երեխաների մտավոր դաստիարակության խնդիրներն ու մեթոդները

Շրջապատող իրականության ճանաչումը սկսվում է զգայական ընկալումներից, այսինքն՝ երեխան զգայարանների միջոցով տեսնում, լսում, շոշափում է, զգում հպումը, ցավը, համն ու հոտը: Այդ ամենի շնորհիվ և կուտակվող փորձի հիման վրա ընկալվում է առարկան՝ իր ամբողջական պատկերով: Զգայությունների դաստիարակման հիմնական միջոցը առարկայական (առարկաներով, խաղալիքներով և կառուցողական նյութերով), երաժշտական, նկարչական, խաղային գործունեության ճիշտ կազմակերպումն է:

Վաղ տարիքի երեխան պետք է կարողանա ունկնդրել, շոշափել, ճանաչել, տարբերել առարկաները:

Զգայական լիարժեք զարգացումը առաջին երեք տարիների հիմնական խնդիրներից է: Այն մտավոր դաստիարակության հիմքն է, որը ձևավորվում և զարգանում է կյանքի առաջին տարվա վերջին:

Վաղ տարիքում երեխայի մտածողությունը կրում է տեսողադիտողական և տեսողագործնական բնույթ և կապվում է խոսքի հետ: Լսելու և կոնկրետ հանձնարարություն կատարելու կարողությունը կարելի է զարգացնել դաստիարակչական ճիշտ մեթոդներով՝ դաստիարակի կողմից հուշած որոշակի կանոնների, կրկնողությունների, երեխայի հիշելու ունակության զարգացման վրա հիմնված միջոցներով: Երեխայի մեջ պատկերացումների ձևավորումը և շրջապատում կողմնորոշումը մտավոր զարգացման հաջորդ խնդիրն է: Պետք է նշել, որ վաղ տարիքում առավել մեծ նշանակություն ունի ոչ այնքան պատկերացումների (գիտելիքների) շրջանակը, որքան զգայական և մտավոր զարգացման աստիճանը: Ինքնուրույն գործունեության մեջ գիտելիքների օգտագործման կարողությունը դառնում է մտավոր զարգացման գլխավոր ցուցանիշներից մեկը: Դրա համար նպատակահարմար է երեխաներին (ոչ միայն վաղ տարիքի), որքան հնարավոր է շատ ու բազմազան գիտելիքներ տալուց զատ, սովորեցնել գործնականում օգտվել դրանցից:

Հոգեկան գործընթացների ձևավորումը

Երեխաների կարողությունների զարգացումը, գիտելիքների ձեռքբերումը, շրջապատում կողմնորոշումը տեղի են ունենում ինքնուրույն գործունեության և խաղ-պարապմունքների ընթացքում: Այս գործընթացում խիստ կարևորվում է ուշադրության զարգացումը՝ որպես մտածողության զարգացման նախապայման: Ուշադրության կենտրոնացումը կարճատև է. սկսում է զարգանալ սկսած կյանքի առաջին ամսից և արագ կատարելագործվում է՝ տարվա վերջում հասնելով է 7-10 րոպեի: Կամային ուշադրության զարգացումը կախված է պայմաններից և մեծերի կողմից նպատակասլաց աջակցությունից: Դաստիարակը պետք է հետաքրքրություն մտցնի երեխայի գործողության կատարման մեջ, երկարաձգի ուշադրությունը, որպեսզի երեխան ցանկանա դիտել, զննել առարկան: Եթե երեխան հետաքրքրությամբ դիտում է, պետք չէ կողմնակի խոսակցություններով խանգարել նրան:

Դեռևս կյանքի առաջին ամիսներից անհրաժեշտ է զարգացնել հիշողությունը: Հիշողության զարգացումը նույնպես տեղի է ունենում գործունեության ընթացքում: Երեխան վաղ է ճանաչում ծնողներին, վերհիշում է ծանոթ առարկաները, նախկինում տեսածը վերարտադրում իր խաղերում: Առարկաների հետ կատարվող տարբեր գործողություններն օգնում են շրջապատի հետ կայուն կապերի ստեղծմանը: Դա էլ հենց նպաստում է մտապահմանը: Երեխայի հիշողությունը պետք է զարգացնել վարժությունների միջոցով: Սկզբում պետք է առաջացնել ոչ վաղ դեպքի վերհուշ, որից հետո հիշեցնել ավելի վաղ դեպք: Պետք է ձգտել, որ երեխան կապ ստեղծի անմիջական դեպքի և անցյալի փորձի միջև (օրինակ՝ ամանորյա հանդեսի նկար դիտելիս հիշել հանդեսի ժամանակ կատարվածը):

Երեխաների մտավոր դաստիարակության, ուսուցման և հետագա գործունեության համար մեծ նշանակություն ունեն ուշադրությունն ու հիշողությունը: Կարևոր են ինչպես առաջին (զգայական), այնպես էլ երկրորդ (խոսք) ազդարարային համակարգի ժամանակին ձևավորումն ու զարգացումը:

Ինչպես զգայական ընկալումը, այնպես էլ խոսքի ժամանակին և ճիշտ զարգացումը համարվում են մտավոր դաստիարակության հիմքը: Խոսքը մարդկանց հետ շփման հիմնական միջոցն է, որով սահմանվում են զանազան փոխհարաբերություններ: Առանց խոսքի համապատասխան աստիճանի զարգացման հնարավոր չէ երեխաների մեջ դաստիարակել դրական փոխհարաբերություններ: Օրինակ՝ որպեսզի երեխան ժլատ չդառնա, պետք է սովորեցնել խաղալիքը զիջել ընկերոջը: Երեխաներին համատեղ համերաշխ խաղալ սովորեցնել հնարավոր է միայն այն դեպքում, երբ նրանք ավելի լավ են հասկանում ուրիշին, և ակտիվ է նրանց խոսքը: Խոսքի ազդեցության տակ առաջին հերթին փոխվում են երեխայի ընկալումները:

Զգացմունքների զարգացում

Վաղ տարիքում կարևոր դեր են խաղում հույզերը: Դրա համար երեխային ներկայացվող պահանջները պետք է դարձնել գրավիչ: Օրինակ՝ եթե երեխան համառորեն չի ցանկանում գնալ քնելու, կարելի է ասել. «Տեսնենք՝ ինչպես ես հանվում» կամ «Ես գիտեմ, որ դու կարող ես արագ հանվել» կամ «Հագի՛ր նոր գիշերանոցդ, տեսնենք՝ հարմա՞ր է» կամ «Կարծում եմ գիշերանոցդ քեզ շատ կսազի»: Նա անպայման կշտապի ցուցադրել իր կարողություններն ու շոյված կզգա ջերմ խոսքերից, և դրաից հետո հանգիստ կպառնի քնելու:

Երեխայի վարքում կարող են դրսևորվել մի շարք բարդ, դրական հույզեր. ուրախություն, հետաքրքրասիրություն, սեր և կապվածություն, ինչպես նաև բացասական հույզեր՝ վախ, զայրույթ, վիրավորանք, խանդ, նախանձ, շփոթմունք և այլն: Հոգեբանական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրական զգացմունքները բարձրացնում են օրգանիզմի կենսունակությունը, ակտիվացնում հոգեկան գործընթացները, իսկ բացասականները՝ ընկճում երեխային:

Դաստիարակը կամ ծնողը պետք է հարստացնի երեխաների հուզական կյանքը՝ ձգտելով նրանց մեջ առաջացնել դրական հույզեր, կանխել բացասական հույզերի առաջացումը:

Խաղեր և պարապմունքներ

Երեխաների մտավոր զարգացման համար մեծ նշանակություն ունեն խաղերը և պարապմունքները և գործունեության այն տեսակները (խոսքային, գործնական, կերպարվեստային, կառուցողական և դիտումներ), որոնք համարվում են աշխարհը ճանաչելու և վերափոխելու ուղիներ:

Երեխան վաղ է սկսում առարկաների, խաղալիքների հետ կատարել գործողություններ: Նա շոշափում է դրանք, թափահարում, թխկթխկացնում: Սկզբում նա բոլոր առարկաների հետ վարվում է միանման: Աստիճանաբար գործողությունները բարդանում են: Երեխան սկսում է առարկաներն օգտագործել ըստ նրանց ֆիզիկական հատկությունների (գնդակը գլորում է, չխկչխկանը՝ թափահարում, տուփը՝ բացում-փակում): 9-10 ամսական երեխան ընդօրինակում է մեծերին, վերարտադրում նրանց ցուցադրած գործողությունները: Օրինակ՝ նա հագցնում, կերակրում է տիկնիկին, օղակը հագցնում աշտարակի վրա, տուփը դնում տուփի մեջ և այլն: Այնուհետև նույն գործողությունը տեղափոխում է այլ համանման առարկաների վրա, օրինակ՝ կերակրում է ոչ միայն տիկնիկին, այլև շանը, կատվին: Ավելի ուշ իրենց վարքում երեխաները դրսևորում են շրջապատում տեսածը: Մեկուկես տարեկանից սկսած երեխան անցնում է որոշակի հաջորդականությամբ միմյանց հետ կապ ունեցող գործողությունների արտացոլման: Առարկաների հետ գործողությունները վերածվում են սյուժետային խաղերի, ինչը ավելի բարդանում է 2-3 տարեկանում: Խաղում կարողանում է արտացոլել մեկ անգամ ստացած տպավորություններ:

Խաղ-պարապմունքները կարող են լինել անհատական, փոքր ու մեծ ենթախմբերով և ընդհանուր՝ ողջ խմբի հետ (բեմականացումներ, երաժշտություն, ֆիզկուլտուրա, որպեսզի ստեղծվի համընդհանուր ուրախության մթնոլորտ):

Եթե երկու տարեկան երեխան իր խաղում չի արտացոլում շրջապատից ստացած տպավորությունները, այլ կատարում է միայն պարզունակ գործողություններ, ապա դա խոսում է մտավոր կարողությունների ուշ զարգացման մասին:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խաղը զարգանում է՝

- մեծահասակների անմիջական ազդեցությամբ,
- ուսուցման և դաստիարակության միջոցով,
- շրջապատից ստացած տպավորությունների հիման վրա,
- առարկաների, խաղալիքների միջոցով:

Այս բոլոր ազդակները փոխվում են տարիքային տարբեր շրջափուլերում: Վաղ տարիքում ավելի կարևորվում է մեծերի կողմից անմիջական ղեկավարումը, այսինքն՝ ուսուցումը՝ առանց ճնշելու երեխայի հետաքրքրությունները: Գիշտ ղեկավարումը նպաստում է խաղի որակապես նոր փուլին անցմանը:

Ծրագրով առաջադրված խնդիրների շրջանակում դաստիարակը կազմակերպում է պարապմունքներ և խաղեր, որոնց միջոցով կայունանում է երեխաների ուշադրությունը, զարգանում են հիշողությունը և մտածողությունը: Պարապմունքի էական նշանակությունն այն է, որ այդ ուղիով զարգանում են երեխայի՝ պարապելու, առաջադրանքը հասկանալու, հիշելու և դաստիարակի ցուցումով գործելու կարողությունները: Պարապմունքների ժամանակ համատեղ գործունեությունը երեխաների մեջ ձևավորում է դրական փոխհարաբերությունների, միասնական աշխատանքից ստացած տպավորությունը կիսելու ցանկություն:

Դաստիարակի կողմից հատուկ նպատակով կազմակերպված խաղերը և պարապմունքներն ինքնուրույն խաղի զարգացման և բարդացման արդյունավետ միջոցներ են: Պետք է հիշել՝

- պարապմունքի անցկացումը պարտադիր է,
- անցկացվում է ամեն օր, արթնության հարմար ժամանակահատվածում,
- մասնակցում են բոլոր երեխաները,
- նախապես պլանավորվում է,
- նախապատրաստում է անհրաժեշտ նյութերը,
- դաստիարակը լավ է պատկերացնում յուրաքանչյուր պարապմունքի նպատակը և խնդիրները, անցկացման մեթոդիկան,

- կիրառում է ԳՈՒՍ (գիտեն, ուզում եմ, սովորեցի) համակարգ. ի՞նչ գիտեն երեխաները, ի՞նչ կարող է հետաքրքրել նրանց, և ինչպե՞ս կյուրացնեն,

- բովանդակության ու բնույթի ընտրությունը որոշվում է գործող ծրագրային նպատակներով, խնդիրներով և երեխաների զարգացման աստիճանով,

- ԽԻԿ (խթանում, իմաստի ընկալում, կշռադատում) համակարգի օգնությամբ պարապմունքի սկզբում հարցերով, համառոտ ակնարկով (կամ այլ կերպ) դաստիարակը երեխաներին մղում է դեպի պարապմունքի բովանդակությունը, զանազան հնարներով մատուցում բուն նյութը, նպաստում իմաստի ընկալմանը, ավարտի ժամանակ անդրադարձ է կատարում պարապմունքի ընթացքին, բովանդակությանը, իմաստի էական կողմերին և ամփոփում,

- պարապմունքներ կազմակերպվում են նաև տանը՝ որպես զբաղմունք և զվարճանք:

Պարապմունքների պլանավորում

Պարապմունքները պլանավորելիս անհրաժեշտ է առաջնորդվել որոշակի կանոններով: Պարապմունքների ընթացքում երեխաներին հիմնականում տրվում է այնպիսի նյութ, որի յուրացումն ապահովվում է դաստիարակի կողմից՝ ուսուցման ներգործությամբ: Փոքրիկներն առանց մեծահասակի օգնության չեն կարողանում տիրապետել գործունեության որոշ ձևերին, հմտություններին, ունակություններին, կամ եթե ինչ-որ բան յուրացնում են ինքնուրույն, ապա մեծ դժվարությամբ: Դաստիարակը երեխաների գիտելիքների յուրացման, կարողությունների ձեռքբերման հետ մեկտեղ զարգացնում է նաև նրանց ակտիվությունն ու ինքնուրույնությունը: Պարապմունքի պլանը կազմելիս անհրաժեշտ է պահպանել դիդակտիկայի սկզբունքները՝ աստիճանականությունը և հաջորդականությունը: Այս տարիքում կարևոր է ծրագրային նյութի կրկնությունը, որը նպաստում է գիտելիքների ու կարողությունների հստակ յուրացմանը և դաստիարակին հնարավորություն է տալիս երեխաներին ավելի պարզ գիտելիքների ու կարողությունների տիրապետումից աստիճանաբար հասցնել ավելի բարդ գիտելիքների, կարողությունների տիրապետմանը: Մեկ տարեկանից մինչև մեկ տարեկան վեց ամսական երեխաների համար պահանջվում է միևնույն բովանդակությամբ պարապմունքների հաճախակի կրկնություններ: Այս տարիքի երեխաների համար պահանջվում է հստակ ժամանակամիջոց որևէ կարողություն յուրացնելու համար: Միևնույն բովանդակությամբ պարապմունքների միջև եղած ժամանակահատվածը պետք է լինի ոչ այնքան մեծ: Շաբաթվա ընթացքում միևնույն պարապմունքը կարելի է անցկացնել 3-4 անգամ: Մեկ և կես տարեկան երեխաների համար պահանջվում է պարապմունքների ավելի քիչ թվով կրկնություններ: Յուրաքանչյուր պարապմունքի կրկնության ընթացքում անհրաժեշտ է աստիճանաբար բարդացել դրա բովանդակությունը, առաջադրել նոր պահանջներ: Միևնույն պարապմունքն առանց փոփոխության չի կարելի բազմաթիվ անգամ կրկնել, քանի որ պարապմունքի հանդեպ կնվազեն երեխաների հետաքրքրությունը և հուզական

վերաբերմունքը: Խոսքի զարգացումն իրականացվում է խաղալիքների, նկարների, գեղարվեստական ստեղծագործությունների, շրջապատի ծանոթացման պարապմունքների միջոցով: Երեխաները, տարբեր միջոցներով (դիդակտիկ խաղալիքներ, կառուցողական նյութեր) տիրապետելով գործողություն կատարելու հմտություններին, սովորում են տարբերել առարկաների ձևը, մեծությունը և գույնը:

Խոսքի զարգացում և կողմնորոշում շրջապատում

Նախախոսքային շրջան

Կյանքի առաջին տարում երեխան(նախախոսքային շրջանում) ընկալում է առարկայի արտաքին հատկանիշները(առարկայի գույն, մեծություն, ձև), այսինքն՝ նրա մեջ իշխում է ընկալումների զգայական կողմը: Երեխան, որը սկսել է հասկանալ բառերը և խոսել, ընկալում է առարկան կամ գործողությունը ոչ միայն արտաքին հատկանիշներով, այլև ամբողջությամբ (ընդհանրացված է հասկանում նրա իմաստն ու նշանակությունը): դա իր հերթին նպաստում է առարկաների ընկալմանը, ճանաչմանն ու տարբերակմանը: Նախապես պետք է ընտրել ուսուցանվող բառերը: Ընտանիքում այդպես չի արվում: Մայրը խոսում, ներկայացնում է այն առարկան, որն այդ պահին աչքի առաջ է: Մանկապարտեզում դա արվում է ծրագրավորված: Ծրագրով նախատեսվածն այն նվազագույնն է, որը պետք է հասցնել երեխային:

Նպատակահարմար չէ միևնույն բառերը երկար ժամանակ, անընդմեջ հրամցնել երեխաներին. պետք է աստիճանաբար ավելացնել դրանց քանակը՝ չմոռանալով նախկինում սովորածը:

Երեխայի զգայական և մտավոր զարգացման առարկայական պատկերավոր հզոր միջոց է պարբերաբար փոփոխվող և զարգացնող առարկայական միջավայրը: Այն պետք է համապատասխանի սանիտարահիգիենիկ պահանջներին և չափորոշիչներին: Խմբասենյակի կահավորումն ու ձևավորումը կարող են լինել (ցանկալի է տան նման) տարատեսակ՝ կախված հաստատության հնարավորություններից և պայմաններից: Խաղային տարածքը պետք է համապատասխանի երեխաների սոցիալական զարգացման կարիքներին և ապահովի ամենօրյա շարժողական ռեժիմը: Հատակը պետք է գորգապատ լինի, սողացող երեխաների համար հարմար է ունենալ կարպետ: Ցանկալի է ունենալ գունավոր գնդիկներով լցված «չոր լողավազան»:

Անհրաժեշտ է միջավայր նախատեսել նաև ծնողների համար՝ հատուկ բովանդակությամբ վահանակներ, բուկլետներ, մեթոդական գրականության համառոտ ծանոթագրություններ և հանգստի անկյուն:

Խոսքի ազդեցության տակ էականորեն փոխվում է երեխայի գործունեությունը: Երեխաները խաղում են տեսողական, լսողական կամ այլ գրգռիչների ազդեցությամբ: Տեսնելով տիկնիկը, երեխան վերցնում է այն և նախկին փորձի հիման վրա սկսում օրորել: Մինչև գործելը երեխան պլանավորում է իր խաղը. բոլորովին պարտադիր չէ, որ նա բարձրաձայն ասի իր գործողությունների պլանի մասին: Սակայն կարևորն այն է, որ երեխան օգտվում է խոսքի ազդեցությամբ ձևավորված որակապես նոր հասկացություններից:

Հետագայում դերերով խաղին անցնելը հնարավոր է միայն խոսքի մասնակցությամբ: Այն մատչելի չէ խոսքի բացակայության կամ վատ զարգացած լինելու դեպքերում:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել խոսքի բոլոր կողմերի զարգացմանը. աստիճանաբար մշակել՝ շրջապատի խոսքը հասկանալու, քերականական ճիշտ կառուցվածքի տարրերն օգտագործելու, խոսքի արտահայտչականությունն ու առոգանությունը պահպանելու և շրջապատի հետ շփման մեջ մտնելիս խոսքը որպես ճանաչողական միջոց օգտագործելու կարողություններ:

Այս տարիքում երեխաների խոսքի զարգացման արագությունը (տեմպը) մեծ է: Այն պայմանավորված է նաև դաստիարակության մեթոդներով և մեծերի անմիջական ներգործությամբ: Ձանազան տպավորություններ ստանալով և գործելով (գործողության ուղեկցում՝ բառային բացատրություններով, գործողության, առարկայի և բառի միջև ստեղծվող անմիջական կապերի հաստատում) երեխաները հարստացնում են իրենց զգայական փորձը:

Եթե երեխան, իր տարեկիցներից ավելի շուտ է խոսում կամ քայլում, դա երաշխիք չէ, որ նա մի քանի տարի անց շարունակի ավելի լավ խոսել ու շարժվել, քանի որ նրանք տարբեր կերպ են զարգանում և հասունանում:

Չնչարտաբերում

Ճիշտ հնչարտաբերումը պայմանավորված է երեխայի խոսքային լսողության զարգացման, խոսքաշարժողական կենտրոնի և խոսքաշարժողական օրգանների ֆունկցիոնալ ճիշտ գործունեությամբ:

Երեխան խոսքային լսողությամբ ընկալում է բառը, ապա խոսքաշարժողական ապարատի և շնչառության օրգանների համատեղ գործունեությամբ տրվում է պատասխան խոսքը:

Խոսքի հնչյունային կողմի զարգացումը հիմնականում տեղի է ունենում մինչև վեց տարեկանը: Մինչնախադպրոցական (վաղ) տարիքի երեխաներն արդեն տիրապետում են շատ հնչյունների և ունենում հաջող հնչարտաբերման նախադրյալներ: Դրանցից մեկն այն է, որ այս տարիքի երեխան, շնորհիվ զարգացած խոսքային լսողության, ընկալում է խոսքի հնչյունական կողմը և 3–4 տարեկանում արդեն տարբերակում և յուրացնում է հնչյունները: Ունենալով ընդօրինակման ունակություն, երեխան կրկնում է շրջապատող մարդկանց խոսքը, նմանակում նրանց:

Այսպիսով՝ բոլոր նախադրյալները կան, որպեսզի երեխան նախադպրոցական տարիքում կարողանա հասնել մայրենի լեզվի հնչյունների ճիշտ արտաբերմանը: Սակայն, ցավոք, նախադպրոցականների արտասանական թերությունների վերացմանը պատշաճ ուշադրություն չի դարձվում: Ոչ բոլոր մանկապարտեզներում է, որ այդ նպատակով հատուկ պարապմունքներ են անցկացվում, ուստի և միշտ չէ, որ երեխաները մանկապարտեզից դպրոց են գնում առանց լեզվական թերությունների:

Ամենից շուտ զարգանում է խոսքային լսողությունը: Դրա համար վաղ տարիքում կան ավելի շատ նախադրյալներ, սակայն դա դեռ չի նշանակում, որ զուգահեռաբար չպետք է հետևել խոսքաշարժողական օրգանների կատարելագործմանը:

Երեխան կյանքի առաջին ամիսներին կատարում է արտաբերական շատ շարժումներ:

Պարզ շարժումներից նա աստիճանաբար անցնում է բարդերին՝ միացնում է հնչյունները, որոնք հետագայում վերածվում են բառերի:

Կյանքի առաջին տարում հնչարտաբերման ուսուցումն իրականացնում է նաև հնչյունը երեխայի լսողության միջոցով ճիշտ հասցնելով: Դաստիարակն այն արտաբերում է հստակ, պարզ՝ երեխայի ուշադրությունը կենտրոնացնելով հնչյունի վրա: Նա բառի մեջ անհրաժեշտ հնչյունն անջատում է ձայնի միջոցով՝ արտաբերում ավելի երկար ու շեշտված և կրկնել է տալիս իր արտաբերածը: Այսպես, աստիճանաբար երեխան հնչյունի արտաբերումից անցնում է վանկերին, ապա նաև՝ բառերին: Ինչպես այս, այնպես էլ կյանքի երկրորդ և երրորդ տարում երեխան ունենում է հնչարտաբերման թերություններ: Երեխային բնորոշ են հնչյունների փոփոխությունն ու ոչ պարզ լինելը:

Չհնչարտաբերման ճշտությունը մեծ մասամբ պայմանավորված է նաև բառի կառուցվածքով: Նախադպրոցականը միևնույն հնչյունը հնչյունների մի համակարգում արտաբերում է հստակ, իսկ մյուսում՝ աղավաղումներով: Օրինակ՝ բաղաձայնների դեպքում աղավաղում է տեղի ունենում, իսկ ձայնավորների դեպքում ճիշտ է արտաբերում:

Ճիշտ արտասանության ուսուցումն այս խմբում պետք է կազմի մայրենի լեզվի պարապմունքների կարևոր մասը: Վարժությունները տրվում են խաղային ձևով: Քանի որ լեզվի հնչյունական համակարգի յուրացումը կապված է խոսակցական օրգանի խոսքային շնչառության զարգացման հետ, ապա արտասանական թերությունների վերացման աշխատանքները պետք է տանել 3 ուղղությամբ՝

- տարբեր խաղերի միջոցով խոսքի վարժեցում,
- խոսքաշարժողական ապարատի վարժեցում,
- խոսքային լսողության, խոսքային շնչառության զարգացում:

Վաղ տարիքի երեխայի խոսքային շնչառությունը դեռ ձևավորված չէ: Նրան բնորոշ է՝ ներշնչման հետ համեմատած, արտաշնչման երկար տևողությունը:

Նախ պետք է անցկացնել խոսքային շնչառությունը վարժեցնող խաղեր: Դրանք են՝ թեթև առարկաները փչելով հեռացնելը, պղպջակներ բաց թողնելը և ընդհանրապես փչելու գործողություն կատարելը: Այս խաղերն անցկացնելիս պետք է հետևել, որ երեխաները ներշնչման ժա-

մանակ ուսերը չբարձրացնեն, իսկ արտաշնչելիս որովայնը չծօեն, այսինքն, շնչառությունը տեղի ունենա հիմնականում կրծքավանդակի օգնությամբ:

Շնչառության վարժեցման խաղերի տևողությունը պետք է լինի երեք րոպեից ոչ ավելի: Փոքրիկ ընդմիջումից հետո կարելի է կրկնել դրանք:

Խոսքային լսողություն

Խոսքային լսողության զարգացման նպատակով դաստիարակն անցկացնում է խոսքի և հատկապես բառի հնչյունական պատկերը արագ և ճիշտ ընկալելու կարողություն վարժեցնող խաղեր: Դա հնարավորություն է տալիս հասկանալ բառի իմաստը, չշփոթելով այն բառերը, որոնք արտասանությամբ մի փոքր իրար նման են, բայց բովանդակությամբ՝ տարբեր:

Խոսքային լսողության զարգացման համար անցկացվում են մի շարք դիդակտիկ խաղեր, օրինակ՝ «Գուշակի՛ր՝ ինչ ասացի» խաղը: Դրա համար առաջարկվում է գուշակել, թե ինչ բառ է արտաբերվել: Այն կատարվում է երկու ձևով: Առաջին՝ բառն արտաբերվում է շշուկով, և երեխան պետք է ուշադիր նայի դաստիարակին ու կրկնի ասածը: Այս խաղի ժամանակ լսողական ընկալումը զուգակցվում է տեսողականին: Երկրորդ՝ երեխան չի նայում դաստիարակի բերանին, այլ միայն լսելով պետք է կրկնի լսածը: Այս դեպքում լարվում է երեխայի լսողությունը: Խաղի համար ընտրվում են ծանոթ բառեր: Խաղը պետք է սկսել պարզ բառերից և բարդացնել. սկզբում ասել արտասանությամբ տարբեր, իսկ հետո արտասանությամբ նման՝ բովանդակությամբ տարբեր բառեր: Խոսքային լսողության զարգացմանը նպաստում է՝ «Գուշակի՛ր՝ ո՞վ կանչեց» դիդակտիկ խաղը ևս: Երեխաներն առանց նայելու խոսողին, ձայնից պետք է գուշակեն, թե ո՞վ է խոսում կամ կանչում: Կարելի է խաղալ նաև «Ով ինչ ձայն է հանում», «Արձագանք» և երեխայի խոսքի հնչյունական

կուլտուրայի ու խոսքային լսողության զարգացմանը նպաստող այլ խաղեր:

Արտասանական թերությունների վերացումն այսքանով չի սահմանափակվում, քանի որ լսողական ընկալումը հնարավորություն է տալիս ոչ միայն ընկալելու շրջապատի խոսքը, այլև վերահսկման ենթարկելու սեփականը:

Խոսքի հնչյունային կողմ

Խոսքի հնչյունային կողմի ընկալումը տեղի է ունենում նաև արտաբերման և տեսողական ընկալման հիման վրա: Երեխաները տվյալ բառը կամ նախադասությունն արտասանելիս զգում են խոսքաշարժողական օրգանի ողջ գործունեությունը: Լսողության և տեսողության գործառույթների համակցված օգտագործումը ստեղծում է զգայական (սենսոր) բազա՝ արտասանական ունակությունների ձևավորման համար:

Խոսքաշարժողական օրգանների համակարգի՝ լեզվի մկանների, շրթունքների զարգացման համար կարևոր են հնչարտաբերման տարբեր խաղերը: Այդ խաղերում դաստիարակը ցուցադրում է հնչյունի ճիշտ արտասանությունը: Երեխաներն ընդօրինակելով կրկնում են: Այդ կերպ վարժեցվում է նրանց խոսքային ապարատը: Այս վարժությունների նպատակը հնչյունի ճիշտ արտաբերումն է: Պարապմունքին նախապատրաստվելիս պետք է հաշվի առնել՝ ծանոթ է երեխաներին այն առարկան կամ կենդանին, որոնց բնորոշ է տվյալ ձայնը:

Խոսակցական օրգանների զարգացման խաղերը տարբեր խմբերում տարբեր բարդություն ունեն: Վաղ տարիքի երկրորդ և կրտսեր խմբերում կարելի է կազմակերպել «Հրաշալի պարկ» խաղը: Պարկի մեջ պետք է լցնել անվանման մեջ դժվար արտաբերվող հնչյուններ ունեցող խաղալիքներ: «Գուշակի՛ր՝ ո՞վ է նա» խաղը նույնպես նպաստում է խոսքաշարժողական ապարատի զարգացմանը: Այն կարելի է անցկացնել հարցադրումների միջոցով՝ «Ո՞վ է անում մյաու, հաֆ–հաֆ, մկկ և այլն»: Կամ՝ «Կատուն, շունը, այծը ի՞նչ ձայն են հանում»: Խաղերի ժամանակ

դաստիարակը պետք է հետևի երեխաների ճիշտ հնչարտաբերմանը, խոսքաշարժողական օրգանի ճիշտ գործունեությանը, ուղղի սխալները:

Խոսակցական կարողությունների կատարելագործում է տեղի ունենում նաև շարժուն խաղերի միջոցով: Օրինակ՝ «Գնացք» խաղալիս երեխաներն արտաբերում են ընթացքի ժամանակ գնացքի անիվների և ազդանշանի, իսկ «ճնճղուկները և ավտոմեքենան» խաղի ընթացքում ճնճղուկի և ավտոմեքենայի ազդանշանի ձայներ:

Դաստիարակն օգտագործում է նաև ժողովրդական պարզ ստեղծագործություններ: Շատ զվարճալիքներ ուղեկցվում են երեխաների շարժումներով, օրինակ՝ «Ծափիկ – ծափիկ»-ը, «Ծիվ–ծիվ, աքլորածիվ»-ը: Վաղ տարիքի երեխան շուտ է հոգնում և ձանձրանում: Պետք է այնպես կազմակերպել խաղերը, որ դրանց ընթացքը միօրինակ չլինի, այլ ամեն մի պահը լինի հետաքրքիր ու գրավիչ: Այդ նպատակով անհրաժեշտ է մեծ տեղ տալ բեմականացումներին: Սովորաբար, դա արվում է կան տիկնիկների, կան խաղալիքների միջոցով: Երբ երեխան առաջին անգամ է ներկայացում տեսնում, նրան ավելի շատ գրավում են բեմականացման գործողությունները: Այս ընթացքում նա խոսքին ուշադիր չի հետևում, իսկ երկրորդ և հաջորդ դիտումներին արդեն ուշադիր է: Կրկնելով վարժվում է սովյալ հնչյունի ճիշտ արտաբերմանը: Բեմականացնելիս գործող անձանց արտասանած բառերի մեջ պետք է լինեն դժվար արտաբերվող հնչյուններ, օրինակ՝ Կ, Ս, Ր, Ռ և այլն:

Ուշագրավ ու զվարճալի են նաև մատիկների խաղերի ստվերները պատերի վրա: Պատկերների դինամիկան ուրախացնում, ոգևորում է երեխաներին:

Արտասանական թերությունների վերացման համար էական է ոտանավորների դերը: Օրինակ, Ր, Է հնչյունների ուսուցման համար կարելի է օգտագործել Գ. Գեղունու «Աքլորիկը», «Իմ տիկնիկը», «Ով ունեն», Ավ. Ճաղարյանի «Ուլիկը», Կ, Տ հնչյունների համար՝ Ս. Մկրտչյանի «Ճուտիկը», Փ. Պողոսյանի «Հավիկը», Ժ. Ա. Շահինյանի «Կատու»- ն և այլն:

Հանրահայտ ճշմարտություն է, որ երեխայի խոսքը ձևավորվում և զարգանում է մեծերի հետ հաղորդակցման ընթացքում: Ուստի անհրաժեշտ է՝

- ապահովել դաստիարակի հաճախակի շփումը երեխայի հետ,
- երեխայի մեջ դաստիարակել մեծերի և փոքրերի հետ շփման պահանջ,

- խրախուսել երեխայի կողմից մեծերին դիմելու յուրաքանչյուր նախաձեռնություն,

- արձագանքել երեխայի յուրաքանչյուր նախաձեռնությանը

Դաստիարակի ամենօրյա հաճախակի շփումից բացի, խոսքի այս կամ այն կողմի զարգացմանը նպաստում են խաղ-պարապմունքները, առարկայական և սյուժետային նկարների դիտումը, բանաստեղծությունների և երգերի ուսուցումը, ժողովրդական խաղիկների, կարճ կատակախոսությունների և պատմությունների ընթերցումը:

Պետք է երեխային սովորեցնել ճիշտ ընկալել և տարբերել հնչյունները, կարողանալ ունկնդրել, խոսել հանգիստ, առանց շտապելու, ոչ բարձր, չընդհատել մեծին և այլն:

Մեծահասակից պահանջվում է երեխայի հետ խոսել դանդաղ, հանգիստ, սիրալիր և անընդհատ կրկնել բառերը, չօգտագործել մանկական կամ աղավաղված բառաձևեր:

Եթե երեխան, իր տարեկիցներից ավելի շուտ է խոսում կամ քայլում, դա երաշխիք չէ, որ նա մի քանի տարի անց կշարունակի ավելի լավ խոսել ու շարժվել, քանի որ նրանք տարբեր կերպ են զարգանում և հասունանում:

Պետք չէ դառնալ ձանձրալի խրատախոսներ:

խոսքի զարգացման հապաղման նշաններն են՝

- 4 ամսականը ժպիտով չի արձագանքում մեծերին,
- 6 ամսականը չի բլբլացնում,
- 1 տարեկանում «մամա, պապա, տուր» չի ասում,
- 2,5 տարեկանում 20 բառից քիչ է արտասանում,

-
- ակնհայտ չի նկատում իրեն ուղղված խոսքը,
 - 3 տարեկանում խոսում է անհասկանալի, արագ կամ դանդաղ՝ կուլ տալով կամ ձգելով բառերի վերջավորությունները,
 - եթե երեխայի բերանը միշտ կիսաբաց է կամ առանց ակնհայտ պատճառների (ատամների) առատ թքարտադրություն է լինում, դժվարություններ ունի ծամելու հետ,
 - դրսևորում է ասոցիալ (բացասական սոցիալական) վարքագիծ, անհրաժեշտ է երեխայի հետ կազմակերպել «խոսակցական թենիս»՝ ասելիքը 6 բառից ոչ ավելին,
 - նկատողություն անել նույն պահին,
 - «բոյկոտելու» մեթոդ. երեխային ասացեք, որ այդ պահվածքից կամ բառերից հետո չեք ուզում խոսել նրա հետ, լուռ մնացեք մի քանի րոպե, 3 տարեկանի հետ՝ մինչև 15 ր., մեծերի հետ՝ ավելի շատ,
 - կարելի է երեխայի հարցին հարցով պատասխանել. «Իսկ դու ի՞նչ ես մտածում այդ մասին»,
 - զրույցի ժամանակ ունենալ դադարներ,
 - սառը վերաբերմունք՝ երեխային զրկել որոշ արտոնություններից,
 - անձնային հիմնական որակներն ի հայտ են գալիս 5-6 տարեկանում, իսկ կարեկցանքը ձևավորվում է սկսած 4 տարեկանից:

Դաստիարակի նախապատրաստվելը խոսքի զարգացման պարապմունքներին

Շատ հաճախ դաստիարակը խոսքի զարգացման պարապմունքներ անցկացնելիս լավ գիտե, թե ինչ պետք է ցուցադրել, ինչ հաջորդականությամբ, սակայն պարզորոշ չի պատկերացնում, թե ինչ է անհրաժեշտ ասել, տվյալ իրադրության մեջ, ինչպիսի մեթոդներից օգտվել և կողմնորոշվել ստեղծված իրավիճակում: Առավել արդյունավետ կլինի այն պարապմունքը, որը որոշակի պլանի համաձայն, մանկավարժի օգնությամբ պատրաստված լինի նախապես: Դրա համար անհրաժեշտ է.

- որոշել պարապմունքի նպատակը. ինչ սովորեցնել և ինչու,
- յուրացնել պարապմունքի բովանդակությունը,
- նախապատրաստել համապատասխան նյութեր, նկարներ, խաղալիքներ և այլն,
- հաշվի առնելով երեխաների զարգացման մակարդակը՝ որոշել, թե ինչպես անցկացնել պարապմունքը՝ խմբերո՞վ, թե՞ անհատապես,
- նախապես որոշել պարապմունքի ընթացքում երեխաների տեղավորման, նյութի ցուցադրման տեղը, որպեսզի նրանց համար լինի հարմարավետ, ամեն ինչ տեսանելի և լսելի,
- որոշել՝ ինչի հետ պետք է նախապես ծանոթացնել երեխաներին, որպեսզի նյութը մատչելի դառնա նրանց համար:

Անկախ նրանից, թե տվյալ տարիքային խմբում քանի երեխա է ընդգրկված, խոսքի զարգացման պարապմունքներին պետք է նրանց բաժանել ենթախմբերի, ըստ որում, յուրաքանչյուր խմբում ցանկալի է ընդգրկել 8-10 երեխա: Միայն փոքրաթիվ խմբերի առկայության դեպքում կարելի է համբերատար, ոչ ստիպողաբար, առանց երեխաներին ձանձրացնելու, ուղղորդել ընդօրինակման, կրկնության, հարցերի միջոցով բարենպաստ պայմաններ ստեղծել արտահայտվելու համար:

Խոսքի զարգացման պարապմունքների ընթացքում մեծահասակի խոսքն ուղեկցվում է հետաքրքիր տեսարանների ցուցադրմամբ, որի ընթացքում դաստիարակը դիմում է բոլոր երեխաներին: Նման պարապ-

մունքներին, սովորաբար, ակտիվ մասնակցություն են ունենում լեզվական առավել զարգացած կարողություններով երեխաները, իսկ մյուսները լսում են, թե ինչպես են ուրիշները խոսում: Իհարկե, կարևոր է, երբ երեխաները լսում են դաստիարակի, հասակակիցների հստակ, արտահայտիչ խոսքը: Սակայն չի կարելի սահմանափակվել մնան պարապմունքներով: Անհրաժեշտ է դիտումների, զբոսանքների, խաղ-պարապմունքների ընթացքում ստեղծել բարենպաստ պայմաններ՝ երեխաների խոսքի անմիջական ուսուցման համար: Բնականաբար, լավագույն արդյունք ստացվում է երեխայի հետ անհատական շփման դեպքում: Ուրեմն խմբերը պետք է լինեն այնպիսին, որպեսզի պարապմունքի ժամանակ երեխաներից ոչ մեկն անուշադրության չմատնվի: Գործնականում ինչպե՞ս իրականացնել այդ: Նախ, անհրաժեշտ է խումբը բաժանել ենթախմբերի՝ յուրաքանչյուր խմբում ընդգրկելով խոսքի զարգացման տարբեր մակարդակներ ունեցող երեխաների, և անհատական աշխատանք տանել հետ մնացող երեխաների հետ: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել գործունեության այլ տեսակների՝ խաղի, կերպարվեստային գործունեության, աշխատանքի, զբոսանքների վրա:

Նախապես պետք է որոշել, թե տվյալ պարապմունքի ընթացքում երեխաներն ինչպիսի դիրք պետք է գրավեն: Ցանկալի է, որ ցուցադրվող նկարները կամ դիդակտիկ նյութերը տեղադրվեն լավ լուսավորված տեղում, տեսանելի լինեն բոլոր երեխաներին:

Վաղ տարիքի երեխայի՝ առարկան նկարագրելու ունակությունը դեռևս զարգացած չէ: Այդ պատճառով էլ, այն, ինչ հնարավոր է, պետք է ցուցադրել իրական տեսքով: Այսպես, օրինակ, նկարում ցույց ենք տալիս ցանկապատ, խաղի ժամանակ խորանարդիկներով կառուցում ենք ցանկապատ, իսկ զբոսանքի ընթացքում երեխաների ուշադրությունը բևեռում ենք ցանկապատի և դրա անվանման վրա: Կարելի է կազմակերպել նաև խաղ ցանկապատի վերաբերյալ:

Երկու տարեկան երեխաների դաստիարակության խնդիրներին և տարիքային առաձնահատկություններին համապատասխան առաջարկվում են պարապմունքի հետևյալ տեսակները.

-
- շարժումների զարգացում,
 - առարկայի հետ գործողություն կատարելու ունակության զարգացում,
 - խոսքի և շրջապատում կողմնորոշվելու կարողության զարգացում,
 - երաժշտության պարապմունք,
 - խաղեր, զվարճանքներ:
- Անհրաժեշտ է ստեղծել առավել նպաստավոր պայմաններ հիմնական նպատակին հասնելու համար:

**Բարոյական և գեղարվեստագեղագիտական դաստիարակության
խնդիրներն ու մեթոդները**

Երեխայի անձնավորության ձևավորումը սկսվում է կյանքի առաջին տարվանից: Շրջապատի նկատմամբ երեխայի վերաբերմունքը ձևավորվում է տեսածի և լսածի հիման վրա: Մեծահասակների վարքը, տեղի ունեցող դեպքերին նրանց գնահատականները, միմյանց նկատմամբ վերաբերմունքը ազդում են երեխաների անձնավորության ձևավորման վրա:

Փոքր երեխան իր արարքներում ղեկավարվում է ոչ թե «Ինչ է պետք, ինչ է կարելի» անհրաժեշտության թելադրանքով, այլ՝ ինքն ինչ է ուզում, իրեն ինչ է հետաքրքիր ու հաճելի ներքին ցանկությամբ: Երեխային ներկայացվող պահանջները պետք է համապատասխանեցնել նրա տարիքին ու անհատական հնարավորություններին:

Սկզբում «պետք է» բառը հարկավոր է օգտագործել այն ժամանակ, երբ այն համընկնում է երեխայի օրգանական պահանջների(ուտել, քնել) կամ հաճելի պահի (օրինակ՝ զբոսանք) հետ: Այնուհետև կարելի է աստիճանաբար անցնել հուզական տեսակետից չեզոք դեպքերին (հավաքել խաղալիքները), իսկ հետո՝ երեխայի ցանկությանը հակասող իրավիճակներին (վերադարձնել խաղալիքը):

Բարոյական դաստիարակությունը հիմնականում երեխաների գործողությունների, արարքների և ողջ վարքի մտածված ու նպատակասլաց ղեկավարումն է:

Մեծահասակների վարքն ընդօրինակման օրինակ է դառնում: Երեխայի ներկայությամբ ցանկացած գրգռված վիճակ նրա համար աննկատ չի անցնում: Նա ընդօրինակում է մեծահասակին՝ այդ իրավիճակը վերարտադրելով իր խաղերում, ապա փոխանցում միջանձնային փոխհարաբերությունների մեջ: Պետք է երեխաներին վարժեցնել դրական արարքների ընդօրինակման:

Հարկավոր է երեխաների մեջ առաջացնել հետաքրքրություն, սեր և հոգատար վերաբերմունք բնության նկատմամբ: Դրանք կհարստացնեն երեխայի միտքը և զգացմունքները: Երեխաները շատ տպավորվող են:

Նրանց գեղագիտական զարգացման վրա վաղ է սկսում ազդել շրջապատը: Դրա համար պետք է մտածված վերաբերվել երեխայի շրջակա միջավայրի արտաքին ձևավորմանը՝ բազմազան վառ տպավորություններ հաղորդելու նպատակով:

Մանկական սենյակի պատերը պետք է ներկված լինեն հանգիստ, լուսավոր և տաք երանգներով: Կահավորանքը լինելու է հարմար, հիգիենիկ և գեղեցիկ: Պատերի և կահույքի գույնին ներդաշնակ պետք է ունենալ թափանցիկ վարագույրներ: Պատերը հարկավոր է զարդարել չափավոր, բովանդակությամբ մատչելի նկարներով (դրանք պետք է կախել երեխաների հասակին հարմար) և քանդակներով: Կարելի է ունենալ սափորներ, սկահակներ: Նկարները և այլ զարդարանքները պետք է ժամանակավորապես հավաքել կամ փոխարինել ուրիշներով, քանի որ կրկին դրանք կարող են գրավել երեխաների ուշադրությունը:

Առարկաները և խաղալիքները պետք է լինեն բազմազան, որպեսզի հարստացնեն երեխաների պատկերացումները:

Վաղ տարիքից երեխաներին պետք է սովորեցնել հետևել իրենց արտաքին տեսքին, դիմելու ձևին, շրջապատի կարգուկանոնին: Հարկավոր է նաև ձևավորել բացասական վերաբերմունք՝ կեղտոտվածության և թափփվածության հանդեպ:

Շրջապատող մարդիկ պետք է երեխայի մեջ առաջացնեն գեղեցիկի նկատմամբ ձգտում և սեր. «Տես, որքան գեղեցիկ է ծաղիկը, ինչ լավ հոտ ունի» և այլն:

Գեղագիտական զգացմունքի ձևավորման և զարգացման համար շատ բան կարող է տալ բնությունը: Պետք է երեխաների ուշադրությունը հրավիրել բնության երևույթների վրա. «Տեսեք, ձյուն է գալիս, ինչքան գեղեցիկ է» և այլն:

Գեղարվեստական խոսքը նույնպես կարելի է օգտագործել գեղագիտական զգացմունքների ձևավորման համար: Դեռևս մեկ տարին չլրացած երեխան ուրախանում է, երբ ասում են «Ծափիկ-ծափիկ» և այլն: Ավելի մեծերին շատ են գրավում ոտանավորները, հեքիաթները: Գեղարվեստորեն ձևավորված նկարների դիտումները՝ սկզբում մեծերի հետ,

ապա ինքնուրույն, բացի մտահորիզոնի ընդարձակումից և խոսքի զարգացումից, ներգործում են երեխաների զգացմունքների վրա:

Վաղ տարիքում գեղագիտական զգացմունքների ձևավորման մատչելի միջոցներից մեկն է երաժշտական հատուկ պարապմունքը, երեխաների կյանք մտած երգերը, դրանց ունկնդրումը և պարերը: Խաղալով երեխաների հետ, երբեմն նրանց հետ պետք է երգել, հատկապես երբ նա դժվարանում է: Հարկավոր է հուշել նրան օրորոցայինը, երբ նա օրորում է տիկնիկին: Կարելի նաև երեխային առաջարկել պարել տիկնիկի կամ նապաստակի հետ՝ ցուցադրաբար պարելով նրա հետ:

Երաժշտական դաստիարակության հիմնական խնդիրն է՝ երեխայի մեջ առաջացնել ուրախություն, հրճվանք, վառ պատկերացումներ, դաստիարակել սեր երաժշտության հանդեպ, զարգացնել երաժշտությունը ըմբռնելու և ակտիվորեն արձագանքելու ունակությունը:

Երաժշտությունը երեխաների կողմից ընկալվում է ավելի շուտ, քան արվեստի մյուս տեսակները: Պարզ երաժշտությունը երեխաներին տանում է մի ուրիշ աշխարհ: Դրա համար երաժշտական պարապմունքի նյութը պետք է տարբերվի իր պարզությամբ և գեղարվեստականությամբ: Նախատեսված երգերի բովանդակությունը, խաղերը, պարերի շարժումները պետք է լինեն հետաքրքրական և մատչելի: Այս ամենից երևում է, որ գեղարվեստական դաստիարակությունը ամուր կապված է մտավոր և բարոյական դաստիարակության հետ:

Եթե երեխան կարողանում է հիանալ խոտով ու ծաղկով, թիթեռով, ապա չի տրորի, չի ոչնչացնի դրանք և անպայման կկանխի այլոց վատ արարքները:

Երեխաների համակարգված զարգացման համար կազմակերպվում են հատուկ խաղ-պարապմունքներ: Խաղ-պարապմունքների ընթացքում և պարապմունքներից դուրս պետք է երեխաներին սովորեցնել լսել մեծահասակներին, հետևել, թե ինչ են անում և ցուցադրում նրանք, ընդօրինակելով նրանց խոսքն ու շարժումը՝ կատարել հանձնարարություններ:

Վաղ տարիքի երեխաների հետ տարվող պարապմունքները դաստիարակի կողմից պլանավորված, դիդակտիկական ներգործություն են երե-

խաների ընդհանուր զարգացման վրա: Դրանց նպատակն է՝ երեխաների մտավոր ունակությունների ձևավորումը՝ որոշակի ծրագրային նյութի շրջանակում:

Դաստիարակի կողմից կազմակերպվող պարապմունքները, խաղերն ու դիտումները նպաստում են երեխայի հետագա զարգացման համար մեծ նշանակություն ունեցող նոր պատկերացումների, գիտելիքների ձեռքբերմանը, կարողությունների ձևավորմանը, որոնք չեն կարող ժամանակին զարգանալ առանց հատուկ ուսուցման:

Վաղ տարիքի երեխայի ուսուցումը, ի տարբերություն ավագ նախադպրոցական երեխաների ուսուցման, հիմնականում տեղի է ունենում առօրյա կյանքում մեծերի հետ անհատական շփման ընթացքում՝ ուտելու, հագնվելու, քնելու, զբոսանքների, խաղի և այլ իրադրության պայմաններում: Դաստիարակը երեխաներին սովորեցնում է վերցնել առարկան, սողալ, քայլել, դասավորել աշխատարակը, ճիշտ բռնել գդալը, հագնել գուլպան, ոչ թե խլել, այլ խնդրել ցանկացած իրը, առարկան, խաղալիքը և այլն: Երեխան այս կամ այն գործունեության ընթացքում ծանոթանում է շրջապատող առարկաների հատկություններին, մեծերից իմանում է այդ առարկաների անուններն ու գործածության ձևերը: Սակայն հասարակական դաստիարակության պայմաններում հնարավոր չէ ապահովել խմբի բոլոր երեխաների համակողմանի զարգացումը՝ օգտվելով միայն երեխաների ինքնուրույն գործունեության ընթացքում դաստիարակի հետ նրանց անհատական շփումից: Նման դեպքերում կարող է ստացվել այնպես, որ այն երեխաները, որոնք առավել ակտիվ են և տարբեր առիթներով դիմում են դաստիարակին, ավելի շատ կլինեն դաստիարակչական ներգործության ներքո, քան նրանք, ովքեր պասիվ են և խիստ կարիք ունեն ուշադրության: Այդպիսիները դուրս կմնան դաստիարակի տեսադաշտից: Բացի այդ, նման ոչ համակարգված շփման ընթացքում դժվար է ապահովել դաստիարակչական ազդեցություն երեխայի վարքի և զարգացման առավել կարևոր կողմերի վրա: Վաղ տարիքի երեխաների համակողմանի զարգացման նպատակով անցկացվում են դիդակտիկ խաղեր և պարապմունքներ: Դրանք ուսուցման առավել արդյունավետ

ձևեր են: Այդ խաղերն ու պարապմունքները մանկավարժական հատուկ գործընթաց են, որոնք տարբերվում են խաղերի, կերակրման, քնելու ընթացքում երեխայի հետ դաստիարակի ունեցած շփումից: Պարապմունքներն անցկացնելիս դաստիարակը նախապես դնում է որոշակի նպատակ. սովորեցնել որևէ նոր բան, ծանոթացնել ինչ-որ բանի հետ, ինչ-որ բան զարգացնել, անցկացնել պարապմունք՝ նախապես մշակված պլանով և ծրագրային բովանդակությանը համապատասխան օգտագործելով անհրաժեշտ մեթոդներ: Պարապմունքն անցկացնելիս ընտրվում են համապատասխան դիդակտիկ նյութեր, որոնց օգնությամբ նպատակահարմար է ակտիվացնել երեխաների հետաքրքրությունը: Բովանդակության ճիշտ ընտրությունը և խաղերի ու պարապմունքների համակարգված կազմակերպումն ապահովում են երեխաների համակողմանի զարգացումը: Պարապմունքը համարվում է ուսուցման առավել արդյունավետ ձև, որն ապահովում է երեխաների առաջադիմությունը, շարժումների, խոսքի և այլ ունակությունների, ինչպես նաև հոգեկան գործընթացների (ուշադրություն, հիշողություն, մտածողություն և այլն) զարգացումը: Պարապմունքի ընթացքում դաստիարակի կողմից երեխաների գործունեության կարգավորումն ու ղեկավարումը ձևավորում են նրանց միջև դրական փոխհարաբերություններ, ընկերոջ գործունեության նկատմամբ հետաքրքրություն, ցանկություն են առաջացնում ընկերոջ հետ շփվելու, իր աշխատանքի արդյունքներին նրանց հաղորդակից դարձնելու և այլն: Պարապմունքները շատ վաղ են դառնում երեխաների գործունեության հատուկ ձև և տարրերվում են ինքուրույն գործունեության մյուս ձևերից: Պարապմունքի բովանդակությունն ու բնույթը պլանավորում է դաստիարակը: Այս տարիքում երեխաների ողջ գործունեությունը հիմնականում ղեկավարվում և կարգավորվում է մեծահասակի կողմից: Երեխաներին առաջադրվում են աստիճանաբար բարդացող պահանջներ՝ նստել, սովորել հետևելու որոշակի կանոնների /չխանգարել ուրիշներին, նկարել միայն թղթի վրա և այլն/:

Երկուսից երեք տարեկան երեխաները միատեսակ գործունեությունից շուտ հոգնում են: Նրանց կենսափորձը և կարողությունները սահմա-

նափակ են, ինչի հետևանքով նրանք չեն կարող ամբողջ արժեքային ժամանակ ինքնուրույն զբաղվել տարբեր գործունեությամբ: Նրանք կարիք են զգում արտաքին խթանման: Մեծահասակի կողմից տարվող պարապմունքները, որոնց նախաձեռնությունը պատկանում է դաստիարակին, հանդիսանում է վաղ տարիքի երեխաների բազմազան գործունեությունն ապահովող միջոցներից մեկը, որը շատ անհրաժեշտ է երեխաների ակտիվ, կայտառ վիճակը ապահովելու համար: Օրինակ՝ մեկուկես տարեկան երեխան չի կարող միայնակ երկար ժամանակ խաղալ: Եթե նույնիսկ խաղալիքների բավարար առկայության դեպքում էլ երեխային թողնում են ինքն իր հետ, նա արագ հոգնում և լալիս է: Փոքր երեխաներն իրենց լավ կզգան միայն այն դեպքում, եթե նրանց ինքնուրույն գործունեությունը ժամանակին փոխարինվի դաստիարակի կողմից հատուկ կազմակերպված խաղերով ու պարապմունքներով: Դրանից հետո նրանք նորից լավ կխաղան:

Ինչպես պարապել վաղ տարիքի երեխաների հետ. պարապմունքների ինչպիսի՛ տեսակներ և հատուկ խաղեր են անհրաժեշտ այդ տարիքի երեխաներին: Որպեսզի պարապմունքի բովանդակության ճիշտ ընտրություն կատարվի, նախ և առաջ պետք է լավ իմանալ երեխաների զարգացման ընթացքը: Այսպես, օրինակ՝ մեկ տարեկան երեխայի համար շատ կարևոր է սովորել գործողությունները, ընդօրինակել շարժումները, և հեշտ արտասանել լսած վանկերը: Ինքնուրույն քայլերը կնպաստեն երկրորդ տարում գտնվող երեխայի խոսքի զարգացմանը, առարկաների հետ նրա գործողությունների բարդացմանը, շրջապատում կողմնորոշման ընդլայնմանը:

Երեխաների զարգացման վերլուծությունները ցույց են տվել, որ որոշ կարողություններ կարող են ձևավորվել առարկաների հետ նրանց ինքնուրույն վարժությունների ընթացքում. Օրինակ՝ 7-8 ամսական երեխան ինքնուրույն կարող է սովորել տուփից հանել առարկան, 12-14 ամսական երեխան սովորում է ինքնուրույն մազլցել և իջնել:

Խոսքի ակտիվ զարգացման ժամանակ 2 տարին անց երեխան, նախօրոք սովորած լինելով տարրական գործողություններ կատարել և

ստանալով հատուկ ուսուցում, կկարողանա վերարտադրել մեծերի կողմից կատարված բազմաթիվ գործողություններ /բժշկի, վարսավիրի, նկարիչի և այլն/:

Սակայն մի շարք կարողություններ հնարավոր է ձևավորել մեծերի անմիջական ուսուցման պայմաններում:

Վաղ տարիքի առաջին խումբ

(կյանքի առաջին տարին)

Վաղ տարիքի առաջին խմբի երեխաների բնութագիրը

Ակնհայտ է, որ երեխան ծնվում է հետևյալ մոտավոր տվյալներով. միջին քաշը՝ 3.200-3.400 կգ, հասակը՝ 50-52 սմ: Մեկ տարեկանին մոտ երեխան աճում է 20-25սմ-ով, միջին քաշը հասնում է մոտավորապես 7 կգ:

Մարդու ուղեղը կազմված է մոտավորապես 1,4 մլրդ բջիջներից, սակայն նորածնի մոտ դրանք դեռևս չեն գործում: Զարգացման ընթացքում (ծնված օրվանից մինչև 3 տարեկանը) բջիջների միջև ձևավորվում են հատուկ «կամրջակներ», որոնց զարգացմանը զուգընթաց աճում են ուղեղի կարողությունները: Գլխուղեղի բջիջներն ասես ձեռք են մեկնում միմյանց և արձագանքում զգայարանների միջոցով դրսից ստացվող տեղեկատվությանը:

Ուղեղի հիմնարար կարողությունները, արտաքին ազդանշանների ընդունումը, դրանց պատկերի ստեղծումը և մտապահումը երեխայի ինտելեկտուալ զարգացման հիմքն են կազմում: Այնպիսի հասուն կարողությունները, ինչպիսիք են՝ դատողությունը, պահանջելը, ստեղծագործելը, զգացումները, զարգանում են մինչև 3 տարեկանը՝ մինչ այդ ձևավորված կարողությունների հիման վրա:

Ստորև տրվում է քնի, կերակրման և արթնության պահերի տևողությունները, որոնց հիման վրա ցանկացած նախադպրոցական հաստատություն և ընտանիք կարող են կազմել օրվա կարգացուցակ՝ յուրաքանչյուր տարիքային խմբի կամ երեխայի համար:

Կյանքի առաջին տարում արթնության, կերակրման, քնի ռեժիմային պահերի քանակը և տևողությունը

Տարիքը	Կերակ. քանակը	Կերակր. միջև եղած տևողությունը	Արթուն. ամեն պահի տևողությունը	Ցերեկ. քնի քանակը	Քնի յուրաքանչյուր պահի տևողությունը	Օրվա ընթացքում քնի տևողությունը
ծնվ. օրվանից-2,53 ամս.	7	3 ժամ	11,5 ժամ	5	2 1,5 ժամ գիշերային` 11 ժամ	18 17,5 ժամ
2,53 ամս. 56 ամս.	6	3,5 ժամ	1,52 ժամ	4 3	2,5 1,5 ժամ գիշերային` 9,5 ժամ	17,517 ժամ
5-6 ամս. 9-10 ամս.	56	4 ժամ	22,5 ժամ	3	21,5 ժամ գիշերային` 10 ժամ	16,516 ժամ
9-10ամս. 1 տարեկ.	54	4 ժամ	2,53 ժամ	2	1,52,5 ժ. 10,5 ժամ	1514,5 ժամ

Նորածնի սենյակի և խնձախնայակի ձևավորմանը ներկայացվող պահանջները

Տանը՝ երեխայի համար հատկացված սենյակը և մանկապարտեզի խնձախնայակը հարկավոր է ձևավորել համաձայն հետևյալ պահանջների.

- Սենյակը պետք լինի չոր և լուսավոր, ցանկալի է, որ պատուհանները նայեն հարավային, հարավ-արևելյան կամ հարավ-արևմտյան ուղղությամբ,

- Կարևոր է հետևել ջերմաստիճանային ռեժիմին. կյանքի առաջին ամիսների ընթացքում՝ 21-22 C⁰, 6-րդ ամսից հետո՝ 18-20 C⁰,

- Օրը մեկ-երկու անգամ անհրաժեշտ է կատարել խոնավ մաքրում:

- Սենյակի օդափոխությունը կատարվում է օրը 3-4 անգամ՝ երեխայի բացակայությամբ:

- Սենյակը պետք է ազատ լինի ավելորդ իրերից. հնարավորինս նվազեցնել փափուկ կահույքի քանակը, բացառել՝ գորգերի, հեռուստացույցի, համակարգչի առկայությունը, որովհետև առարկաների շուրջն

առավել բարձր է փոշու խտությունը, որը կարող է առաջացնել ալերգիկ խնդիրներ:

- Սենյակը պետք է շատ արևոտ լինի, բայց դրա ուղիղ ճառագայթները չընկնեն երեխայի վրա:

- Ցանկալի է, որ արևի ճառագայթները հասնեն երեխայի բոլոր իրերին, իսկ այդ ժամանակ երեխան գտնվի ստվերում:

- Գիշերը երեխան լույսի պահանջ չունի, եթե այն անհրաժեշտ է մայրիկին, ապա պետք է օգտագործել բավականին խլացրած, թույլ լույս. բավական է լապտերի լույսը, իսկ մոմեր և լույսի այլ աղբյուրներ խորհուրդ չի տրվում:

- Կարևոր հանգամանք է երեխայի ընդհանուր զարգացման համար՝ զարգացնող առարկայական միջավայրը:

Նորածնի սենյակի ջերմաստիճանը

- Նորածնի օրգանիզմի ջերմակառավարումը դեռևս զարգացած չէ, և նա զգայուն է օդի ջերմաստիճանի կտրուկ տատանումներին: Երեխան ի վիճակի չէ հաղթահարելու ոչ շոգը, ոչ էլ սառնությունը:

- Սենյակի ջերմաստիճանը պետք է լինի մշտապես համաչափ՝ 18-21 աստիճան, վաղաժամ ծնվածների համար՝ 24-25 աստիճան:

- Սենյակի ջերմաստիճանը պետք է նպաստի երեխայի մարմնի նորմալ ջերմաստիճանի պահպանմանը:

- Սենյակի ջերմաստիճանը երեխայի առողջ քնի ապահովման հիմնական գործոնն է:

- Մեծանալուն զուգընթաց բարձրանում է երեխայի վերջույթների և մկանների ակտիվությունը, այդ իսկ պատճառով սենյակի ջերմաստիճանը կարելի է փոքր ինչ նվազեցնել:

- Սենյակի ջերմաստիճանը հսկողության տակ պահելու համար պետք է մանկական մահճակալի մոտ կախել ջերմաչափ և մշտապես հետևել դրան:

- Եթե բնակարանը տաքացվում կամ հովացվում է օդորակիչով- (кондиционер), ապա երեխան պետք է լինի հարևան սենյակում:

- Սենյակի օդի խոնավությունը նույնպես կարևոր հանգամանք է երեխայի առողջության համար: Դրա մասին պետք է անհանգստանալ, երբ բնկարանն սկսվում է ջեռուցվել: Այդ ժամանակ տաքացուցիչների վրա պետք է դնել հարմար ամանով ջուր կամ խոնավ սրբիչ, որպեսզի այն գոլորշիանա և ապահովի սենյակի խոնավությունը (60 % ից ոչ բարձր):

- Անհրաժեշտ է սենյակի խոնավությունը պահել հսկողության տակ, քանի որ ավելորդ խոնավությունը նույնչափ վնասակար է երեխայի համար (անհրաժեշտ է ձեռք բերել դեղատնից ջերմաչափ և խոնավությունը չափելու սարք):

Նորածնի սենյակի օդափոխությունը

- Ցանկալի է տաք եղանակին պատուհանները բաց թողնել ամբողջ օրը, նույնիսկ խորհուրդ է տրվում այն բաց թողնել գիշերը:

- Եթե եղանակը բարենպաստ չէ, դա պետք է պատճառ չլինի օդափոխության համար: Սենյակը օդափոխվում է օրը 3-4 անգամ՝ անկախ եղանակից, երեխայի բացակայության ժամանակ:

Օդային կոփիչ միջոցառումներ

Կոփիչ միջոցառումներից առավել տարածված են օդային կոփումները: Դրանք կարելի է կիրառել սկսած հենց նորածնային շրջանից:

Օդակոփիչ միջոցառումների տեսակներն են՝

- Սենյակի կանոնավոր օդափոխություններ՝ օրը՝ 4-5 անգամ, 5-15 րոպե տևողությամբ՝ կախված եղանակից,

- Օդային արարողություններ կարելի է սկսել 2-3 շաբաթական հասակից, սենյակի ջերմաստիճանը՝ 22-21 C⁰, սկսած 3-4 րոպեից, աստի-

ճանաբար հասցնելով մինչև մեկ տարեկանը՝ 15-20 րոպե, ավելացումները կատարում են ամեն 4-5 արարողությունից հետո՝ 3-5 րոպեով:

- Օդային արարողություններ խորհուրդ է տրվում սկսել հագուստի աստիճանական հանումով՝ սկզբում թեթևացնում են երեխայի հագուստը, 4-5 օր անց ծալում են շապիկի թևերը, ևս 4-5 օր հետո կարելի է հանել շապիկը, հետո բացել ոտքերը:

- Պետք է լինել չափազանց զգույշ՝ հետևել երեխայի ինքնազգացողությանը:

- Օդային արարողություններ անցկացվում են օրը 2-3 անգամ, սովորաբար հագուստը փոխելիս, գիշերային և ցերեկային քնից հետո, սկսելով 22 C⁰ ից մինչև տարեվերջ՝ հասցնելով 21C⁰:

Նորածնի մահճակալի ընտրությանը ներկայացվող պահանջները

- Երեխային մահճակալը պետք է տեղադրված լինի լուսավոր տեղ, հեռու արևի ուղիղ ճառագայթներից, միջանցիկ քամիներից, տաքացուցիչներից, պատուհանից և դռնից:

- Ներքնակը պետք է պատրաստված լինի բնական նյութից, լինի ոչ շատ փափուկ: Փափուկ ներքնակը և բարձր նպաստում են քրտնարտադրությանը և ողնաշարի ծռմանը:

- Խորհուրդ է տրվում երեխային քնեցնել առանց բարձի, դրա փոխարեն գլխի տակ դնել մի քանի տակ ծալված բամբակյա տակաշոր: Վտանգավոր է օգտագործել մեծ, փափուկ բարձեր:

- Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել անկողնային սպիտակեղենին և երեխայի հագուստին: Դրանք պետք է պատրաստված լինեն միայն բնական նյութերից:

- Խորհուրդ է տրվում անկողնային սպիտակեղենը փոխել շաբաթը երկու անգամ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ավելի հաճախ:

- Խստիվ արգելվում է տանը պահել կենդանիներ՝ դրանց մորթին, հոտը բացասաբար են ազդում երեխայի առողջության վրա:

Ջրոսանքներ մաքուր օդում

- Առաջին զբոսանքները նորածնի հետ կարելի է սկսել՝ տաք եղանակին՝ հենց հիվանդանոցից դուրս գրվելուց հետո, սառը եղանակին՝ երկու շաբաթական հասակից՝ Իհարկե, պարտադիր կերպով խորհրդակցելով մանկաբույժի հետ:

- Ջրոսանքներ կարող են անցկացվել առնվազն օրը 2 անգամ, սկսած 15-20 րոպեից, հասցնելով մինչև 1,5 ժամ, իսկ ամռանը՝ մինչև 5-8 ժամ:

- Երեխային պետք է հագցնել մեծահասակի հագուստից մի շերտ ավել. պետք է հիշել, որ ավել հագուստը նույնպես վնասակար է, ինչպես և չափազանց թեթևը:

- Ջրոսանքների ժամանակ պետք խուսափել միջանցիկ քամիներից. 10 աստիճանից բարձր ցրտի դեպքում հարկավոր է դադարեցնել զբոսանքները, դրա փոխարեն ավելի հաճախակի օդափոխել երեխայի սենյակը:

- Ջրոսանքները նույնչափ օգտակար են և՛ մայրիկի, և՛ փոքրիկի համար. այդ ընթացքում բարելավվում է երեխայի ախորժակը. մաքուր օդը բարենպաստ ազդեցություն է գործում արյան շրջանառության վրա, նպաստում է խոր քնին, ջերմության տատանումներն օժանդակում են երեխայի կոփմանը:

- Արևային լույսը նպաստում է վիտամին D-ի արտադրությանը, ինչը խոչընդոտում է ռախիտի զարգացմանը:

- Ջրոսանքների համար առավել բարենպաստ ժամանակահատված է առավոտյան 9-ից մինչև 12-ը և երեկոյան 7-ից հետո:

- Պետք է հիշել, որ զբոսանքները նույնչափ անհրաժեշտ են երեխայի առողջության համար, որքան և սնունդը:

- Ծնողները պետք է այն կատարեն գերազույն հաճույքով:

Ինչպես նախապատրաստվել զբոսանքներին

- Եթե մայրը տանը մենակ է, ապա սկզբում պետք է ինքը հագնվի, հետո հագցնի երեխային. հակառակ դեպքում երեխան կարող է քրտնել մինչ դուրս գալը և հեշտությամբ հիվանդանալ:

- Պետք է հիշել, որ գերջերմությունը ավելի վնասակար է, քան սառնությունը:

- Զբոսանքների ընթացքում ժամանակ առ ժամանակ հարկավոր է ստուգել երեխային, քրտնելու դեպքում հաջորդ անգամ նվազեցնել հագուստի շերտը:

- Խիստ կարևոր է հետևել, որպեսզի չմոտեն երեխայի գլուխը և վերջույթները:

- Պետք է հետևել երեխայի դեմքի գույնին՝ եթե կարմրել է, ապա շատ է հագած, իսկ եթե գունատ է՝ ուրեմն մոտեն է:

- Քունը պատշգամբում լավ առիթ է մայրիկի համար կատարելու տնային որոշ գործեր, սակայն այն չի կարող փոխարինել զբոսանքներին:

Երեխայի կաթնատամների դուրս գալու հերթականությունը

• Ատամների դուրս գալու հերթականությունն անհատական բնույթ ունի:

Սովորաբար սկզբում դուրս են գալիս՝

- ներքևի մեջտեղի կտրիչները,
- վերևի մեջտեղի կտրիչները,
- վերևի կողմնայինները,
- ներքևի կողմնայինները, և այդպես շարունակ,
- Ժանիքները դուրս են գալիս բավականին դժվարությամբ. այդ ժամանակաընթացքում շատ կարևոր է հետևել, որպեսզի երեխաները պաշտպանված լինեն մրսածությունից ու վիրուսային վարակներից,
- կաթնատամներն ամբողջովին ձևավորվում են մոտ երեք տարեկանում:

Երեխայի քնի, կերակրման, հանվել-հագնվելու համար անհրաժեշտ է ստեղծել դրական միջավայր և փոքրիկին մղել ակտիվորեն մասնակցելու այդ գործընթացներին:

Արագ աճում են կենտրոնական նյարդային համակարգի աշխատունակությունը և դրա հետ կապված ակտիվ արթնության փուլերի տևողությունը 20-30 րոպեից հասնում է 3 ժամի: Օրինակ՝ անժանոթների միջավայրում երեխայի երկչոտությունը հաստատում է պատկերները ճանաչելու կարողության ձևավորման մասին:

Եթե մեծահասակներն ընկալում են տեղեկատվությունը՝ հիմնականում օգտագործելով տրամաբանելու կարողությունը, ապա երեխան օգտվում է կանխազգացումից:

Երեխայի ճանաչողական կարողություններն առաջանում են 6 ամսականում: Այս տարիքում փոքրիկը կարողանում է տարբերել ծանոթ դեմքերը (մայրիկին, հայրիկին...), անժանոթներից ոմանց, և դա

հստակորեն զգացվում է: Բազմաթիվ կարողություններ այդպես էլ չեն ձևավորվում, եթե երեխան դա չի յուրացրել վաղ տարիքում:

Երեխայի նպատակաուղղված դաստիարակությունն ու խնամքը անհրաժեշտ է սկսել կյանքի առաջին օրերից՝ նրա համար ապահովելով լիակատար առողջություն, ֆիզիկական և հոգեկան զարգացում:

Կյանքի առաջին տարում մեծի հետ շփման ընթացքում ձևավորվում են հաղորդակցումը, կողմնորոշող և առարկայական գործողությունները, զարգանում են զգայությունները, շարժումներն ու հույզերը, խոսքը, հիշողությունն ու ուշադրությունը, դիտողագործնական մտածողության տարրերը, հարստանում է փորձը:

Կյանքի առաջին տարում երեխան մեծերի հետ հաղորդակցվելու, առարկաներով գործողություններ կատարելու պահանջ է զգում: Երեխան ունենում է աճի և զարգացման արագ տեմպ: Տարեվերջում նկատվում են ինքնուրույնության առաջին դրսևորումները, շրջապատի նկատմամբ հետաքրքրությունները:

Կերակրման, քնի և հարդարանքի ճիշտ անցկացման հիմնական պայման է ուտելու, քնելու համընկնումը երեխաների կենսաբանական պահանջներին: Այսինքն՝ երեխային կարելի է կերակրել միայն այն ժամանակ, երբ նա ցանկանում է ուտել, պառկեցնել քնելու բնական հոգնածության ժամանակ և այլն: Այս դեպքում երեխան ախորժակով ուտում է, արագ քնում և կամակորության դրսևորման պատճառ չի լինում: Դա դժվար չէ իրագործել ընտանիքում: Մանկապարտեզում ավելի փոքր, ֆիզիկապես թույլ, հիվանդ, անհամբեր կամ վաղ արթնացած երեխաներին, ելնելով նրանց վիճակից, պետք է կերակրել և պառկեցնել քնելու առաջին հերթին: Եթե երեխան հրաժարվում է, չպետք է շտապել ու շտապեցնել նրան. հարկավոր է նրան հնարավորություն տալ դիտելու ուրիշ երեխաների կերակրման, լողի և այլ պահերը՝ ընտելացնելու նպատակով: Առաջիկա գործունեության մասին նախապես (20 րոպեից կես ժամ առաջ) տեղեկացնելու դեպքում նույնպես երեխան նախապատրաստվում և տրամադրվում է: Ինչպես հայտնի է, վաղ տարիքի երեխայի մեջ դեռևս թույլ են արտահայտված ներքին արգելակման պրո-

ցեսները: Հենց այդ պատճառով նրանք չեն կարողանում հանգիստ վիճակում սպասել և սկսում են անկարգություն անել: Երեխաներն արթնանում են ոչ թե միանգամից, այլ աստիճանաբար: Նրանց կերակրում են՝ չսպասելով մյուսների արթնանալուն: Վերջում արթնացող երկու երեք երեխայի կերակրում է դայակը, իսկ այդ ընթացքում դաստիարակը վարում է խաղապարապմունքներ: Երբ երեխաները դրսևորում են որոշ ունակություններ՝ նստել ինքնուրույն, խմել գավաթից, բռնել հացի կտորը և այլն, հնարավոր է դառնում երեխաներին կերակրել զույգ-զույգ, իսկ մեկ տարեկանից՝ միաժամանակ երկուսից ավել երեխայի:

Որպեսզի ռեժիմային պահերը սահուն հաջորդեն իրար, և երեխայի համար չառաջանա դժվար կացություն, ռեժիմով նախատեսված ժամից 15-20 րոպե առաջ դաստիարակի օգնականը նախապատրաստում է ամեն ինչ. դասավորում է սեղան-աթոռները, սպասքը, խոհանոցից բերում կերակուրը, իսկ դաստիարակը զբաղեցնում է երեխաներին: Այնուհետև օգնականը հրավիրում է համեմատաբար ավելի քիչ զբաղված 2-3 երեխայի. միասին գնում են լվացվելու (մյուս երեխաները խաղում են, դաստիարակի վերահսկողությամբ և աջակցությամբ հավաքում խաղալիքները՝ որպեսզի մյուս երեխաները գնան լվացվելու): Այսպես՝ աստիճանաբար բոլորը նստում են սեղանի շուրջ: Ուտելը վերջացնող երեխան, առանց սպասելու մյուսներին, անցնում է խաղի: Նույն ձևով կատարվում է արթունության և զբոսանքի անցնելու արարողությունը: Նման մոտեցումը ընդունելի է երեխաների աճող ինքնուրույնության պայմաններում. դա հնարավոր է դառնում, երբ երեխան ինքնուրույն ձգտում է անել այն, ինչ կարող է: Երեխաներին նման հնարավորություն տալով մենք բավարարում ենք նրանց ակտիվ գործունեության պահանջը: Այդ կերպ նրանց մեջ ձևավորվում են ինքնուրույնության և աշխատանքային դաստիարակության տարրեր: Հակառակ դեպքում երեխան սովորում է, որ իր փոխարեն ամեն ինչ կատարի մեծահասակը՝ իսկ ինքը փնտրի իր համար ավելի գրավիչ ու հետաքրքրաշարժ զբաղմունք:

Երեխաները նման են մեծահասակներին այնքանով, որ թե՛ մեծերը, թե՛ երեխաները կրում են նույն հույզերը. տխրում են, ուրախանում,

զայրանում, ոգևորվում և այլն: Նրանք միմյանցից տարբերվում են միայն կենսափորձով: Երեխաներն այդ տեսակետից աջակցության կարիք են զգում: Առավել փոքրերն ավելի շատ են զգում մեծերի օգնության կարիքը:

Ինքնուրույն կատարած յուրաքանչյուր գործողություն սկսում է ուրախություն և բավականություն պատճառել երեխային: Այսպես, արդեն 6-7 ամսական երեխան ուրախանում է, եթե մի քանի փորձերից հետո հաջողվում է հասնել իր ուշադրությունը գրավող խաղալիքին: Մեկ տարեկան 3 ամսականից մինչև մեկ տարեկան 4 ամսական երեխան գոհ է լինում, եթե իրեն հնարվորություն են տալիս ուտել ինքուրույն: Դրանից հետո նա արդեն բողոքում է մեծի կողմից կերակրվելու դեմ: Սակայն այդպես վաղ հանդես եկած ինքնուրույնությունը պահանջում է իր զարգացումն ու ամրապնդումը: Որպեսզի հետագայում էլ երեխան իր ուժերին համապատասխան ձգտի ինքնուրույն կատարել այն ամենը, ինչ կարող է, և դրանից ստանա բավականություն, անհրաժեշտ է կիրառել դաստիարակչական ճիշտ մեթոդներ և ձևեր: Փոքր երեխան ցանկություն է ունենում ինքնուրույն մի որևէ գործողություն կատարել միայն այն դեպքում, եթե նրա ջանքերը տալիս են դրական արդյունք: Բացի այդ, ինքնուրույնության մշակման տեսակետից մեծ նշանակություն ունի շրջապատող մեծահասակների վերաբերմունքը երեխայի հանդեպ: Զգալիորեն ուժեղանում է որևէ բան անելու ձգտումը, եթե այդ ժամանակ նա խրախուսվում ու քաջալերվում է մեծերի կողմից:

Այդ պատճառով էլ դաստիարակը պետք է ամեն կերպ խրախուսի երեխայի ամեն մի ինքնուրույն ջանք և գործողություն: Օրինակ՝ տեսնելով, որ երեխան, հագիվ հաղթահարելով դժվարությունը, ճիշտ է հագնում գուլպան, հարկավոր է գովաբանել նրան:

Պետք չէ, որ երեխայի առաջին իսկ պահանջով օգնության գնալ: Հարկավոր է նրան սովորեցնել ջանքեր գործադրել՝ դժվարություններից ինքնուրույն դուրս գալու համար, այնուհետև գովաբանել երեխային՝ ասելով. «Այ, տեսնում ես, դու ինքդ կարող ես այդ անել»: Պետք է աշխատել գործողություններ կատարել ոչ թե երեխայի փոխարեն, այլ նրա հետ համա-

տեղ: Տարիքի աճմանը զուգընթաց երեխաներին անհրաժեշտ է ներգրավել ինքնուրույն կերակրվելու, հագնվելու, լվացվելու աշխատանքներին: Դաստիարակը, խրախուսելով երեխաների ջանքերը, նրանց հնարավորություն է տալիս ինքնուրույն հաղթահարել սեփական ուժերին համապատասխան դժվարություններ, նպաստում է երեխայի այդ փորձերի իրականացմանը և նպատակին հասնելու կարողությունների զարգացմանը: Դրանք երեխայի անձնավորության ձևավորման կարևոր նախադրյալներ են:

Վաղ տարիքի առաջին խմբի ծրագրային խնդիրներն իրականացնելու համար, ամեն օր, արթնության պահերին անցկացվում են խաղեր, խաղ-զվարճություններ, կազմակերպվում է երեխաների ինքնուրույն գործունեությունը՝ ապահովելով ակտիվ արթնության վիճակ:

Մինչև մեկ տարեկան երեխայի զարգացումը բաժանվում է հետևյալ շրջափուլերի՝ 0-3 ամսական, 3-6 ամսական, 6-9 ամսական, 9-12 ամսական: Յուրաքանչյուր փուլում ձևավորվում են կարողություններ, որոնք էական նշանակություն են ունենում երեխայի հետագա զարգացման վրա:

2,5 ամսականում հարկավոր է երեխային վարժեցնել ռեժիմով կազմակերպվող կյանքին: Արթուն ժամանակ պետք է ձգտել պահպանել հուզական հավասարակշռված, գործուն վարք՝ ապահովելով լսողական և տեսողական ակտիվություն, ձևավորել դրական վերաբերմունք ռեժիմային գործողությունների հանդեպ:

Անհրաժեշտ է խաղալիքները կախել երեխայի վեր պարզած ձեռքի բարձրությամբ և վարժեցնել նրան՝ հետևել շարժվող առարկային և նայել իր հետ խոսողի դեմքին: Հնարավոր է սովորեցնել փոքրիկին ականջ դնել տարբեր հնչյունների: Պետք է պայմաններ ստեղծել երեխայի համար՝ ձեռք բերելու տարբեր բնույթի (տեսողական, լսողական, շոշափելիքի) զգայություններ և տպավորություններ ու կամաց-կամաց մղել նրան դրանց միջև կապերի ստեղծմանը: Շփման ընթացքում երեխան պատասխանում է հուզական արձագանքներով:

Շփվելով երեխաների հետ՝ անհրաժեշտ է նրանցից ակնկալել արտասանական ապարատի և լսողության կենտրոնացման զարգացմանը

միտված հակազդումներ (ռեակցիաներ), այսինքն՝ ակտիվ խոսքի հետագա զարգացման համար ստեղծել նախադրյալներ (4 ամսականում՝ գղզղալ, 5 ամսականում՝ արտաբերել երգային գղզղոց, 6 ամսականում՝ արտասանել առաջին վանկերը):

4-5 ամսականում անհրաժեշտ է երեխաներին տրամադրել տարբեր չխկչխկաններ՝ դիտելու, բռնելու, շոշափելու համար, իսկ 5-6 ամսականում՝ զնդակներ, տարբեր նյութերից պատրաստված հնչեղ խաղալիքներ:

6-9 ամսական ձևավորվում են ինքնուրույնության մղում և կոկիկության տարրեր: Այս փուլում կարևոր է օժանդակել երեխայի սողալով («չոչ անելով») առաջ շարժվելու մղումներին, ուղղակիորեն վարժեցնել նրան այդ գործողության: Իսկ որպես խոսքի զարգացման նախադրյալ, անհրաժեշտ է նպաստել նրա թոթովանքի զարգացմանը:

Սողացող և նոր քայլող երեխաների համար անհրաժեշտ է հատակին, գորգի վրա տեղադրել հաճախակի փոփոխվող զանազան անվտանգ, հարմարավետ, գեղեցիկ և հիգիենիկ խաղալիքներ:

9-10 ամսականում շարունակվում է ինքնուրույնության, մեծերի խոսքը հասկանալու կարողության զարգացումը, հարստանում է երեխաների զգայական փորձը, պահպանվում է նրա դրական հուզական վիճակը:

11-12 ամսականում պետք է երեխային մղել տիրապետելու ինքնուրույն քայլքի: Չարկավոր է օգնել նրան՝ բարձրանալու ցածր թեքության աստիճաններով և իջնել հարթ կողմով՝ բռնելով հենարանից մի առարկայի վրայից անցնել մյուսին:

Երեխայի շուրջը պետք է տիրի հանգիստ մթնոլորտ, որպեսզի նա կարողանա լսել մեծահասակի ասածը, իր ձայնը և խմբի մյուս երեխաներին: Շատ կարևոր է դաստիարակի անընդհատ հաղորդակցումը յուրաքանչյուր երեխայի հետ, ժպիտը, խրախուսանքը:

Առաջին բառերը հասկանալը և թոթովանքի զարգացումը

Եթե հետծննդյան կյանքի առաջին, երկրորդ ամիսներին երեխան միայն լաց լինելով է դրսևորում իր վիճակն ու պահանջները, ապա երկու-երեք ամսականից նա արդեն ձայներ է արձակում, որոնք կազմված են 1-2 ձայնավոր և նույնքան էլ կոկորդային անորոշ հնչյուններից: Ձայներ արձակելը հաճույք է պատճառում երեխային և իրենից ներկայացնում է ֆունկցիոնալ խաղի նախնական ամենապարզ տեսակը: Այս ընթացքը, ըստ մասնագետների, համարվում է նախաթոթովանքի կամ «աղավանջման» փուլ, երբ երեխան «խաղում է» իր իսկ արձակած հնչյունների հետ: Այսինքն՝ ձայները կրկնում է տարբեր երանգներով և տոնայնությամբ ու զվարճանում: Դրանք երեխայի առաջին՝ այսպես կոչված «վոկալ խաղերն» են: Որպեսզի երեխան ավելի հաճախ ձայներ արձակի, անհրաժեշտ է խրախուսել նրա այդ ջանքերը և շրջապատել սիրով ու քնքշանքով:

3 ամսականից սկսվում է թոթովանքի շրջանը: Այս փուլում երեխայի արձակած ձայներն իր շրջապատում օգտագործվող լեզվի հնչյուններն են: Սակայն արտասանվում են նաև այնպիսի հնչյուններ, որոնք տվյալ լեզվում չկան: Մոտավորապես վեց ամսականում թոթովելիս երեխաներն արձակում են միայն այն լեզվի հնչյունները, որոնցով խոսում են շրջապատողները:

Երեխայի խոսքի զարգացման ժամանակին ու անկաշկանդ ընթացքն ապահովելու համար անհրաժեշտ է 6 ամսական հասակից ոչ միայն ուղղակի խոսել երեխայի հետ՝ նրա մոտ աշխուժություն, կենտրոնանալու կարողություն զարգացնելու նպատակով, այլև ուղղորդել նրան՝ հասկանալու առաջին բառերը: Մինչ ադ մեծերի հետ շփումը կրում էր զգացմունքային բնույթ: Հետագայում այն պետք է դառնա գործնական: Մեծահասակը երեխային սովորեցնում է խաղալիքով գործողություն կատարել և փորձում է նրա մեջ ընդօրինակելու ցանկություն առաջացնել. հայացքը տանել դեպի խաղալիքը և կատարվող գործողությունը: Սա չափազանց կարևոր է: Այս դեպքում շփումը կրում է ճանաչողական և

գործնական բնույթ: Դրա համար պետք է ստեղծել պայմաններ: Երեխային կերակրելիս կամ քնեցնելիս, եթե մեծահասակը խոսում է բոլորովին այլ բանի մասին (օրինակ՝ գնդակի, քնեցնելիս՝ ապուրի), նշանակում է բառերի իմաստների հասկացումը ժամանակին չի կարող ձևավորվել: Ուստի պետք է բացատրությունն ուղեկցել ցուցադրման հետ: Խոսքը և բառերը ընկալել տալու նպատակով պետք է երեխաներին ցույց տալ հետաքրքիր, վառ, շարժվող առարկաներ: Մեծի խոսքը երեխայի բոլոր հետաքրքրությունների և հաճելի անակնկալների մշտական աղբյուրն է:

Խոսքի կարողության առաջացման հետ միասին փոփոխություններ են կատարվում երեխայի հիշողության մեջ. այն դառնում է ոչ միայն կոնկրետ-իրավիճակային: Երեխան հիշում է նաև, երբ կոնկրետ իրավիճակ այդ պահին առկա չէ:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մի տարեկանին մոտ երեխայի խոսքային կարողության ձևավորման շրջանում, երբ փոքրիկը չի տեսնում մեծին, բայց լսում է նրա ձայնը, նրա մտապատկերում առարկայի և խոսքի զուգակցման ռեակցիան տեղի է ունենում 10-12 օրուշացումով: Իսկ երբ երեխան լսում և միաժամանակ տեսնում է մեծին, ապա առաջին օրվանից ընկալում է նրա խոսքը:

Պետք է անվանել ոչ միայն առարկան, որը երեխան դիտում է, այլև կատարվող գործողությունները: Սա «Ցուցադրում՝ անվանելով» մեթոդն է: Մեծը ոչ թե սոսկ պետք է միապաղաղ կրկնի առարկայի կամ խաղալիքի անվանումը, այլև ուսուցանվող բառն արտաբերի հատուկ ինտոնացիայով, կարճ ու ընդգծված դադարներով և բազմիցս: Այս դեպքում երեխան բառը շուտ է կապում գործողության հետ: Այս դեպքում երեխան ձգտում է շոշափել, շարժել իրեն հետաքրքրող առարկան, զգալ դրա համն ու հոտը:

Հիգիենիկ արարողությունների անշտապ գործողությունների կատարման ժամանակ նույնպես պետք է սովորեցնել հասկանալ խոսքը. օրինակ՝ անվանել և ցույց տալ հողաթափերը, հագուստի վրայի կոճակը, առաջադրանքներ տալ այդ կապակցությամբ և այլն:

Խաղի ժամանակ դաստիարակը պետք է մի քանի անգամ անվանի երեխայի կատարած գործողությունը (օրինակ՝ «զցեցիր», երբ երեխան գնդակը գցում է) և ցուցադրելով սովորեցնել դրա իմաստը:

Խաղ - պարապմունքներ

Վաղ տարիքի առաջին խմբում խաղ-պարապմունքների բաշխում ընդհանրապես չի նախատեսվում:

Այս խմբում պարապմունքները պետք է կազմակերպել երեխաների արթնության հարմար պահերին, երբ նրանք ունեն լավ տրամադրություն և պարապմունքին մասնակցելու ցանկություն:

Հատուկ կազմակերպվող խաղ-պարապմունքները միտված են որոշ շարժումների, հնչյուններն ընդօրինակելու, խոսքը հասկանալու և այլ կարողությունների ձևավորմանը:

Խաղ-պարապմունքներ կազմակերպվում են յուրաքանչյուր երեխայի հետ՝ օրական մի քանի անգամ: Դրանք հերթագայվում են ինքնուրույն խաղերի հետ և աստիճանաբար բարդացվում:

Խաղ-պարապմունքները կազմակերպվում են այնտեղ, ուր սովորաբար անցկացվում են կացում երեխաների առօրյան, արթնությունը, որպեսզի նոր իրադրության մեջ երեխաները չշեղվեն: Ավելի մեծ երեխաներին երբեմն կարելի է նստեցնել որոշակի դիրքով (սեղանի շուրջ, կիսաշրջանաձև), որպեսզի պարապելու տրամադրություն ստեղծվի:

Փոքր ենթախմբերով (5-6 երեխա) պետք է աշխատել այն դեպքում, երբ երեխաներն ունեն զգայական, շարժողական և շրջապատում կողմնորոշվելու տարրական կարողություններ:

Ըստ ծրագրային խնդիրների անցկացվում են հետևյալ պարապմունքները:

Անհատական խաղ-պարապմունքներ՝ 0-3 ամսական երեխաների հետ

Տեսողության և լսողության կենտրոնացման, ինչպես նաև մարդկանց խոսքին, շարժվող ու հնչող խաղալիքին հետևելու կարողությունների զարգացմանը միտված միջոցառումներ

Խոսել երեխաների հետ, արձագանքել նրանց արտաբերած ձայներին, երգել նրանց համար՝ առաջացնելով ժպիտ:

- Խթանել, որ երեխան փնտրի խոսողին և իր շուրջը շարժվողին:
- Միջավայրը փոխելու նպատակով տնից դուրս բերել:
- Խրախուսել երեխայի խաղը:

Գլուխը ուղղահայաց և հորիզոնական դիրքով պահելու կարողության զարգացմանը միտված գործողություն՝

Երեխային դնել փորի վրա և խթանել, որ բարձրացնի գլուխը:

Ոտքերի հենումը զարգացնող վարժություն՝

Գլուխը ուղղահայաց պահող երեխային բռնել թևերի տակից, թեթևակի բարձրացնել և իջեցնել՝ ջանալով առաջացնել ոտքերի հրում:

Անհատական խաղ-պարապմունքներ 3-6 ամսական երեխաների հետ

Տեսողական և լսողական ընկալումների միջև կապերի ստեղծում

- Երեխայի ուշադրությունը կենտրոնացնել՝ որոնելու փոքր ինչ հեռվից լսվող ձայնի աղբյուրը և հետևելու խոսակցին:
- Պտտվելով երեխայի շուրջը, խոսելով նրա հետ և ձայնակցելով նրան, խթանել գլուխը շրջելու նրա ջանքերը:

Տեսողական և լսողական տարբեր տպավորություններն առանձնացնելու կարողությունների զարգացում

- Խոսել երեխայի հետ՝ փոխելով ձայնի տոնը, առաջացնել տարբեր խաղալիքների հնչյունները լսելու ձգտում,

• ցույց տալ տարբեր դիրքով դրված գեղեցիկ, վառ գույնի, մեծությամբ և չափի խաղալիքներ:

Դրական հուզական վիճակի պահպանում

- Չաճախակի, մեղմ ձայնով և անուշ ժպիտով խոսել երեխայի հետ
- Երգել և ընթերցել նրա համար
- Պահպանել ձայների ու շարժումների ընդհանուր աշխուժություն և ծիծաղ
- Խաղալ երեխայի հետ «Ծափիկ-ծափիկ», «Ծիկ-ծիկ»

Խրախուսել երեխայի պատասխան ձայները, գոգոցը և թոթվանքը

- Երեխայի հետ արտասանել հնչյուններ՝ սպասելով, որ նա ականջ դնելուց հետո կրկնի դրանք:
- Դիմելով երեխային՝ կրկնել նրա արտասանած առանձին վանկերը (մամա, բաբա, պապա, տատա...) և մղել նրան՝ կրկնելու դրանք:

Խաղալիքներով և առարկաներով կատարվող տարբեր գործողություններ

- Երեխային տրամադրել համապատասխան խաղալիքներ:
- Խրախուսել տարբեր դիրքերից մեկ և երկու ձեռքով խաղալիքներ վերցնելու, բռնելու և պահելու ջանքերը:
- Երեխային տրամադրել գործողությունների անհրաժեշտ ազատություն:

Սողալով առաջ գնալը նախապատրաստող գործողություններ

- Երեխային դնել փորի վրա, որպեսզի նա վարժվի մարմնի վերին մասը բարձրացնելու և պահելու դիրքերին:
- Խթանել, որ երեխան մեջքի վրայից շրջվի փորի վրա, սողալով գնա դեպի խաղալիքը և մոտենա մեծահասակին:

- Շարունակել՝ ուղքերով հենվելու կարողության ձևավորումը. բռնել երեխայի թևերի տակից, թեթևակի կանգնեցնել և «հուշել» հրվելու ջանքեր:

Երաժշտական խաղ-պարապմունքներ

Երգելով կամ մետաղաֆոնի վրա կատարելով ուրախ ու հանգիստ մեղեդիներ, երեխաներին պահել ընդհանուր կենսուրախության և աշխուժության մթնոլորտում (անկեղծ ժպիտով կատարել եռանդուն շարժումներ). հրահրել ու խրախուսել՝ ձայնի աղբյուրը գտնելու, ձեռքերը և ուղքերը շարժելու, գդգդալու նրանց ջանքերը:

Անհատական խաղ-պարապմունքներ՝ 6-9 ամսական երեխաների հետ
խոսքը հասկանալու և տպավորությունները հարստացնելու կարողությունները զարգացող միջոցառումներ

- Աջակցել երեխայի խոսքի զարգացմանը՝ անվանելով նկարները և խաղալիքները:

- Սովորեցնել հայացքով գտնել որոշակի տեղում դրված ծանոթ առարկան:

- Սովորեցնել «ծափիկ-ծափիկ», «տուր ձեռքդ», «ցտեսություն» խաղ-ոտանավորների շարժումները՝ ցուցադրելով, ապա՝ անվանելով, այնուհետև՝ միայն մեծի խոսքով:

- «Թաքստոց» խաղի միջոցով ծանոթացնել երեխաների և մեծերի անուններին:

- Կերակրելիս, հագցնելիս, լողացնելիս, խաղալիս և զբոսնելիս մշտապես խոսել երեխայի հետ:

- Ցուցադրել նկարազարդ էջեր և փոքրիկի հետ խոսել նկարի մասին:

Թոթովանքը և պարզ վանկերն ընդօրինակելու կարողության ձևավորում

- Խթանել արդեն իմացած, մեծի արտասանած հնչյունների ու վանկերի ընդօրինակման երեխայի փորձերը:

- Առաջացնել հնչյունների նոր զուգակցումներ և վանկեր ընդօրինակելու ցանկություն:

- Խրախուսել երեխաների՝ մեծահասակի տարբեր ձայնային հնչերանգներին արձագանքելու ջանքերը:

Առարկաներով գործողություններ կատարելու կարողության և զգայական ընկալումների զարգացում

- Գործողությունների ցուցադրմամբ և խոսքով, ապա միայն խոսքով՝ գլորել գնդակը, խաղալիքներ-առարկաները հանել կաղապարից, դնել տեղը, տեղավորել արկղի մեջ, բացել - փակել տուփը և այլն: Միաժամանակ երեխայի ուշադրությունը հրավիրել խաղալիքից արձակված ձայներին:

Շարժումների զարգացում

- Խթանել երեխայի՝ մեծին կամ խաղալիքին մոտենալու ջանքերը («Արի՛ ինձ մոտ», «Նստիր» և այլն):

Խմբային խաղ-պարապմունքներ՝ 5-6 -ից 9-10 ամսական երեխաների հետ

Խոսքը հասկանալու կարողությունը զարգացնող հնարներ

- Ծանոթացնել երեխաների անուններին, առարկաների, գործողությունների անվանումներին: Այդ նպատակով անցկացնել խաղմարզանքներ՝ «Ով ինչ է անում», «Պահմտոցի», «Ծափիկ-ծափիկ», «Ծիվ-ծիվ, թըռ՝ տատոնց տուն», «Ցու՛յց տուր»...:

Երեխաների ուշադրության կենտրոնացում և գվարձանքների կազմակերպում

- Լարվող առարկաների ցուցադրում՝ երաժշտական հոլ, խաղ «Կհասնեն-կհասնեն»

- Լսել զանգերի բարձր և ցածր ղողանջները, մեծերի կատարմամբ պարային և հանգիստ եղանակներ, երգեր՝ արձագանքելով ու կատարելով համատեղ շարժումներ

- Դիտել երաժշտությամբ ուղեկցվող շարժումներ՝ մեծերի կատարմամբ դրոշակներով, թմբուկներով

- Իրենց նախաձեռնությամբ նույնպես պետք է կատարել պարզ շարժումներ, թափահարել ձեռքերը, հնչեցնել չխկչխկանը, ծափ տալ պարային երաժշտության ներքո

Անհատական խաղ-պարապմունքներ՝ 9-12 ամսական երեխաների հետ

Մեծի խոսքը հասկանալու և շրջապատում կողմնորոշվելու կարողության զարգացում

- Մեծի հրահանգով՝ երեխան մի շարք խաղալիքներից գտնում է մեկը՝ արջուկ, տիկնիկ, բերում-փոխանցում է մեծ տիկնիկը, ցույց տալիս, անվանում այն:

- Միննույն գործողությունը կատարելու հմտության ձևավորման վարժանքներ՝ վարել մեքենա, սայլակ, կերակրել տիկնիկին, շնիկին:

Առարկաների և մարդկանց վերաբերյալ պատկերացումների ամրապնդում

- «Հրաշալի պարկ» խաղ-պարապմունքների շարքի կազմակերպում և անցկացում:

- Հասկանալ առարկաներով գործողությունները և կատարել. «Բա՛ց արա», «Փակի՛ր», «Բե՛ր», «Տա՛ր», «Վերցրո՛ւ, «Հագի՛ր»:

-
- «Պահմտոցի» խաղի միջոցով շարունակել ճանաչել և անվանել շրջապատի առարկաների անվանումները և մարդկանց անունները:

Ակտիվ խոսքի զարգացում

- Երեխաներին դրդել արտասանել ծանոթ և անծանոթ հնչյուններ ու բառեր:

- Երեխաներին վարժեցնել, որ շփման ժամանակ նրանք նմանակեն դիմախաղ, ժեստեր, արտասանեն հաճախ լսած բառերը կամ իմաստավորված հնչյունակապակցությունները (ամամ, բայբայ...):

Առարկաներով գործողություններ կատարելու կարողության զարգացում

- բացել և փակել տարբեր խաղալիք - անոթներ,
- ձողի վրայից հանել և հագցնել օղակը,
- խորանարդիկները դնել իրար վրա,
- օրորել տիկնիկին, կերակրել կատվին և կատարել այլ պարզ գործողություններ:

Ինքնուրույն քայլքին տիրապետելու համար վարժանքներ

- Երկու, ապա մեկ ձեռքից բռնած երեխային օգնել՝ գնալու դեպի խաղալիքը,
- խրախուսել դեպի խաղալիքը գնալու երեխայի ինքնուրույն փորձերը:

Երեխայի տրամադրությունը բարձրացնող հնարներ

- Զվարճանքների բազմազան ձևեր՝ «Պահմտոցի», «Կաշաղակ», «Եկա-եկա» և այլն:

**Խմբային խաղ-պարապմունքներ՝ 9-10 ամսականից 1 տարեկան
երեխաների հետ**

***Խոսքը հասկանալու և շրջապատում կողմնորոշվելու կարողու-
թյունը զարգացող վարժանքներ***

- Կատարելով առաջադրանքը՝ ցույց տալ տարբեր տեղերում դրված խաղալիքներ:

- Գործողության մեջ դնել սյուժետային խաղալիքներ, ընդօրինակել հնչյունակապակցությունները:

Երեխաների շարժումները զարգացնող հնարներ

- Կատարել գնդակով խաղեր, նետումներ:

- Կազմակերպել խաղ-զվարճություններ՝ «Հասա-հասա», փուչիկ-ների նետում, լարովի խաղալիքներով խաղեր:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Այս տարիքում երեխայի օրգանիզմը բուռն կերպով աճում և զարգանում է. ձևավորվում են շարժողական ակտիվությունը և զգայաշարժողական կողմնորոշումը:

Այս տարիքի երեխաներին բնորոշ են ձեռքերի և ոտքերի ակտիվ շարժումները, դրանց տարբերակված բնույթը, մկանները տևականորեն կծկելու, պառկած դիրքից շրջվելու, չորեքթաթ քայլելու, նստելու, նստած դիրքում շարժողական գործողությունների տարրեր կատարելու, մատներով առարկաներ վերցնելու և բռնած պահելու, մեծի օգնությամբ կանգնելու, մարմնի դիրքը պահելու ունակություններ:

Այս խմբի երեխաների հետ շարժողական գործողություններ կատարելիս պետք է հաշվի առնել նրանց ֆիզիկական զարգացման աճը և տարիքային առանձնահատկությունները:

Վաղ տարիքի առաջին խմբի երեխաների ֆիզիկական դաստիարակության խնդիրներն են՝

- նպաստել երեխաների ֆիզիկական զարգացմանը, առողջության ամրապնդմանը,

- ապահովել երեխաների շարժումների ձևավորումը՝ ձեռքերով և ոտքերով ակտիվ շարժումներ կատարելու, գլուխը պահելու, պառկած դիրքում շրջվելու, չորեքթաթ քայլելու, սողալու, նստելու, կանգնելու, մարմնի դիրքը պահելու կարողությունները,

- գրավել երեխաների ուշադրությունը խաղալիք-առարկաներով, նրանց մղել դրանք զննելու (հարվածել, հրել, գլորել, շրջել),

- զարգացնել շարժումները, զգայաշարժողական (սենսոմոտորային) ակտիվությունը, տարածության մեջ տեղաշարժվելու ունակությունը,

- նպաստել առարկաներով գործողություններ կատարելու ձևավորմանը՝ նստած դիրքում առարկաները բռնել, վերցնել, զցել, նետել և այլն:

Շարժումների զարգացումը

Ծնված օրից մինչև 3 ամսական

- Երեխային վարժեցնել՝ մեծի ձեռքերին, փորի վրա ուղղահայաց դիրքով պառկած պահել գլուխը:

- Երեխային պահելով թևատակերից բռնած՝ ուղղահայաց դիրքով, սովորեցնել նրան՝ հատակից ոտքերով հրվել դեպի վեր:

- Փորի վրա պառկած դիրքով / 2-3 շաբաթական/ գլուխը բարձրացնել, պահել և շրջել:

- Երեխային վարժեցնել՝ փորի վրա պառկած, ոտքերը կախ վիճակում, ուղղել ողնասյունը և ոտքերը:

- Կատարել երեխայի ոտնաթաթերի մատների շարժումներ. ծալել և բացել ոտնաթաթերի մատները, հեռացնել և մոտեցնել ոտնաթաթերը:

- Երեխային վարժեցնել՝ ձեռքերով ձգվել դեպի կախված առարկան՝ ձգտելով դիպչել դրան,

- Արձագանքելով մեծերի ձայնին՝ երեխան եռանդով շարժում է ձեռքերը և ոտքերը:

- Մեջքի և փորի վրա պառկած դիրքից ոտքերով հրվել հենարանից:

3 ամսականից մինչև 5-6 ամսականը

- Զարգացնել երեխայի շարժումները և նախապատրաստել նրան սողալով առաջ շարվելուն:

- Ամրապնդել երեխայի՝ փորի վրա պառկելու կարողությունը՝ հենելով նրան ձեռքերի ափերին:

- Երեխային փորի վրա պառկեցնել, նախաբազկի վրա հենելով, իրանը բարձրացնել այդ դիրքով (3-4,5 ամսականում) և բարձրանալ ուղղված ձեռքերի վրա (5,5 ամսական),

- Կոփել երեխայի ձեռքերի դաստակները՝ նրան վարժեցնելով բռնել տարբեր առարկաներ:

- Երեխային սովորեցնել մեջքի վրա պառկած դիրքից շրջվել կողքի վրա (4 ամսական), մեջքի վրա պառկած դիրքից շրջվել փորի վրա (5 ամսական), փորի վրա պառկած դիրքից՝ մեջքի վրա (6 ամսական):

- Վարժեցնել երեխային՝ սողալ դեպի խաղալիքները, իրեն կանչող մեծը:

- Վարժեցնել՝ մեջքի վրա պառկած վիճակում ոտքերը ծալել և ուղղել, ձեռքերը ծալել և ուղղել:

- Ջարգացնել ոտքերով հենվելու կարողությունը՝ երեխայի թևերի տակից բռնած, ուղղահայաց դիրքով պահելով:

- Սովորեցնել երեխային՝ ոտքերով ամուր հենվել հատակին (5 ամսական):

- Ջարգացնել հավասարակշռությունը պահելու կարողությունը՝ երեխային ճոճել ուղղահայաց և հորիզոնական ուղղություններով:

- Ջարգացնել առարկաներով գործողություններ կատարելու կարողություն. երեխան ձեռքերն ուղղում է դեպի խաղալիքը, բռնում է այն և պահում երկու ձեռքով, մեկ ձեռքով, խաղալիքը թափահարում է, գցում, նետում:

- Երեխան ակտիվ շարժումներով արտահայտում է հուզական ռեակցիաներ՝ շփման ընթացքում, երգ և երաժշտություն ունկնդրելիս:

5-6 ամսականից մինչև 9 -10 ամսական

- Նպաստել ձեռքերի զարգացմանը՝ երեխային դրդելով մատներով խաղացնել առարկաները,

- Սովորեցնել սողալ՝ կանչելով և հրապուրելով խաղալիքով (6 ամսական), ինքնուրույն սողալ (7 ամսական):

- Խթանել երեխայի նստելու ձգտումը՝ երկու կամ մեկ ձեռքի օգնությամբ, ինքնուրույն նստելու, պառկած դիրքից նստելու և պառկելու, նստելու՝ առանց բռնելու:

- Օգնել երեխային կանգնելու՝ երկու կամ մեկ ձեռքով բռնելով հենարանից:

- Սովորեցնել կանգնել և նստել՝ ձեռքերով բռնելով հենարանից (8 ամսական):

- Օգնել երեխային՝ զարգացնելու արգելքի կողքով անցնելու կարողությունը՝ հենվելով ձեռքերով, անցնել մի առարկայից մյուսին:

- Վարժեցնել երեխային՝ քայլել մեծի օգնությամբ՝ թևերի տակից կամ երկու ձեռքերից բռնած, հենարանից բռնելով:

- Ջարգացնել առարկաներով գործողություններ կատարելու կարողությունը. առարկաները տեղափոխել ձեռքից ձեռք, նստել, թափահարել, օգել, հարվածել, սեղմել ռետինե խաղալիքը, գլորել գնդակները:

- Սովորեցնել երեխային խաղալիքները հանել և դնել մեծ առարկաների մեջ:

- Մեծի ազդանշանով (հրահանգով) կատարել՝ «Ծափիկ-ծափիկ», ձեռքերը մեկնել, առարկան փոխանցել, նստել, բարձրանալ:

- Հետևել, որ երեխան կարողանա պահպանել հավասարակշռությունը՝ նստած, կանգնած և շարժման ընթացքում:

9-10 ամսականից մինչև 12 ամսական

- Ջարգացնել նախկինում յուրացրած շարժումները՝ սողալ, մագրկցել, նստել՝ բռնելով որևէ առարկայից (կանգնել, վերկենալ) և նստել:

- Ձևավորել քայլելու կարողությունը. քայլել՝ առարկաները բռնելով, մեկ առարկայից մյուսին հասնելով, քայլել երկու ձեռքերի օգնությամբ, ազատ կանգնել և նստել:

- Ամրապնդել երեխայի՝ կանգնելու և քայլելու կարողությունը, մեկ առարկայի վրայից անցնել մյուսին, տարածության մեջ կողմնորոշվել, անցկացնել խաղեր՝ «Վերցրո՛ւ խաղալիքը», «Բե՛ր տիկնիկը», «Արի՛ ինձ մոտ», «Հասի՛ր շնիկին» և այլն:

- Վարժեցնել երեխային՝ ձեռքերով հենարանից բռնած բարձրանալ և իջնել աստիճանի վրայով:

- Ամրակայել երեխայի՝ առարկաներով ակտիվ գործողություններ կատարելու կարողությունը. մեկ առարկան դասավորել մյուսի մեջ, բացել

և փակել արկղի կափարիչը, մեկ առարկան գցել մյուսի վրա, խորանարդիկը դնել խորանարդիկի վրա և այլն:

- Պայմաններ ստեղծել երեխաների համար՝ համատեղ գործողություններ կատարել, և խրախուսել այդ ընթացքում նրանց կողմից դրսևորվող բավարարվածության ու հրճվանքի ցույցերը,

- Օժանդակել պարային պարզ շարժումների կատարմանը՝ ուրախ, առույգ, հանգիստ երաժշտության հնչյունների ուղեկցությամբ:

Կյանքի առաջին տարվա վերջում երեխան պետք է կարողանա՝

- նստած դիրքում մնալ առանց օգնության,
- փորի վրա պառկած դիրքով շարժվել առաջ և հետ,
- մեկ դիրքից տեղաշարժվելով՝ ընդունել մեկ այլ դիրք,
- տեղաշարժվել չորեքթաթ դրությամբ (չոչ անել),
- կանգնել օգնությամբ,
- քայլել մեկ ձեռքից բռնած,
- նստած դիրքում կատարել շարժողական գործողության տարրեր՝ մատներով բռնել և վերցնել առարկան, երկու ձեռքով բռնած առարկան պահել, հրել, վայր գցել, փոքր գնդակը հրել, գցել,
- նստած դիրքից՝ ինքնուրույն տեղաշարժվել:

Մեթոդական ցուցումներ

Այս տարիքի երեխաների ֆիզիկական զարգացման համար անհրաժեշտ են մարզարաններ (ինչպես անհատական, այնպես էլ մի խումբ երեխաների համար): Հարկավոր է այնտեղ ունենալ վառ գույներով տարբեր առարկաների հավաքածուներ (խաղալիքներ, չխկչխկաններ, օղակներ, գնդակներ, գնդիկներ և այլն): 6 ամսական երեխաների համար հարկավոր է ունենալ ավելի ընդարձակ տարածություն և հատուկ մարմնամարզական պարագաներ՝ գլորաններ, ուղեգորգեր, տախտակներ, սանդուղքներ, գրկող բազմոցներ և այլն:

Խմբասենյակները պետք է լինեն լուսավոր և ընդարձակ:

Երեխաների համար անհրաժեշտ է ստեղծել իրավիճակներ, որոնք ուղղված են տեսողական, լսողական, շոշափելիքի զգայարանները, զգայաշարժողական կողմնորոշումը զարգացնելու, հավասարակշռությունը պահպանելու նպատակով. հարկավոր է նրանց մղել զննողական գործողությունների կատարման:

Երեխայի զգայական փորձը հարստացվում է, երբ նրա ձեռքի ափի մեջ դրվում են մեծահասակի մատը, գնդիկը, ժապավենը և այլ՝ տարբեր մեծության, չափի ու ձևի առարկաներ, որոնք հարմար են բռնելու համար:

Երեխայի ուշադրության գրավումը ծայնային ազդանշանով, խաղալիքների ցուցադրումը և անվանումը առաջացնում են հուզական արձագանքներ, ցանկություն՝ բռնելու առարկան, ձգել-քաշելու դեպի իրեն, բարձրացնելու և թեքելու գլուխը: Այդ նպատակով օգտագործվում են երեխայի բռնելու համար հարմար օղեր, գնդիկներ, փայտիկներ, կախովի, կերպարային և սյուժետային խաղալիքներ, որոնք տեղադրվում են երեխայից 10-15 սմ հեռավորության վրա:

Երբ երեխան, մեծահասակի ձեռքերում՝ պահվում է ուղղահայաց դիրքով, կարելի է նրան ցուցադրել միջին չափի վառ խաղալիքներ:

Խորհուրդ է տրվում խաղալիքները տեղադրել այնպես, որ նա կարողանա շրջվել ու ձգվելով հասնել դրանց:

Մարզարանի մեջ գտնվող վառ, գունավոր խաղալիքները խթանում են նաև երեխայի սողալով շարժվելու ջանքերը: Իսկ մարզարանի արգելքի վրա գտնվող խաղալիքները նրա մեջ ցանկություն են առաջացնում կանգնել՝ ձողից բռնելով:

Երեխան խաղալիքի մասերն անջատում է իրարից, ձողի վրայից հանում է օղակները, արկղի միջից հանելով խորանարդիկները՝ իրար վրա է դնում միանման և տարբեր առարկաներ: Գործողությունների կրկնությունները զարգացնում են երեխաների ինքնուրույնությունը:

Այս տարիքի երեխաների համար անհրաժեշտ են հատկապես մերսուլներ և մարմնամարզություն: Մարմնամարզություն կատարելիս պետք է հաշվի առնել, որ սկզբից կատարվում են մարմնի առանձին մասերի պասիվ վարժություններ, իսկ հետո անցնում են ավելի ակտիվ, ինքնուրույն շարժումների: Վարժություններն ընտրվում են՝ հաշվի առնելով երեխաների օրգանիզմի տարիքային և ֆիզիոլոգիական հնարավորությունները:

Տարվա վերջում վարժությունների համալիրի մեջ ընդգրկվում են այնպիսի վարժություններ, որոնք նպաստում են ձևավորելու երեխայի մարմնի ուղիղ դիրքը, ինչպես նաև ճկունությունը՝ կքանստելու, իրանի թեքելու և ուղղվելու համար:

Ուղիղ կանգնած, նստած և պառկած դրությունից վարժություններ կատարվում են նաև օգտագործելով մանր առարկաներ:

Այս տարիքային խմբի երեխաների շարժումների զարգացման հետ կապված իրականացվում են ամենօրյա մերսուլ, խաղ պարապմունքներ՝ անհատական կամ փոքր խմբերով՝ երկու-երեք երեխայի հետ միասին, 6-10 րոպե տևողությամբ:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱՎԿՈՒԹՅՈՒՆ

0-3 ամսական

Ծնված օրվանից, հայտնվելով բազմաթիվ ծայների, ինչպես նաև երաժշտության հնչյունների աշխարհում, փոքրիկը սկսում է ականջ դնել իրեն շրջապատող ծայներին: Նրա առաջին երաժշտական տպավորությունները, որոնք էական նշանակություն են ստանում երեխայի հետագա կյանքի համար, առնչվում են, երաժշտական խաղալիքներին և իրեն հարազատ անձնավորության երգեցողությանը:

Աստիճանաբար փոքրիկը սկսում է ընկալել երգի առանձին հնչերանգները, ինչն էլ հետագայում դառնում է մեծահասակի հետ հնչյունահուզական շփման միջոց:

Նա անտարբեր չէ նաև հաճելի ծայն ունեցող մանկական նվագարանների հնչողության հանդեպ:

3-6 ամսական

Աստիճանաբար երեխան ավելի է խորասուզվում երգերի երաժշտական հնչյունների մեջ. նրա ուշադրությունը դառնում է ավելի կայուն, երաժշտական ընկալումը՝ պատկերավոր: Եթե երեխան կարողանում է ունկնդրել անդադար 20-30 վայրկյան, ուրեմն՝ երաժշտության ունկնդրումը դարձել է նրա կյանքի ուղեկից:

Ունկնդրմանը զուգահեռ երեխան ցուցաբերում է նաև շարժողական ակտիվություն: Առավել մեծ ուրախություն են նրան պարզևում խաղային շարժական վարժությունները, երբ մեծահասակը բռնում է երեխայի դաստակներից և երաժշտության ռիթմին համապատասխան ծալում ու բացում դրանք:

6-9 ամսական

Այս փուլում արդեն երեխան կարողանում է ինքնուրույն նստել. նա իրեն շրջապատող աշխարհը տեսնում է այլ աչքերով, դառնում է հետաքրքրասեր և բազմազանություն սիրող, առավել ուշադրությամբ է հետևում նվազարան նվազող մեծահասակին:

Երեխան սկսում է գղզղանքով արծազանքել մեծահասակի երգին: Երգի մեջ առանձնացնում է տխրության և ուրախության հնչերանգները: Երաժշտության հնչյունների ներքո հաճույքով կատարում է ռիթմիկ շարժումներ, պարի տարրեր:

9-12 ամսական

Փոքրիկը սկսում է քայլել սենյակով. նա կամաց-կամաց իրեն շրջապատող աշխարհը «նոտեցնում» է իրեն: Ինքնուրույն շարժվում է դեպի հնչող նվազարանը, հաճույքով ունկնդրում ծանոթ կամ նոր երգերը:

Երաժշտության հետ զուգակցվող շարժումներն ավելի են հետաքրքրում երեխային, և նա առավել ակտիվորեն է ընկալում շարժումներն ու երաժշտության հնչյունները: Այդ կերպ նա հաճույքով ներգրավվում է պարային շարժումների մեջ:

Երեխային սովորաբար դուր է գալիս ունկնդրել երկմասանի ստեղծագործություն. առաջին մասը լինելու է հանգիստ, իսկ երկրորդը՝ ուրախ և աշխույժ: Նա դրան արծազանքում է ակտիվ շարժումներով, իսկ երաժշտության ավարտի հետ վերջացնում է նաև իր պարը:

Տարեվերջին երեխան երաժշտության պահանջ է ունենում և դառնում է դրա նկատմամբ խիստ զգայուն:

Խիստ կարևոր է կյանքի առաջին տարում երեխաների մեջ զարգացնել երաժշտության հանդեպ հուզական արծազանք, կայուն լսողական ուշադրություն, երաժշտությունը լսելու, որոշակի շարժումներ կատարելու և մտապահելու կարողություն:

Ձարգացման խնդիրները

0-3 ամսական

- Երեխայի շրջապատում պետք է հնչի մաքուր, մեղմ, բարեհունչ երաժշտություն:

- Երեխայի կենսազործունեության մեջ հարկավոր է ավելացնել շփումը մեծահասակի հետ՝ խոսքային և երգային ձևով:

- Երգելու ընթացքում անհրաժեշտ է փոքրիկին ծանոթացնել իրեն շրջապատող աշխարհին. դրանք կարող են լինել խաղալիք-առարկաներ՝ նապաստակ, արջուկ, մանկական հնչեղ խաղալիքներ՝ չըխկչըխկան, զանգ:

3-6 ամսական

- Ձարգացնել լսողական կենտրոնացումը, խմբասենյակը ձևավորել համապատասխան գործիքներով:

- Մեծահասակի երգելու ընթացքում շարունակել զրուցել փոքրիկների հետ, նրանց հիշեցնել ու թվարկել իրենց շրջապատում ներկա՝

- հարազատ մարդկանց անունները,

- խաղալիքների (տիկնիկ, փիսիկ, շնիկ),

- մանկական նվագարանների (շվի) անվանումները:

- Ծանոթացնել երգի ուրախ և տխուր հնչերանգներին:

- Խթանել երաժշտության ուղեկցությամբ տարրական շարժողական վարժությունների կատարման փորձերը:

6-9 ամսական

- Այս հասակում կարելի է արդեն երեխաներին հրապուրել մատչելի բովանդակությամբ, հաճելի հնչողությամբ և իրենց տարիքային

առանձնահատկությանը համապատասխան տևողությամբ վոկալ ու գործիքային երաժշտությամբ:

- Չարկավոր է ձգտել զարգացնելու երեխաների երաժշտական տարրական ընկալման նախադրյալները, խթանել՝ ունկնդրված երաժշտությանը հուզականորեն արձագանքելու նրանց ճիգերը:

- Երգելու ընթացքում հարկավոր է շարունակել ծանոթացնել շրջակա աշխարհին: Այդ ընթացքում տրվում են՝

- հարազատ մարդկանց, փոքրիկին խնամող այլ մեծահասակների անունները,

- խոսվում է նրանց մասին,

- թվարկվում են ընտանի կենդանիները՝ խաղալիքները՝ թռչուններ, կենդանիներ,

- մանկական նվագարաններ՝ մետաղաֆոն:

- Անհրաժեշտ է առանձնացնել և երեխաների ուշադրությանն արժանացնել դաստիարակի կողմից տրվող հարցի երգչային հնչերանգը, միաժամանակ շարունակել ծանոթացնել մեղեդու ուրախ և թախծոտ հնչերանգներին և խթանել նրանց պարզ վոկալ վերարտադրումների փորձերը:

- Երաժշտության ուղեկցությամբ երեխաներին ընդգրկել պարզագույն խաղային գործողությունների մեջ:

- Ընտելացնել տարրական շարժումների կատարմանը երաժշտության և ծափերի զուգակցմամբ:

9-12 ամսական

- Ջարգացնել լսողական կենտրոնացումը, ուրախություն պարզաբերել երեխային՝ շփվելով գեղեցիկ երաժշտության հետ:

- Ունկնդրման ընթացքում շարունակել զարգացնել երաժշտության պարզագույն ընկալումը, խրախուսել հուզական արձագանքը:

- Մեծահասակի երգելու ընթացքում շարունակել ծանոթացնել շրջապատող աշխարհին՝ ձևավորելով բարյացակամ վերաբերմունք՝

-
- իրեն շրջապատող հարազատ մարդկանց,
 - ընտանի կենդանիներին՝ շուն,
 - բնությանը՝ ծաղիկ,
 - խաղալիքներին՝ աքլոր, ձիուկ,
 - նվազարաններին՝ դաշնամուր:
 - Ամրապնդել երգչային հնչերանգի ընկալումը, խոսքի մեջ հարցի, պատասխանի հնչերանգները և այլն:
 - Ընտելացնել պարզագույն ակտիվության, ձայնակցել երգերի ավարտին:
 - Կատարել պարզագույն խաղային շարժումներ:
 - պարային ռիթմերի ուղեկցությամբ կատարել պարզ պարային շարժումներ՝ ծափեր, դոփյուններ, թեթև կքանիստեր:

Ձարգացման ցուցանիշները

0-3 ամսական երեխան կարող է՝

- Տարբերել զանգակի (զանգ, զանգուլակ) և չխկչխկանի հնչողությունը,
- ծանոթ մարդու երգը անծանոթից,
- հայացքով որոնել հնչող խաղալիքը,
- աշխուժորեն արձագանքել երգի հաճելի հնչերանգներին,
- ժպտալ, շարժել ձեռքերը:

3-6 ամսականում կարող է՝

- հայացքով գտնել հնչող առարկան,
- կարճ ժամանակով (10-45 վայրկյան) կենտրոնանալ մեծահասակի երգի կամ երաժշտության ուղղությամբ
- որպես արձագանք մեծահասակի երգին՝ աշխուժանալ, ժպտալ, գղզղալ,

- ուրախանալ մեծահասակի հետ տարրական շարժումների կատարումից:

6-9 ամսականում կարող է՝

- ուշադիր և հետաքրքրությամբ լսել մեծահասակի երգը կամ երաժշտությունը, տարբերակված հույզերով արձագանքել հանգիստ և աշխույժ երաժշտությանը,

- արձագանքել մեծահասակի երգին՝ տարրական երգչային ձայներանգին,

- հուզականորեն արձագանքել մեծահասակի կողմից ցուցադրված իրեն ծանոթ խաղային գործողությանը,

- փորձել նմանակել մեծահասակների տարրական շարժումները՝ երաժշտության տակ (ծափ տալ և այլն):

9 -12 ամսականում (կյանքի առաջին տարվա ավարտին)՝

- երեխան անհամբերությամբ նայում է մեծահասակին, երբ նա պատրաստվում է երգել կամ նվագել, ցուցաբերում է որոշ լսողական կենտրոնացում երաժշտության ունկնդրման ընթացքում,

- տարբեր հուզական արձագանք է ցուցաբերում հակադիր բնույթի, արագ կամ ուժգին երաժշտության նկատմամբ,

- հաճույքով է լսում մեծահասակի երգը և արտաբերում որոշ ձայնանմանակումներ,

- ցուցաբերում է ակտիվություն.

- երգչային գործունեության մեջ զղզղում է, թոթովում, վերարտադրում է պարզագույն երգչային ձայնանմանակումներ, երգի վերջում ձայնակցում՝ «հեյ»,

- խաղային գործունեության մեջ կատարում է իրեն հասկանալի պարզագույն շարժումներ (ծալում է մատիկները, վազում է և այլն),

• պարային գործունեության մեջ զգացմունքով կատարում է տարրական պարային շարժումներ՝ ծափեր, դոփյուններ ոտքերով, թեթև կքանիստեր և այլն:

Երաժշտության նյութեր տարվա համար

- 1.«Փիսիկ» երաժշտ.՝ Ա.Լուսինյանի, խոսք՝ Ն.Միքայելյանի
- 2.«Էծիկ» երաժշտ.՝ Ժողովրդական, խոսք՝ Զ.Աղաբաբի
- 3.«Ջան ծաղիկ» երաժշտ.՝ Ժողովրդ. խոսք՝ Ն.Միքայելյանի
- 4.«Շնիկ» երաժշտ.՝ Ա. Լուսինյանի. խոսք՝ Ն.Միքայելյանի
- 5.«Ուրախ պար» երաժշտ.՝ Ա.Մանուկյանի
- 6.«Ծափիկ–ծափիկ» երաժշտ.՝ հայկ. ժողովրդ.
- 7.«Դոփ դոփիկ» երաժշտ.՝ Ա.Օհանյանի, խոսք՝ Վ.Տալյանի
- 8.«Գնացք» երաժշտ.՝ Ա.Լուսինյանի
- 9.«Օր-օր» երաժշտ.՝ հայկ. ժողովրդ. խոսք՝ Ն.Միքայելյանի
- 10.«Նապաստակ» երաժշտ.՝ Է.Միհրանյանի, խոսք՝ Ս. Մուրադյանի
- 11.«Անձրև» երաժշտ.՝ և խոսք՝ Ա.Մանդակունյանի
- 12.«Տեսեք, ձյունը գալիս է » երաժշտ.՝ և խոսք՝ Ա. Մանդակունյանի
- 13.«Մայրիկ» երաժշտ.՝ և խոսք՝ Ա.Մանդակունյանի
- 14.«Կտկտան կոշիկներ» երաժշտ.՝ և խոսք՝ Ս.Վարդանյանի
- 15.«Փերի» երաժշտ.՝ և խոսք՝ Ս.Վարդանյանի
- 16.«Ծիտիկ» երաժշտ.՝ և խոսք՝ Ս.Վարդանյանի
- 17.«Գնդակով խաղ» երաժշտ.՝ Ա.Լուսինյանի, խոսք՝ Լ.Պողոսյանի, բեմ.՝ Կ.Ղազարյանի
- 18.«Նունիկի փիսիկը»երաժշտ.՝ Ա.Լուսինյանի, խոսք՝ Լ.Պողոսյանի բեմ՝ Կ.Ղազարյանի
- 19.«Ջան ծաղիկ» խոսք և երաժշտությունը՝ ժողովրդական

Մեթոդական ցուցումներ

Այս տարիքում երաժշտական դաստիարակության խնդիրները երգեցողության, ունկնդրման և երաժշտառիթմական շարժման բաժինների ուղղությամբ չեն սահմանազատված: Երգը ուղեկցում է երեխային իր ծնված օրվանից:

Արթուն ժամանակ մեծահասակը անընդհատ խոսում է երեխայի հետ, և երեխայի ձայնային արձագանքը զարգանում է նման շփման ընթացքում:

Երեքից չորս ամսականում երեխան արտաբերում է կոկորդային ձայներ, հինգ ամսականում երգչային ձայնավորներ՝ «ղունղունում» է, վեց ամսականում արտաբերում է «բա», «նա», «նա» վանկերը:

Երկուսուկեսից մինչև վեց ամսական երեխաների մոտ զարգանում է հնչյունների տարբերումը և ուշադիր լսելու ունակությունը. ծանոթ ձայնն անմիջապես գրավում է նրա ուշադրությունը, ուրախացնում և հանգստացնում նրան:

Չորս ամսականում երեխան շրջում է գլուխը ձայնի աղբյուրի ուղղությամբ: Այս տարիքում երեխայի ուշադրությունը պետք է հրավիրել երաժշտական ձայներին՝ երգել, խաղալ երաժշտական խաղալիքներով՝ առաջացնելով ուրախ տրամադրություն:

Վեց ամսականից հետո երեխան ականջ է դնում իր ձայնին, կրկնում է հնչյուններ, նմանակում է մեծերին, տարբերում ձայնի հնչերանգները: Այս հասակում երգեցողության միջոցով պետք է դաստիարակել երեխայի լսողության կենտրոնացումը, շարժողական և ձայնային արձագանքը:

Առաջին տարվա վերջին երեխան կարող է մեծերի հետ միասին կրկնել երկու հնչյունից բաղկացած պարզ մեղեդի:

Երեխան արձագանքում է տարբեր բնույթի երաժշտության. օրօրոցայինը նրան հանգստացնում է, նա ձայնակցում է մորը՝ արտաբերելով «ա, ա, ա,.....», պարային երաժշտությունն առաջացնում է շարժողական

արձագանք՝ ձեռքերի, ոտքերի շարժումներ՝ նա «պարուն է, զսպանակուն»:

Երեխան արդեն ընդունակ է մտապահելու և ճանաչելու մեղեդին և շարժումները, որոնք կապված են իրեն ծանոթ երգի հետ: Օրինակ՝ «Ծափիկ-ծափիկ»:

Ինը ամսականից մինչև մեկ տարեկանը պետք է շարունակել աշխատել երեխաների լսողական ուշադրության ուղղությամբ. նրանք պետք է կենտրոնանան երգերն ունկնդրելիս, երաժշտական խաղալիքի հնչողությունը լսելիս:

Կյանքի առաջին տարվա առաջին կիսամյակ

Դաստիարակը երեխայի կողմից երաժշտության ունկնդրման ժամանակ թեքվում է նրա կողմը՝ երգելով կամ նվագարանով կատարում մեղեդին. այդ կերպ հեշտությամբ կարելի է մոտենալ երեխային: Հենց որ երեխան կենտրոնացնում է իր ուշադրությունը հնչող ձայնի աղբյուրին, դաստիարակն անցնում է խաղահրապարակի մյուս կողմը, նվագում կամ երգում այնտեղ և հետևում՝ արդյոք երեխան արձագանքո՞ւմ է ձայնին, կամ հետևո՞ւմ է երգող դաստիարակին, հայացքով փնտրո՞ւմ է ձայնի աղբյուրը, թե՞ ոչ:

Ունկնդրմանը տրվում է 2-3 րոպե, որից 20-30 վայրկյանն անընդմեջ, մնացածը ընդմիջումներով:

Այս տարիքի երեխաների երաժշտական տպավորությունները ստեղծվում են ոչ թե երաժշտական ստեղծագործությունների բազմազանությամբ, այլ նույն երգի տարբեր հնչերանգային կատարումներով՝ երգ, մանկական նվագարան, երաժշտական խաղալիք:

Խաղերի և պարերի անցկացման ժամանակ դաստիարակը մեղեդին երգելիս միաժամանակ կատարում է գործողություններ՝ երեխաների ձեռքերով և ոտքերով՝ բացել, փակել և տարածել տարբեր ուղղություններով: Այս գործողությունները սովորաբար հաճելի պահեր են պարգևում

երեխաներին, և դա նրանք արտահայտում են աշխուժությամբ, ժպիտով, ուրախ ձայների արտաբերումով:

Երաժշտական խաղ-պարապմունքներ

Դաստիարակը երգելով կամ մետաղաֆոնով նվագելով ուրախ և հանգիստ մեղեդիներ՝ մղում է երեխային ընդհանուր կենսուրախության և աշխուժության, արձագանքելու ձայնի աղբյուրին՝ անկախ դրա տեղից: Նա խրախուսում է երեխայի գոգոցների, ոտքերի ռիթմիկ շարժումների կատարումը:

Կյանքի առաջին տարվա երկրորդ կիսամյակ

Ունկնդրման համար դաստիարակն ընտրում է երկու մեղեդի՝ հանգիստ և աշխույժ բնույթի: Ունկնդրումից առաջ դաստիարակը ցույց է տալիս երեխաներին երաժշտական նվագարանը, որով նա պետք է նվագի: Յետո 2-3 անգամ մեղեդին կատարվում է ընդմիջումներով:

Երբ երեխաները սկսում են նստել առանց օգնության, դաստիարակը կարող է ընդհատել մեղեդու նվագը, թաքնվել, ապա փոքր դադարից հետո ուրախ բացականչություններով դուրս գալ թաքստոցից ու նորից մանկական նվագարանով նվագել ծանոթ մեղեդին:

Երաժշտաշարժողական ցուցադրումներ

Դաստիարակը երաժշտության տակ երեխաներին ցույց է տալիս խաղալիքներով բազմազան շարժումներ. տիկնիկը պարում է, քայլում, վազում, քնում, ծիտիկը թռչում է, հատիկ է կտցում, ցատկում է այս ու այն կողմ և այլն: Երեխաները կարողանում են վերարտադրել որոշ շարժումներ: Երաժշտաշարժական ցուցադրումը կարելի է ավարտել նրանց գոր-

ծողություններով, օրինակ՝ հարվածներ դափին, ծափեր, դաստակների պտույտներ և այլն:

Խաղ-պարերն անցկացվում են այնպես, ինչպես առաջին կիսամյակում. ավելանում են երեխաների ցատկերը երկու ոտքի վրա, դաստիարակի ձեռքից բռնած ճոճումը մի ոտքից մյուսին:

Երեխաների կյանքի առաջին տարվա երաժշտական զարգացման արդյունքների մասին կարելի է դատել հետևյալ ցուցանիշներով.

- երեխաները լռում են և համբերատար նայում նվագարանին, որով նվագելու է դաստիարակը,

- կենտրոնանում են, հայացքներով հետևում նվագող կամ երգող դաստիարակին, որն աստիճանաբար հեռանում է երեխաներից,

- սպասողական նայում են թաքնված դաստիարակի կողմը, որտեղից հնչում է երաժշտությունը,

- հետաքրքրությամբ նայում են պարող դաստիարակին, որը, երեխային գրկած, փորձում է պարային շարժումներ կատարել, մարզարանում նստած կամ կանգնած երեխաները ձեռքերը մեկնում են դաստիարակին, կարծես հրավիրում են պարելու,

- աշխուժանում են, ուրախանում, ծիծաղում, երբ դաստիարակը կատակով դեն առ դեն հանդիպում է երեխային և ասում. «Քայլում է այժը», «Կբռնեն», «Փախի՛ր, փախի՛ր» և այլն,

- վերարտադրում են մեծահասակի շարժումները, որոնք տեսել են երաժշտաշարժական ցուցադրության ժամանակ,

- մնանակում են մեծահասակի հնչերանգը՝ երաժշտաշարժական ցուցադրության վերջում:

Երաժշտական պարապմունքներ

Հարկավոր է սովորեցնել ուշադիր լսել դաստիարակի երգը, ժողովրդական մեղեդիների կատարումները տարբեր նվագարաններով:

Վարժեցնել հուզականորեն արձագանքել հանգիստ և պարային բնույթի մեղեդիներին, լսել խաղալիքների հետ զուգակցվող երգեր:

Խթանել՝ խաղային բնույթի գործողությունները հուզականորեն արձագանքելու երեխաների ջանքերը, պարային բնույթի երաժշտության տակ ծափ տալ, դոփել, դաստիարակի ձեռքից բռնած ոտքերը հերթականությամբ բարձրացնել:

Երաժշտական պարապմունքներն անցկացվում են շաբաթական 3 անգամ, 10-15 րոպե տևողությամբ: Ի դեպ, որևէ առարկայի վրա ուշադրությունը կենտրոնացնել այս տարիքի երեխան կարող է 8-10 րոպե: Սակայն փորձերը ցույց են տվել, որ պարապմունքի ժամանակ կիրառվող շարժառիթները խթանում են երեխային՝ կենտրոնացնելու ուշադրությունը և մասնակցելու պարապմունքին 10-15 րոպե: Այն կարելի է անցկացնել նվագարկիչով, կամ դաստիարակի ու երաժշտության դաստիարակի հետ միասին:

Մեղմ, քնարական երաժշտություն կարելի է օգտագործել երեխաների քնի ժամին, որը կնպաստի նրանց հանգիստ քնին. բացի այդ, այն ունի նաև կազդուրիչ նշանակություն:

0-12 ամսական երեխայի զարգացման չափանիշներն ըստ ամիսների

Նորածնային շրջան

- Գործում են երեխայի բոլոր զգայարանները և բնածին ռեֆլեքսները:

- Նորածնային շրջանում երեխայի լիարժեք զարգացման համար ամենակարևորը ֆիզիկական պահանջների բավարարումն է՝ սնունդ, քուն, ջերմություն, չոր տակաշորեր:

Երեխան 0-2 ամսականում պետք է կարողանա՝

- սևեռել հայացքը,
- հայացքը մի առարկայից տեղափոխել դեպի մյուս առարկան,
- ցուցաբերել որոնողական ռեակցիա,
- դրսևորել բռնելու ռեֆլեքս,
- արձագանքել շրջապատի ձայներին,
- փորի վրա պառկած փորձում է բարձրացնել գլուխը (2 ամսականի սկզբում),
- ի պատասխան մեծահասակի շփմանը՝ ժպտալ,
- արձակել առաջին ձայները:

Պետք է անհանգստանալ, երբ՝

- չի արձագանքում վառ լույսին, ձայնային գրգռիչներին,
- քնում է ձեռքերը պարզած մարմնի երկարությամբ,
- փորիկի վրա պառկած, չի փորձում բարձրացնել գլուխը:

Պաստիարակի խնդիրն է՝

- հետևել և խթանել երեխայի զարգացմանը,
-

-
- օգնել նրան՝ հարմարվելու նոր պայմաններին, ձեռք բերելու նոր հմտություններ,
 - զարգացնել բնածին ռեֆլեքսները, որոնք կամային գործողությունների կատարման հիմք են հանդիսանում,
 - խորհրդակցելով մանկաբուժի հետ՝ ընտրել զարգացնող վարժությունների և մերսման համալիրներ,
 - հաճախակի օդափոխել երեխայի սենյակը (երբ երեխան սենյակում չէ),
 - կազմակերպել զբոսանքներ (ցանկալի է առավոտյան):

2-3 ամսական

- Այս շրջանը երեխայի համար համարվում է բեկումնային՝ նրա բոլոր շարժումները աստիճանաբար դառնում են ավելի գիտակցական:
- Պետք է հետևել երեխայի ֆիզիկական զարգացմանը և հոգեհուզական վիճակին:

Երեխան 2-3 ամսականում պետք է կարողանա՝

- ակտիվորեն արձագանքել մեծահասակի շփմանը՝ ժպտա, գղզղա, եռանդուն շարժի ձեռքերը և ոտքերը,
 - արձագանքի մոտեցող առարկաների ձայներին,
 - հայացքով մի քանի րոպե հետևել չխկչխկան խաղալիքի շարժմանը,
 - պառկած դիրքում բարձրացնել գլուխը՝ պահելով 1 րոպե, 3 ամսական հասակի վերջում՝ 2 րոպե,
 - 3 ամսականում փորիկին պառկած դիրքում, հենվելով նախաբազուկների վրա, փորձում է շրջվել կողքի կամ մեջքի,
 - 3 ամսականում կարողանում է իրեն պահել ջրի մեջ, ոտքի վրա,
 - ուղղաձիգ դիրքում գրկած, հենվում է կիսածալած ոտքերի վրա,
 - ուսումնասիրում է իր մատները, տանելով դրանք բերանը,
-

- կերակրման ժամանակ ցուցաբերում է անհամբերություն, բերանը բացում է կրծքին կամ շշին մոտեցնելիս:

Պետք է անհանգստանալ, երբ՝

- մեծահասակի հետ շփվում է առանց հույզեր դրսևորելու,
- ակտիվորեն չի արձագանքում շրջապատում կատարվածին,
- չի ժպտում,
- չի ձգվում դեպի նոր խաղալիքը կամ առարկան,
- վատ է ուտում:

Դաստիարակի խնդիրն է՝

- ուշադրությամբ շրջապատել երեխային և անընդհատ շփվել նրա հետ, որովհետև փոքրիկը դրա կարիքն ունի,
- տրամադրել երաժշտական և վառ գույների խաղալիքներ՝ միասին խաղալու համար,
- հաճախակի օդափոխել խմբասենյակը՝ երեխայի բացակայությամբ,
- զբոսանքների ժամանակն աստճանաբար երկարեցնել,
- բարենպաստ եղանակին կազմակերպել երեխայի քունը մաքուր օդում՝ խուսափելով միջանցիկ քամիներից:

4-6 ամսական

- Կես տարեկան (6 ամս.) հասակում երեխայի շարժումներն ավելի հաստատուն են դառնում, տեսողությունը պարզ է, հստակ, հույզերն առավել հարուստ:
- Երեխան սկսում է հետաքրքրություն ցուցաբերել մեծահասակների ուտելիքի նկատմամբ՝ ցանկություն է հայտնում փորձել մեծահասակների սեղանին դրված ուտեսները:

- նման դրսևորումները իրականում ազդանշան են ծնողներին՝ արդեն կարելի է փոքրիկին առաջարկել հավելյալ, լրացուցիչ սնունդ՝ ծանոթացնել նրան առաջին ճաշատեսակներին:

Երեխան 4-6 ամսականում պետք է կարողանա՝

- հեշտությամբ հայացքով առանձնացնել հետաքրքրող առարկաները,
- հասկանալ իրեն ուղղված մեծահասակի խոսքը՝ տարբերել խոսքի հնչերանգը, դրանց ճիշտ արձագանքել,
- տարբերել ծանոթ մեծահասակներին անծանոթներից, հարազատներից անսխալ առանձնացնել մայրիկին,
- ընդօրինակելով մեծահասակների խոսքը՝ արտաբերել ձայնավոր հնչյունները, կարող են ի հայտ գալ առաջին թոթովանքի դրսևորումներ՝ առանձին հնչյունների և վանկերի ռիթմիկ կրկնողություն,
- լսելով իր անունը, հասկանալ՝ ում մասին է խոսքը,
- իրեն քնքուշ դիմելու ընթացքում ժպտալ, ծիծաղել,
- ազատ տեղաշարժվել փորից մեջքին և հակառակը,
- փորին պառկած, հենվելով ձեռքերի վրա, բարձրացնել գլուխը, ուսերը և կրծքավանդակը,
- ձգտել ինքնուրույն նստել, այնուհետև նստել օգնությամբ և պահել գլուխը ուղիղ,
- կլորավուն խաղալիքներն ամուր բռնել երկու ձեռքով,
- մինչև 15 րոպե խաղալ սիրելի խաղալիքով:

Պետք է անհանգստանալ, երբ երեխան դրսևորում է՝

- անտարբերություն կերակրելու ընթացքի, համատեղ խաղերի և շփման նկատմամբ,
- թույլ արձագանք վառ լույսի, բարձր ձայների նկատմամբ կամ դրանց բացակայությանը,
- մշտական անկանոն քուն՝ քնկոտություն, դժվար, ընդհատվող քուն,

-
- ձեռքերի և դեմքի ջղաձգություն:

7-8 ամսական

- երեխաների մեծ մասի մոտ դուրս են գալիս առաջին ատամները՝ ներքևի երկու կտրիչները,
 - փոքրիկը դառնում է ավելի շարժուն, վստահորեն տիրապետում է իր մարմնի շարժումներին:

Երեխան 7-8 ամսականում պետք է կարողանա՝

- վստահ և ազատ չորեքթաթ սողալ, ինքնուրույն նստել,
- մեծահասակների օգնությամբ (բռնած) տեղում թռչկոտել,
- 8-րդ ամսվա վերջում հաստատուն կանգնել ոտքերի վրա և փորձել քայլել (երկու ձեռքերից բռնած),
 - այս կամ այն առարկան փնտրել հայացքով, լսել և արձագանքել «որտե՞ղ է» հարցին,
 - ճանաչել և ցույց տալ ծանոթ առարկաները,
 - թոթովել բավականին երկար ժամանակ, երբեմն փորձել մեծահասակների հետևից կրկնել որոշ միավանկ բառեր:
 - 8-րդ ամսվա վերջում փոքրիկը կարող է ունենալ 4 կաթնատամ,
 - մեծահասակի օգնությամբ խմում է բաժակից (բաժակը բռնում է մեծահասակը), կարելի է առաջարկել խմել տարբեր հարմար սպասքից, (որքան շուտ երեխան օգտվի ոչ միայն շշից, այլև բաժակից, այնքան դա բարենպաստ կազդի նրա զարգացմանը),
 - երկար ժամանակ խաղում է խաղալիքով, հաճույքով մի խաղալիքով հարվածում է մյուսին, շպրտում է խաղալիքը (հատկապես, երբ ինչ-որ մեկն այն վերադարձնում է իրեն),
 - մեծահասակի խնդրանքով մեկնում է ձեռքը, ծափ տալիս և այլն:

Պետք է անհանգստանալ, երբ՝

- եթե մինչ 8-րդ ամիսը դեռ ատամները դուրս չեն եկել, կամ դուրս են եկել ըստ սխեմայի ոչ համաչափ,
- եթե երեխան չի փորձում նստել կամ սողալ:

9-10 ամսական

- Սա այն զարմանալի ժամանակահատվածն է, երբ չոչ անող փոքրիկը դառնում է քայլող:
- 9 ամսականում նա կարող է ջրում ճիշտ շնչել:
- Երեխան հայելու մեջ ճանաչում է ինքը իրեն և մտերիմներին:
- Արձագանքում է իր անվանը՝ լսելիս շրջվում է, երբ նրան կանչում են՝ ջանում է չոչ անելով մոտենալ:
- Վերցնում է իրեն մեկնած խաղալիքը, բարձրացնում է մանր առարկաներ՝ լցնելով որևէ խորություն ունեցող առարկայի մեջ:
- Ընդօրինակում է մեծահասակների գործողությունները:
- Կատարում է գործողություններ՝ մեկ կամ երկու խաղալիքով, միևնույն ժամանակ բացում է բազմազան տուփեր, դարակներ:
- Ի հայտ են գալիս սիրելի խաղալիքներ:

Երեխան 9-10 ամսականում պետք է կարողանա՝

- հետաքրքրվել այն ամենով, ինչը գտնվում է նրա շրջապատում. խաղալ, ժպտալ, ուրախանալ իր հաջողություններով,
 - ցուցադրել իր նախընտրած խաղալիքները,
 - պահաջել ուշադրություն իր նկատմամբ,
 - ցանկանալ մասնակցել մեծահասակների և ուրիշ երեխաների հետ համատեղ խաղերին,
 - սիրով խաղալ շարժական խաղեր, կատարել «ճանապարհորդություններ» մեծահասակների ձեռքերի վրա,
-

-
- անհաջող գործողություններից, մեծահասակների բարձր ձայնի, օտար մարդկանց տեսնելիս արտահայտել դժգոհություն՝ նեղանալ, լաց լինել,
 - ցանկացած ազատության սահմանափակում ընկալել բացասաբար,
 - հստակ տարբերակել իրեն ուղղված խոսքի հնչերանգը, համապատասխանաբար արձագանքել ձայնով և դիմախաղով (այն օրեցօր դառնում է ավելի հարուստ),
 - ավելի լավ հասկանալ բառերի իմաստը, ճիշտ արձագանքել պարզ հարցերին (որտե՞ղ է, ով՞ է),
 - տարբերել առօրյա օգտագործվող առարկաների անվանումները՝ շիշ, ծծակ, բաժակ, տիկնիկ, արջուկ, մեծահասակի խնդրանքով այդ առարկաները փնտրել հայացքով,
 - հասկանալ և կատարել մեծահասակի պարզագույն խնդրանքները՝ «Վերցրու՛», «Տու՛ր», «Պառկի՛ր», «Կանգնի՛ր» և այլն,
 - կարողանալ 10-15 րոպե կենտրոնացնել ուշադրությունը որևէ առարկայի կամ գործողության վրա՝ հետաքրքրությամբ լսել մեծահասակների զրույցը, հետևել նրանց գործողություններին, դիմախաղին և այլն,
 - արտաբերել ռիթմիկ հնչյուններ և վանկեր,
 - ցանկություն հայտնել բռնելու և բերանը տանելու կոշտ սննդամթերք (հաց, թխվածքաբլիթ), փորձել այն կծել,
 - կարողանալ չոչ անելով հասնել նպատակին՝ անցնելով որոշակի տարածություն,
 - չորեքթաթ բարձրանալ փոքր բարձրություններ՝ բարձերի, աստիճաններ, իրեն հասանելի այլ բարձրությունների վրա,
 - ուղիղ նստել առանց հենարանի,
 - պառկած վիճակից ինքնուրույն փոխել դիրքը (առանց կողմնակի օգնության)՝ պառկած վիճակից նստել, նորից պառկել,
 - նստած դիրքից տեղափոխվել չորեքթաթ դիրքի,
 - հենարանից բռնվելով մեկ ձեռքով՝ կանգնել:
-

Պետք է անհանգստանալ, երբ`

- երեխան չի կարողանում ձեռքում բռնած առարկան հասցնել մինչև բերանը,
- չի կարողանում տեղաշարժվել փորին պառկած դիրքից մեջքին և հակառակը (կամ այն շատ վատ է նրա մոտ ստացվում),
- օգտվելով հենարանից` չի ձգտում կանգնել,
- հայացքով չի հետևում շարժվող առարկաներին,
- հետաքրքրություն չի ցուցաբերում համատեղ խաղերին,
- չի ջանում արտաբերել ռիթմիկ հնչյուններ և վանկեր:

11-12 ամսական հասակ

- Կյանքի մեկ տարվա վերջին երեխան բավականին շատ բան է հասկանում և կարողանում է կատարել մի շարք գործողություններ:
- Երեխան սիրով է մասնակցում մեծահասակների հետ համատեղ խաղերին:
 - Ձեռք է բերում հասակակիցների հետ շփման առաջին փորձը:
 - Ակտիվորեն ինքնուրույն խաղում է խաղալիքներով` մոտ 20 րոպե, և կարող է ինքն իրեն զբաղեցնել առանց կողմնակի միջամտության:
 - Դժգոհություն է հայտնում արգելքների հանդիպելիս կամ նաև այն ժամանակ, երբ ինչ-որ բան իր մոտ չի ստացվում:
 - Ջանասիրությամբ կրկնօրինակում է մեծահասակի խոսքը և դիմախաղը:
 - 12 ամսականում հասկանում է 30-50 բառ, օգտագործում` 8-10 պարզ բառեր:
 - Հետաքրքրությամբ ընկալում է և փորձում կրկնել ավելի մեծ երեխաների խաղային գործողությունները:
 - Իր համար անհասկանալի կամ անծանոթ իրավիճակում դիմում է մեծահասակների օգնությանը:
 - Ձգուշությամբ է վերաբերվում անծանոթներին:

- Սիրում և հաճույքով ունկնդրում է երաժշտությունը: Կարևոր է երեխային մատուցել նաև դասական երաժշտություն: Այս տարիքից է դաստիարակվում երաժշտական ճաշակը:

- Տիրապետում է քայլքին:

Երեխան 11-12 ամսականում պետք է կարողանա`

- ընդլայնել իր խաղային գործունեության ծավալը` կատարել տարբեր գործողություններ` ծանոթ առարկաներով (կերակրում է, մաքրում, սանրում),

- մեծահասակի խնդրանքով կատարել առանձին-առանձին մի քանի գործողություն, այնուհետև` կրկնօրինակել և կատարել ինքնուրույն (ծանոթ խաղային իրավիճակում),

- խորանարդիկներ և այլ առարկաներ դնել իրար վրա (եթե տեսել է, թե ինչպես են դա կատարում մեծահասակները),

- հանել և հագցնել աշտարակի օղակները, միացնել և անջատել հեռուստացույցը, հաճույքով բացել - փակել դռները, դարակները և այլն,

- կրկնօրինակելով մեծ երեխաների խաղային գործողությունները` գլորել գնդակը, անհիվներով խաղալիքները, կարողանալ ինչ-որ բան քանդել, նետել ինչ-որ բան,

- մեկ տարեկանում վստահ կանգնել առանց հենարանի, կքանստել, թեքվել և ուղղվել, սկսել ազատ քայլել` անցնելով 3-5 մետր,

- թեթևակի բռնվելով մեկ ձեռքով, փորձել բարձրանալ ոչ բարձր աստիճաններով,

- բավականին լավ հասկանալ խոսքը, մեծահասակի խնդրանքով կատարել ծանոթ գործողություններ` տարբեր առարկաների հետ, գտնել և ցույց է տալ նշված առարկան,

- տարբերել առարկաներն ըստ ձևի,

- ենթարկվել արգելքների,

- իմանալ մտերիմների անունները և կարողանալ ցույց տալ,

- հիշել հիմնական առարկաների անվանումները և հագուստի մասերը,

- կատարել մեծահասակի պարզագույն խնդրանքը՝ «բե՛ր», «տա՛ր», «տու՛ր», «փակի՛ր», նույն հաջողությամբ կատարել նաև մի շարք գործողություններ՝ ծափ տալ, ցույց տալ, գլորել առարկան, թաքնվել, լվացվել և այլն,

- հրաժեշտի պահին առանց հուշելու, ձեռքերի շարժումներով ասել՝ « ցտեսությո՛ւն»,

- տիրապետել նվազագույնը 5-12 պարզ բառերի, արտաբերել 1 կամ ավելի բառեր, յուրովի պատասխանել «Ով՞ է սա», «Ի՞նչ է սա», «Ուզու՞մ ես», «Չե՞ս ուզում» հարցերին,

- ջանալ անվանել շրջապատի առարկաները և կրկնօրինակել իր շուրջը կատարվող գործողությունները,

- բավականին լավ կրկնօրինակել ծանոթ ձայները, փռշտալ, հագալ, ծիծաղել, լացել, արտաբերել որոշ կենդանիների ձայներ,

- կրկնօրինակել ծանոթ մեղեդու հնչերանգը, մեծ երեխաների և մեծահասակների ասած նոր բառերը, «խոսել» հեռախոսով,

- հարստացնել կենցաղային հմտությունները՝ օգտվել բաժակից, գդալից, կծել հացը, թխվածքաբլիթը և այլն,

- մեծահասակի խնդրանքով հագնվելու ընթացքում բարձրացնել, իջեցնել ձեռքերը և ոտքերը, բերել իր հագուստը, ջանալ ինքնուրույն հագնվել,

- հաճույքով լողանալ, խաղալ ջրի հետ, ձեռքերը մեկնել լվանալու համար, փորձել սրբվել սրբիչով:

Պետք է անհանգստանալ, երբ երեխան՝

- մեկ տարեկանում չի կարողանում կանգնել, չոչ անելը վատ է ստացվում,

- քայլելու ձգտում չունի,

- դժվարությամբ է փոխում մարմնի դիրքը,

-
- ակտիվ չէ դիմախաղը,
 - չի արտաբերում ձայներ և վանկեր,
 - չի կարողանում տուփի մեջից վերցնել խաղալիքը,
 - չի հասկանում պարզագույն խնդրանքներ,
 - չգիտի տեսադաշտում անընդհատ գտնվող առարկաների անվանումները,

• չգիտի իր և մտերիմների անունները, ծանոթ առարկաների, պարզ շարժումների կամ գործողությունների անվանումները, ակտիվորեն չի օգտվում մի քանի (6-10) «հեշտ» բառերից,

• չի պահպանում դրական հուզական, կենսուրախ վիճակ, ակտիվ վարք,

• չունի դրական վերաբեմունք՝ կերակրման, հիգիենիկ արարողությունների նկատմամբ:

Չի կարողանում՝

• լսել, հասկանալ, ընդօրինակել խոսքը և արձագանքել, օգտվել դիմախաղերից ու ժեստերից, կողմնորոշվել շրջապատում,

• ընդօրինակել նոր վանկերը,

• հուզականորեն արձագանքել երաժշտությանը (ծիծաղում է, ձեռքերը թափահարում, թռչկոտում, դոփ-դոփ անում),

• առարկաներով և խաղալիքներով կատարել տարբեր գործողություններ,

• մեծերի հանձնարարությամբ կատարել պազագույն գործողություններ,

• կատարել ակտիվ շարժումներ, նստել, կանգնել, ձեռքից բռնած կամ ինքնուրույն քայլել, պահպանել հավասարակշռությունը, չորեքթաթ սողանցել, նետել, գլորել գնդակը:

1-2 տարեկան

Երեխաների բնութագիրը.

Կյանքի երկրորդ տարում երեխան ֆիզիկապես դառնում է ավելի շարժունակ, ամուր(քաշը հասնում է 12-13 կգ-ի, հասակը՝ 85-86 սմ-ի), մեծահասակի հետ շփումը՝ ավելի բովանդակալից: Շփվելով մեծերի և երեխաների հետ՝ պարապմունքների, զբոսանքների ընթացքում, առօրյայում և խաղում ձևավորվում է երեխայի առարկայական և խաղային գործունեությունը, և զարգանում են հոգեկան գործընթացները, հարստանում են հույզերը, դրվում երևակայության հիմքերը: Առարկաների հետ կատարելով գործողություններ՝ նրանք արդեն բավական լավ կողմնորոշվում են ըստ դրանց ձևի, չափի, գույնի, հնչողության, կշռի և այլ հատկանիշների:

Առարկաների հետ կատարվող գործողություններն այս տարիքում դառնում են ոչ միայն անմիջականորեն ուղղված առարկային (վերցնել, բերել), այլև էական վերափոխումներ են տեղի ունենում. լեզուներով կառուցումներ են անում, փայտիկով կերակրում և այլն: Այսպես ծագում է սյուժետային խաղը, որի մեջ երեխան իր փորձի շրջանակում արտացոլում է կյանքի պարզագույն իրավիճակներ՝ խոսքի յուրացմանը զուգընթաց: Ավելի բուռն զարգանում են խոսքը հասկանալու, ընդօրինակելու կարողությունները, հարստանում է բառապաշարը:

Առարկայական գործունեության փորձի կուտակման ներգործությամբ, ինչպես նաև մեծի հետ շփվելով և դիտելով շրջապատը, այս տարիքում ծագում է սյուժետավերարտադրողական խաղը, որի ընթացքում երեխան արտացոլում է պարզագույն իրադրություններ:

Երեխայի կյանքի այս փուլում խոսքային կարողությունների տիրապետումն ունի հատուկ նշանակություն ողջ կյանքի համար:

Մեկից մեկուկես տարեկանում ավելի արագ են զարգանում խոսքը հասկանալու և ընդօրինակման կարողությունները, բարդանում է թոթովանքը, ընդարձակվում ակտիվ բառապաշարը՝ հասնելով 30-40 բառի:

Մեկուկես տարեկանից մինչև երկու տարեկանը կատարվում է խոսքի ակտիվ զարգացում, և բառապաշարը հասնում է 200-300 բառի: Երեխան սկսում է ճիշտ արտասանել ավելի հեշտ բաղաձայնները:

Մեծի խոսքն աստիճանաբար դառնում է երեխայի վարքի կազմակերպման գործարար միջոց. նրա ճանաչողական գործողություններում, խաղերում, պարապմունքներում և առօրյայում դրսևորվող ինքնուրույնությունը կտրուկ աճում է:

Կյանքի երկրորդ տարում երեխաները, գերազանցապես գործնականորեն, խաղային ձևով պարապմունքների ընթացքում ստանում են պատկերացումների և կարողությունների զգալի ծավալ:

Երկու տարեկան երեխան հուզականորեն է արձագանքում երաժշտությանը և գեղարվեստական խոսքին:

Դաստիարակության և ուսուցման ազդեցությամբ կյանքի երկրորդ տարվա վերջում երեխան յուրացնում է վարքի որոշ կարողություններ. կատարում է մեծերի հանձնարարությունները, լսում նրանց պահանջները, իր նախաձեռնությամբ դիմում է մեծերին: Նա հետաքրքրություն է դրսևորում հասակակիցների, նրանց կատարած գործողությունների նկատմամբ, ընդօրինակում է նրանց, սկսում խաղալ նրանց կողքին:

Կյանքի երկրորդ տարում երեխայի զարգացման ուղղությամբ ձեռք բերած նվաճումները հիմք են դառնում նախադպրոցական կյանքի համար:

Կյանքի երկրորդ տարվա ընթացքում ինչպես երեխայի հետագա զարգացման, այնպես էլ ակտիվ վարքի, կայտառ, հավասարակշռված վիճակի պահպանման առումով առավել էական են դառնում զգայությունների և ակտիվ խոսքի զարգացումը, առարկաների հետ որոշակի գործողություններ կատարելու ունակությունը:

Պաստիարակության հիմնական խնդիրներն են՝

- առողջության պահպանումը և ամրապնդումը,
- ինքնուրույնության և անձնական հիգիենայի կարողությունների դաստիարակումը,
- մարդասիրական զգացմունքների և դրական փոխհարաբերությունների դաստիարակումը,
- շրջապատում կողմնորոշվելու կարողության և խոսքի զարգացումը,
- տարրական բարեկիրթ վարքի կարողությունների զարգացում,
- խոսքային հրահանգով շարժումներ կատարելու, շարժողական բավարար ակտիվության, աշխուժության, ինքնուրույնության, տարածության մեջ կողմնորոշվելու ունակության զարգացումը,
- զգայական դաստիարակությունը, ուշադրության, հիշողության, խոսքի, մտածողության ձևավորումը,
- հեշտ արտասանվող բառերի և վանկերի կրկնօրինակման կարողության զարգացումը,
- մեծին դիմելու և հարցերին պատասխանելու կարողության զարգացումը,
- հուզական ոլորտի զարգացումը՝ բնավորության դրական գծերի նախադրյալների ստեղծումը՝ բարյացակամ և զգայուն վերաբերմունքի, կարեկցանքի առկայություն և այլն,
- երաժշտության ունկնդրման ժամանակ տարբեր երանգի(տեմբր) և բարձրության հնչյունների ըմբռնումը, մեծի ձայնային ելևէջի (ինտոնացիա) ընդօրինակման խթանումը, երաժշտության տակ պարզ ռիթմական շարժումների կատարումը,
- երեխայի գործունեության տարբեր տեսակների իրականացում՝ կենցաղային, առարկայական, խաղային և հաղորդակցական, եղանակների ձևավորում,
- լսելու, դրական սովորույթների, աշխատանքային պարզ հանձնարարություններ կատարելու կարողությունների դաստիարակում:

Ուսուցում՝ պարապմունքների միջոցով

Վաղ տարիքի երկրորդ խմբի երեխաների համակարգված դաստիարակության և ուսուցման նպատակով կազմակերպվում են հատուկ խաղեր և պարապմունքներ, որոնց ընթացքում նրանք սովորում են լսել դաստիարակին, հետևում են, թե նա ինչ է անում և ցուցադրում, ընդօրինակում են նրան և կատարում առաջադրանքներ:

Յուրաքանչյուր ենթախմբի հետ հանձնարարվում է կազմակերպել օրական երկու խաղ-պարապմունք (շաբաթական՝ 10, ամսական՝ 40):

Առաջին ենթախմբի (1տարեկանից մեկուկես տարեկան) հետ պարապմունքներ ընդհանուր առմամբ կազմակերպվում են արթնության երկրորդ ժամանակահատվածում, երկրորդ ենթախմբի(մեկուկեսից երկու տարեկան) հետ՝ առավոտյան և երեկոյան արթնության ժամանակ:

Կարելի է պարապմունք կազմակերպել և անցկացնել արթնության ցանկացած հարմար ժամանակահատվածում, եթե երեխան ակտիվ արթնության մեջ է և հետաքրքրված:

Առաջին ենթախմբի պարապմունքներին մասնակցում են 24 երեխաներ, տևողությունը՝ 3-6 րոպե:

Երկրորդ ենթախմբի պարապմունքներին մասնակցում են 46 երեխաներ, տևողությունը՝ 8-10րոպե:

Ամսական կտրվածքով տրված պարապմունքների քանակը հնարավորություն է տալիս, նկատի ունենալով երեխաների զարգացման անհատական և տարիքային առանձնահատկությունները, կատարել օրացուցային պարապմունքների տեղաշարժեր:

Ուսուցման ժամանակ պետք է կիրառել պարզից դեպի բարդ ընթացող դիդակտիկական սկզբունքը: Երեխային կարելի է ներկայացնել նոր, ավելի բարդ պահանջներ միայն այն բանից հետո, երբ նա արդեն ծրագրային խնդիրների համաձայն տիրապետել է նախորդ փուլում նախատեսված կարողություններին, ունակություններին կամ ինչ-որ կանոնի:

Պարապմունքների ընթացքում երեխաներին առաջադրվող ծրագրային նյութը դաստիարակի կողմից ամրապնդվում է ամենօրյա հաղորդակցական գործընթացում. զբոսանքների, ինքնուրույն գործունեության ժամանակ, առօրյա շփումներում:

Դաստիարակը պետք է երեխայի հետ զրուցի այնպես, որ կարողանա նպաստել նրա խոսքի բոլոր կողմերի զարգացմանը: Անհրաժեշտ է երեխայի խոսքի զարգացման աշխատանքները կազմակերպել ռեժիմային բոլոր պահերի ընթացքում (խաղ, զբոսանք, պարապմունք): Երեխայի խոսքի զարգացման հարցում կարելի է հասնել հաջողության, եթե խոսքի բոլոր կողմերը ներդաշնակ և համակարգված ներկայացվեն՝ բառապաշարի հարստացում, ակտիվացում, խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիարակում, կապակցված խոսքի զարգացում:

Վաղ տարիքի երկրորդ խմբի ամսական խաղ-պարապմունքների մոտավոր ցանկը

h/h	<i>խաղ-պարապմունքի տեսակը</i>	<i>Քանակը</i>
1.	Շրջակա միջավայրին ծանոթացում և խոսքի զարգացում	12(3ճ4)
2.	Դիդակտիկ նյութերով, առարկաներով, առարկագործիքներով և խաղալիքներով	8(2ճ4)
3.	կառուցողական(շինարարական) նյութերով	1(1ճ4)
4.	Երաժշտություն	8(2ճ4)
5.	Շարժումների զարգացում	8(2ճ4)

Ընդամենը՝ 40

Պարապմունքներ՝ դիդակտիկ նյութերով, խաղալիքներով, առարկագործիքներով, կառուցողական նյութերով:

Դիդակտիկ նյութերով, խաղալիքներով, առարկաներով գործիքներով և կառուցողական նյութերով կազմակերպվող պարապմունքները՝

երեխաների զգայական դաստիարակության հիմքով, նպաստում են մտավոր դաստիարակությանը:

Պարապմունքներ՝ դիդակտիկ նյութերով

Մեկ տարեկանից մինչև մեկ տարեկան երեք ամսական

- Աջակցել առարկաների յուրահատկությունների վերաբերյալ պատկերացումների կուտակմանը;
- Երեխաներին ծանոթացնել առարկաների գույներին, ընդլայնել նրանց զգայական փորձը՝ կազմակերպելով պարապմունքներ միասեռ, 6 գույնի (սև, սպիտակ, կարմիր, դեղին, կապույտ, կանաչ), մեկ գույնի առարկաներով:
- Սովորեցնել ըստ մեծության(մեծ-փոքր) առարկան տեղավորել համապատասխան բացվածքում:

Մեկ տարեկան երեք ամսականից մինչև մեկ տարեկան վեց ամսական

Շարունակել հանձնարարել առաջադրանքներ, որոնք վերաբերում են ոչ միասեռ առարկաներն ըստ ձևի (շրջանաձև-կլոր, քառակուսի, ձվաձիր, ուղղանկյուն, եռանկյուն) և մեծության (մեծ-փոքր) հարաբերակցմանը, սովորեցնել ընտրություն կատարել երկու ձևի և չափի առարկաների միջև:

Մեկ տարեկան վեց ամսականից մինչև մեկ տարեկան ինը ամսական

Սովորեցնել խմբավորել՝

- միասեռ առարկաներն ըստ մեկ հատկանիշի (չափ, ձև),
- իրարից ձևով խիստ տարբեր միասեռ առարկաները (շրջան-եռանկյունի, ձվաձիր քառակուսի),
- միասեռ առարկաները (մատիտ-ձողիկ),
- ըստ գույնի խիստ տարբերվող՝ կարմիրկապույտ առարկաները և այլն:

Մեկ տարեկան ինը ամսականից մինչև երկու տարեկան

Շարունակել ձևավորել՝ ձևով և չափով միմյանց մոտ, ինչպես նաև իրարից խիստ տարբերվող առարկաները խմբավորելու, ոչ միասեռ առարկաները հարաբերակցելու կարողություն՝ գունային 4 տոնի ընտրության պայմանով (կարմիր-կապույտ, սև-սպիտակ, կանաչ-դեղին, կարմիր-նարնջագույն):

Պարապմունքներ՝ դիդակտիկ խաղալիքներով

Մեկ տարեկանից մինչև մեկ տարեկան երեք ամսական

Սովորեցնել կատարել առարկաներով բազմաթիվ գործողություններ՝ շարել, հանել, դնել, տեղավորել, հավաքել և այլն: Վարժեցնել՝ գնդիկները դասավորել դույլի, արկղի մեջ, գլորել, նորից դասավորել, հավաքել գունավոր օղակները, հագցնել ձողին 35 նույնանման օղակներ, իրարից չափերով խիստ տարբերվող 2 օղակ, տեղավորել սնամեջ առարկաները (փոքրը՝ մեծի մեջ), ծածկել ձևով նման առարկաները (մեծը՝ փոքրով), հավաքել երկու մաս ունեցող խաղալիքները (տակառիկ, գեղջկատիկնիկ (մատրյոշկա):

Երեխաների ուշադրությունը գրավել տարբեր նյութերով պատրաստված առարկաների վրա (փայտե, թղթից, կտորից, պլաստմասե և այլն), որոնք տարբեր ձայներ են հանում (զանգ, չխկչխկան):

Մեկ տարեկան երեք ամսականից մինչև մեկ տարեկան վեց ամսական

Շարունակել ձևավորել միտեղանի դիդակտիկ խաղալիքները (տակառ, ձվիկ, գեղջկատիկնիկ), երկրաչափական ձև ունեցող մարմինները (կոն, գլան) միմյանց մեջ հագցնելու կարողություն,

Մեծի օգնությամբ հավաքել աշտարակ՝ որոշակի հաջորդականությամբ, կոնի վրա՝ 2-3 տարբեր չափի օղակներ, ձողի վրա՝ միմյանցից խիստ տարբերվող՝ 2 օղակ:

Ընտրելով համապատասխան խաղալիքներ՝ երեխաների ուշադրությունը գրավել տարբեր ձայնաերանգներ արձակող խաղալիքների վրա:

Մեկ տարեկան վեց ամսականից մինչև մեկ տարեկան ինը ամսական

Ձևավորել երկմասանի խաղալիքներ հավաքելու կարողություն: Ընտրել առարկաներն ըստ չափի և համապատասխանորեն անվանել դրանք (մեծ-փոքր), հասկանալ ավելի փոքր բառակապակցության նշանակությունը: Մեծի օգնությամբ կարողանալ հավաքել 3-4, ապա 3 չափի՝ մեծ, փոքր, ավելի փոքր օղակներով աշտարակ: Խթանել մատների մանր շաժումների զարգացումը՝ մանր առարկաներով գործողություններ կատարելով:

Շարունակել երեխաներին ծանոթացնել տարբեր ձայն արձակող առարկաներին, ուշադրություն դարձնել հնչյունի ռիթմիկ պատկերին: Խթանել ռիթմով ծափ տալու, չխկչխկացնելու, թմբուկին հարվածելու, դոփդոփելու երեխայի ջանքերը:

Մեկ տարեկան ինը ամսականից մինչև երկու տարեկան

Շարունակել սովորեցնել՝ հավաքել երկմասանի խաղալիքներ, 2-3 մասից (դետալից) կազմված դատարկ խաղալիք հավաքելիս գտնել համապատասխան մասը, ծածկը(քառակուսի, կլոր, եռանկյուն):

Վարժեցնել հավաքել մեծությամբ, չափով նվազող առարկաներ և հասկանալ ավելի մեծ, ավելի փոքր բառերի նշանակությունը: Սովորեցնել 2-3 մեծ, 4-5 տարբեր մեծության օղակներով ինքնուրույն հավաքել աշտարակ: Առաջադրել միաժամանակ 2 տարբեր հատկանիշներով (մեծություն և գույն, ձև և գույն, ձև և մեծություն) դիդակտիկ խաղալիքները տարբերակելու վարժություն: Շարունակել զարգացնել մատների մանր շաժումները:

Շարունակել երեխաներին ծանոթացնել տարբեր ձայն հանող առարկաներին և երաժշտական գործիքներին:

Խաղ-պարապմունքների առարկա-գործիքներով

Մեկ տարեկանից մինչև մեկ տարեկան երեք ամսական

Սովորեցնել օգտագործել օժանդակ միջոցներ. թելով քաշել ավտոմեքենան, ժապավենով դեպի իրեն քաշել փուչիկը, պարանով՝ սայլակը, հնչեցնել զանգը, բռնակի օգնությամբ պտտել ճոճանակը և այլն:

Մեկ տարեկան երեք ամսականից մինչև մեկ տարեկան վեց ամսական

Շարունակել՝ երեխաներին ծանոթացնել առարկա-գործիքներ օգտագործելու պարզ հարմարանքներին (փուչիկով, սայլակով, գլորանով խաղալու համար): Երեխան պետք է կարողանա դեպի իրեն քաշել սայլակը՝ օգտագործելով սահող ժապավեն:

Մեկ տարեկան վեց ամսականից մինչև մեկ տարեկան ինը ամսական

Սովորեցնել օգտագործել պարզ առարկա-գործիքներ, որոնց օգնությամբ կարելի է կատարել գործողություններ. փայտիկով հրել, քաշել խողովակի միջով, ճիշտ արձագանքել՝ «Յանի՛ր խաղալիքը», «Սոլյուտ» հրահանգներին: Ձևավորել բարդ առարկա-գործիքներ օգտագործելու կարողություն՝ օղակ, քերիչ ունեցող փայտիկով («Տիկնիկը հյուր գնաց», «Ձուկ բռնիր» և ջրով խաղեր) համապատասխան խաղալիքները, գնդիկները դրանց օգնությամբ տեղադրաշարժելով, վերցնելով և տեղափոխելով:

Անցկացնել դիդակտիկ խաղեր՝ ժողովրդական խաղալիքներով («Կտցող հավիկներ», «Փայտահատ արջը»):

Մեկ տարեկան ինը ամսականից մինչև երկու տարեկան

Սովորեցնել օգտագործել առարկա-գործիքներ և խաղալիքներ, որոնք նման են աշխատանքային գործիքներին: Շարունակել «Տիկնիկը

հյուր գնաց», «Ձուկ բռնիր» և ջրով այլ խաղերի անցկացումը: Սովորեցնել մուրճով ցցեր տնկել խոնավ ավազի մեջ:

Սովորեցնել օգտագործել այնպիսի խաղալիք-գործիքներ, ինչպիսիք են՝ քերիչը, կաղապարները, բահերը, դուլները: Նշված գործիքները ճիշտ օգտագործել ավազով, ձյունով և այլ ինքնուրույն խաղերի ժամանակ:

Անցկացնել խաղ-պարապմունքներ՝ ժողովրդական խաղալիքներով, և ցույց տալ գործիքների օգտագործման եղանակները:

Պարապմունքներ՝ կառուցողական նյութերով

Մեկ տարեկանից մինչև մեկ տարեկան վեց ամսական

Սովորեցնել աղյուսիկներով կառուցել նեղ կամ լայն ճանապարհ, խորանարդները կամ աղյուսիկները դնելով հարթության վրա՝ կառուցել ավտոմքենա, սեղան, աթոռ՝ համապատասխան չափի խաղալիքների համար: Սովորեցնել հասկանալ կառուցման նշանակությունը, խաղալ այդ կառույցներով՝ օգտագործելով սյուժետային խաղալիքներ:

Մեկ տարեկան վեց ամսականից մինչև երկու տարեկան

Սովորեցնել մեծ քանակությամբ կառուցողական նյութերով ստեղծել ավելի բարդ կառույցներ՝ 2 խորանարդից և աղյուսից պատրաստել նստարան, դարպաս, աղյուսներով՝ ցանկապատ: Սովորեցնել կառուցումներն օգտագործել խաղերի համար:

Սյուժետային խաղերի համար աղյուսներով և խորանարդներով պատրաստել՝ կառուցման ձևերով և նշանակությամբ տարբեր իրեր՝ կահույք, բազմոց, մահճակալ սեղանաթոռ, պատուհաններով և դռներով տնակ՝ եռակողմ պրիզմայով (զուգահեռանիստ) և 4 աղյուսներով և այլն:

Սովորեցնել իրենց կառույցներն օգտագործել սյուժետային
խաղերում՝ մեծերը հատակին, միջին չափը և փոքրերը սեղանին դնելով:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱՎՈՒԹՅՈՒՆ

Այս տարիքի երեխաների հասակի և ֆիզիկական զարգացման տեմպերը, մինչև մեկ տարեկանների հետ համեմատած, մի փոքր իջնում են: Միաժամանակ աստիճանաբար ավելանում են հոգեկան գործընթացների շարժունակությունը, դրանց հավասարակշռվածությունը, բարձրանում է գլխուղեղի մեծ կիսագնդերի նյարդային բջիջների ֆունկցիոնալ աշխատունակությունը, ավելանում ակտիվ առույգության ժամանակահատվածը /44,5 ժամ/: Ակտիվորեն աճում են գլխուղեղի զգայական և շարժողական հատվածները, ավելի հստակ են արտահայտվում նյարդա-հոգեկան և ֆիզիկական զարգացման կապերը:

Տարիքային այս խմբում շարունակվում են զարգանալ երեխայի բուլոր օրգանները և կենսաբանական համակարգերը: Կատարելագործվում են դրանց ֆունկցիաները: Օրգանիզմն ավելի լավ է հարմարվում շրջապատող միջավայրի պայմաններին:

Կյանքի առաջինից երկրորդ տարուն անցնելու շեմին երեխայի հոգեֆիզիկական զարգացման ինքնատիպությունը մեծապես պայմանավորված է երեխայի քայլքին տիրապետելու կարողությամբ:

Այս տարիքային խմբի երեխաների շարժողական ակտիվությունը բնութագրվում է հետևյալ առանձնահատկություններով.

- երեխան արդեն նստում է, կանգնում,
- չորեքթաթ քայլքից անցնում ուղղահայաց քայլքի,
- ձեռքերը ազատվում են տեղաշարժի համար հենարան ծառայելու ձևից, և երեխան անցնում է առաջին ինքնուրույն քայլքին:

Դրանից հետո երեխան անցնում է ավելի բարդ շարժողական գործողությունների. փոխարինվում է տեղաշարժի ավելի պարզ ձևը՝ բարդով և այլն:

Այս տարիքի երեխաների համար բնորոշ են ինչպես ստատիկ, այնպես էլ ակտիվ տարբերակված շարժումները և շարժողական ակտիվությունը մեծացնելու ունակությունները:

Տարիքային այս խմբում անհրաժեշտ է նպաստել հատկապես երեխաների ֆիզիկական զարգացման հիմնական շարժումների բնական ձևերի զարգացմանը՝ նրանց սովորեցնել քայլել հավասարաչափ և ուղիղ քայլքով, ձևավորել մագլցելու, առարկաները նետելու, գլորելու հմտությունները, զարգացնելու մատների մկանները:

1-ից մինչև 2 տարեկան երեխաների հետ շարժողական գործողություններ կատարելիս անհրաժեշտ է հաշվի առնել նրանց ֆիզիկական զարգացման աճը և տարիքային առանձնահատկությունները:

Վաղ տարիքի երկրորդ խմբի երեխաների ֆիզիկական դաստիարակության խնդիրներն են՝

- հոգ տանել երեխաների առողջության ամրապնդման ուղղությամբ,
- նպաստել երեխաների հիմնական շարժումների բնական ձևերի զարգացմանը,
- սովորեցնել քայլել հավասարաչափ քայլքով, մեկ ուղղությամբ՝ պահպանելով հավասարակշռությունը,
- ձևավորել մագլցելու և նետելու շարժումները,
- մշակել տարածության մեջ կողմնորոշվելու կարողություն,
- զարգացնել մատների մկանները:

Շարժումների զարգացում

Մեկ տարեկանից մինչև մեկ տարեկան 6 ամսական

Քայլք և հավասարակշռության վարժություններ

- Վարժեցնել քայլել ուղիղ՝ հատակին դրված ուղեգորգի վրայով:
- Ինքնուրույն քայլել առանց հենարանի:
- Քայլել դաստիարակի կամ մեծերի առաջադրված ուղղությամբ՝ կողմնորոշվելով շրջապատում գտնվող առարկաներով:

- Մեծերի օգնությամբ քայլքով բարձրանալ հատակից 10-15 սմ բարձրության տախտակի վրա (լայնությունը 25սմ, երկարությունը 1,52 մետր) և իջնել:

- Քայլել հատակին դրված պարանի վրայով, իսկ հետո նույնը կատարել հատակից 5-10 սմ բարձրության ձողափայտի վրայով:

- Բարձրանալ արկղի վրա (50x 50սմ, բարձրությունը 10 սմ) և իջնել:

Սողանցում և մագլցում

- Վարժեցնել երեխային սողանցել 12 մ տարածությունը,
- սողանցել պարանի (50սմ բարձրության) տակով,
- սողանցել ուղղահայաց դրված օղակի /շրջագիծը 50սմ/ միջով,
- մագլցել 1 մ բարձրությամբ սանդուղքի վրա և իջնել:

-

Գլորում և նետում

- Սովորեցնել գլորել գնդակը /շրջագիծը 25 սմ/ դեպի առաջ կամ փոխանցել դաստիարակին՝ նստած և կանգնած դրությունից,

- գնդակը նետել առաջ, ցած, հեռու,

- մասնակցել խաղ զվարճալիքներին, որոնք երեխաների մեջ առաջացնում են ծիծաղ և կենսուրախ շարժումներ:

Մեկ տարեկան 6 ամսականից մինչև 2 տարեկան

Քայլք և հավասարակշռության վարժություններ

- Սովորեցնել քայլել ուղիղ՝ դաստիարակի կողմից առաջադրված ուղղությամբ,

- քայլել ուղիղ, հատակին դրված տախտակի (լայնությունը 20սմ, երկարությունը 1,52 մետր) վրայով,

-
- քայլել հատակից 15-20 սմ բարձրության տախտակի վրայով,
 - բարձրանալ շրջված արկղի վրա (50-50սմ, բարձրությունը 15 սմ) և իջնել,
 - քայլանցել հատակից 12-18 սմ բարձրության պարանի կամ ձողափայտի վրայով:

Սողանցում և մագլցում

- Սողանցել մինչև 2 մետր տարածությունը,
- սողանցել պարանի (բարձրությունը 35-40 սմ) տակով,
- սողանցել ուղղահայաց դրված օղակի(շրջագիծը 45 սմ) միջով,
- անցնել հատակին դրված գերանի (շրջագիծը 15 -20սմ) վրայով,
- մագլցել 1,5 մետր բարձրությամբ սանդուղքի վրա և իջնել:

Գլորում և նետում

- Գլորել գնդակը (շրջագիծը 20-25 սմ) զույգով՝ մեծահասակի (դաստիարակի) հետ միասին,
- մեծ գնդակը գլորել թեքությունից (սղարանից) և հետ բերել,
- գնդակը հրել երկու կամ մեկ ձեռքով,
- քայլել գլորվող գնդակի հետևից՝ բռնել և հետ բերել,
- փոքր գնդակը նետել ուղիղ, աջ (ձախ) ձեռքով:

Ընդհանուր զարգացնող վարժություններ

- Նստարանին նստած դրությունից՝ ձեռքերը բարձրացնել և իջեցնել, տանել առաջ, թաքցնել մեջքի հետևում,
- ձեռքերը բարձրացնել առաջ, վեր, կողմեր, տանել հետ, ծալել և ուղղել,

- ձեռքի դաստակները պտտել` նստած, պառկած, կանգնած դիրքերով,

- ձեռքի դաստակները դարձնել վեր և ցած,
- ձեռքի մատները ծալել և բացել,
- նստած դրությունից` մատներով թխթխկացնել հատակին,
- մատներով բռնել փոքր առարկաները,
- նստած դրությամբ իրանով թեքվել /շրջվել/ աջ և ձախ` փոխանցելով առարկան,
- նստած և կանգնած դրությունից թեքվել առաջ և ուղղվել,
- մեծերի օգնությամբ կքանստել և ուղղվել:

Շարժախաղեր

- Ինքնուրույն խաղեր` գլորաններով, ավտոմեքենաներով, ինքնաթիռներով և այլն,

- դաստիարակի կողմից կազմակերպվող խաղեր, խաղային վարժություններ.

«Եկե՛ք ինձ մոտ», «Բե՛ր տիկնիկը», «Վերցրու՛ խաղալիքը», «Ոտքերը վե՛ր բարձրացրու», «Գլորի՛ր գնդակը», «Հասի՛ր շնիկին», «Փոխանցի՛ր գնդակը», «Սողա՛ մինչև չխչխկանը», «Թաքցնե՛նք խաղալիքը», «Թռչունները թափահարում են թևերը», «Ծառերը ճոճվում են», «Շոգեքարշը», «Արջուկը», «Մեծերը և փոքրերը», «Թիթեռ բռնել»:

Կյանքի երկրորդ տարվա վերջում երեխան պետք է կարողանա՝

- ինքնուրույն կանգնել` ուղղահայաց դիրքով,
- ինքնուրույն նստել` աթոռակին, հատակին,
- առանց օգնության կանգնած մնալ` առնվազն 10 վրկ.,
- ուղղահայաց դիրքով առանց օգնության կատարել քայլեր /5/,
- առաջ թեքվելով` հատակից վերցնել առարկան,
- կանգնած դիրքից գնդակը նետել,

-
- կատարել վազելու փորձեր՝ հաճախ վայր ընկնելով,
 - մեծահասակի օգնությամբ /բռնելով/ բարձրանալ և իջնել աստիճաններից,
 - հրել կամ քաշել հատակին դրված առարկաները,
 - մեկ առարկան տեղավորել մյուսի մեջ,
 - ոտքով հարվածել գնդակին:

Մեթոդական ցուցումներ

Այս տարիքի երեխաների ֆիզիկական զարգացման համար անհրաժեշտ են ընդարձակ տարածություններ /խմբասենյակ/, մանեթներ, վառ գույներով տարբեր առարկաների հավաքածուներ /խաղալիքներ, չխկ-չխկաններ, օղակներ, գնդակներ, գնդիկներ և այլն / , ինչպես նաև հատուկ մարմնամարզական պարագաներ՝ գլորաններ, ուղեգորգեր, տախտակներ, պարաններ, օղեր, սանդուղքներ /աստիճաններ/ և այլն:

Երեխաների համար անհրաժեշտ է ստեղծել տեսողական, լսողական, շոշափելիքի զգացողության, հավասարակշռության պահպանման իրավիճակներ, որոնք հարստացնում են նրանց շարժողական և շոշափելիքի զգացողությունը: Օրինակ՝ քայլել դաստիարակի հետևից կամ մինչև նշված խաղալիքը, սողանցել պարանի տակով կամ օղակի միջով, քայլել գլորվող գնդակի հետևից՝ վերցնել և հետ բերել, ձեռքերով բռնել ու շոշափել տարբեր մեծության, չափի ու ձևի առարկաներ և այլն:

Վարժություններն ընտրվում են՝ հաշվի առնելով երեխաների օրգանիզմի կենսաբանական հնարավորությունները:

Տարվա վերջում վարժությունների համալիրի մեջ ընդգրկվում են այնպիսի վարժություններ, որոնք նպաստում են ձևավորելու երեխայի մարմնի ուղիղ դիրքը պահելու, ինքնուրույն կանգնելու և նստելու, իրանի թեքվելու և ուղղվելու կարողությունները: Կանգնած և նստած դրությունից վարժություններ կատարվում են նաև օգտագործելով փոքր առարկաներ:

Այս տարիքում անհրաժեշտ է երեխաների մեջ ձևավորել կայուն դրական վերաբերմունք շարժախաղերի նկատմամբ:

Շարժախաղեր անցկացվում են ամեն օր՝ օգտագործելով խաղալիքներ և առանց խաղալիքների:

Շարժախաղերը նպաստում են երեխաների հիմնական շարժումների (քայլքի, սողալու, մագլցելու, գնդակը գլորելու և նետելու) զարգացմանը, ձևավորում են՝ ուղիղ և միևնույն ուղղությամբ շարժվելու, միմյանց չհրելու, մեծահասակներին ուշադիր լսելու, ազդանշանով գործելու հմտությունների ձևավորմանը:

Մեկ տարեկանից մինչև մեկ տարեկան 6 ամսական երեխաների համար շարժախաղեր անցկացվում են անհատապես, իսկ դրանից ավելի բարձր տարիքի երեխաների հետ դրանք կարելի է կազմակերպել և՛ անհատապես, և՛ խմբերով (2-3 երեխա): Երեխաների ինքնուրույն խաղերը խաղալիքներով (ավտոմեքենաներ, ինքնաթիռներ և այլն) խթանում են նրանց շարժողական ակտիվությանը:

Օրվա մոտավոր կարգացուցակ (ռեժիմ)

Կյանքի երկրորդ տարվա ընթացքում երեխայի արթնության հատվածի տևողությունը փոխվում է (տարբերությունը 1,52 ժամ): Այդ պատճառով այս խմբում սահմանվում է երկու ռեժիմ:

Կյանքի երկրորդ տարում օրվա մոտավոր ռեժիմ կազմվում է տարիքային երկու ենթախմբերի համար՝ 1տարեկանից – 1,5 և 1,5 – 2 տարեկանում՝ նկատի ունենալով նրանց նյարդային համակարգի առանձնահատկությունները, որոնցով պայմանավորված են նշված երկու ենթախմբերի օրվա ռեժիմների տարբերությունները:

Տարիքը	Կերակ. քանակը	Կերակր. միջև եղած տևողութ.	Արթուն. ամեն պահի տևող.	Ցերեկ. քնի քանակը	Քնի յուրաքանչ. պահի տևող.	քնի ընդհ. տևող.
11,5 տ	5	4,5 ժամ 3 ժամ 1,5 ժամ 2,5 ժամ	3 ժամ 3 ժամ 3,5 ժամ	2	2,5 ժամ 1,5 ժամ գիշերային՝ 10,5 ժամ	14,5 ժամ
1,52տ	5	3,5 ժամ 4,5 ժամ 3,5 ժամ	5,5 ժամ 5 ժամ	1	3 ժամ գիշերային՝ 10,5 ժամ	13,5 ժամ

Առաջին ենթախմբի զբոսանքը նպատակահարմար է կատարել ճաշից և հետճաշիկից, երկրորդ ենթախմբի զբոսանքը՝ նախաճաշից, ճաշից և հետճաշիկից հետո:

Ցերեկային մեկ քնի ռեժիմին անցնելը պայմանավորված է ոչ միայն երեխայի տարիքով, այլև նրա վիճակով: Ցերեկային մեկ քնի ռեժիմին պետք է անցնել միայն այն ժամանակ, եթե երեխան առողջ է: Երեխայի երկրորդ ռեժիմին փոխադրելուց որոշ ժամանակ անց, եթե նրա մեջ դրսևորվում են հոգնածության, վատ տրամադրության նշաններ, և դժվար է կարգավորել երեխայի վարքը. հարմար է նրան կրկին փոխադրել երեկոյան երկու քնի ռեժիմի:

Կյանքի երկրորդ տարվա երկրորդ կիսամյակից երեխաներին պետք է ներգրավել մաքրության և կարգուկանոնի պահպանման աշխատանքներում: Սկզբում մեծահասակը ցույց տալով երեխայի կեղտոտ քի-

թը, հանուն է թաշկինակը, մաքրում: Չետագայում երեխան դա նկատելով՝ ինքնուրույն է կատարում:

Օգտագործվող մեթոդները պետք է կիրառել նաև վարքագծի կանոնների դաստիարակման նպատակով՝ կարողանալ սպասել, չխանգարել ուրիշին, հանգիստ կատարել մեծերի կողմից տրվող հանձնարարությունը, հավաքել, տեղը դնել խաղալիքը, պահպանել մաքրություն և այլն: Երեխային պետք է ներկայացնել նոր պահանջ, եթե նա նախկին հանձնարարությունը կարողանում է արդեն առանց դժվարության կատարել՝ չմոռանալով, որ վաղ տարիքում ձեռք բերված կարողությունները դեռևս անկայուն են: Դրանք խախտվում են հատկապես նոր իրավիճակում: Դրա համար առօրյայում պետք է ամրապնդել այդ վարժանքները՝ վերածելով կայուն սովորույթի: Օրինակ՝ եթե երեխաներին մեկ անգամ թույլատրվի առանց լվացվելու նստել սեղանի շուրջ՝ հաց ուտելու, ապա նրանք կսկսեն մոռանալ ձեռքերը լվանալու անհրաժեշտությունը: Դրա համար հարկավոր է հետևողականորեն հիշեցնել այդ մասին: Բացի այդ, պետք է հասնել նրան, որ երեխաները միշտ կատարեն կանոնները: Կյանքի 2-րդ տարում հարկավոր է երեխաներին սովորեցնել այն, ինչ նախորդ աստիճանում բավարար չի յուրացվել: Դա հիմնականում վերաբերում է վարքագծի կանոնների և կուլտուր-հիմնիկ ունակությունների դաստիարակմանը:

Այս կամ այն կարողությունների, հմտությունների և վարքի տարրական կանոնների ձևավորման ու դաստիարակման տարիքային սահմանները, հատկապես վաղ տարիքի առաջին և երկրորդ խմբերում, առանձին դեպքերում բավականին տատանվում են: Դրանք պայմանավորված են երեխաների անհատական առանձնահատկություններով, փորձով և այն հանգամանքով, թե ինչպես են նրան սովորեցրել:

Վաղ տարիքում երեխան առանց տատանվելու, անգամ իր ուժերից վեր դժվարություն ներկայացվող գործեր է կատարում և հաճույքով ձգտում կրկնել, տիրապետել դրան, ծանոթանալ առարկաների անուններին: Իսկ այն, ինչ համապատասխանում է նրա ուժերին, նրա համար դառնում է սովորական և պարտադիր:

Կյանքի երկրորդ տարում առարկաների հետ գործողությունները դառնում են առաջատար: Ինքնուրույն քայլելու ունակություններին տիրապետելը ավելի բարդ հիմնական շարժումների ծագման նախապայման է հանդիսանում:

Ծրագրային խնդիրների իրագործման հզոր միջոց են կենցաղում, պարապմունքների և խաղերի ընթացքում *մեծերի հետ շփումը*: Մեծի խոսքն աստիճանաբար դառնում է երեխայի վարքի կազմակերպման գործարար միջոց, երեխայի ճանաչողական ակտիվության և ինքնուրույնության խթան: Դրա համար անհրաժեշտ է ապահովել մեծահասակի անընդհատ շփումը երեխայի հետ և երեխայի մեջ առաջացնել *շփման պահանջ*: Մեծահասակի վարքը պետք ընդօրինակման դրական օրինակ լինի: Երեխան պետք է մեծանա խաղաղ, հանգիստ, զարգացնող միջավայրում: Այս տարիքում հատկապես գիտելիքներ ստանում են *խաղային ձևով*, որոնք կրում են հիմնականում գործնական բնույթ: Առօրյա կյանքում, տարբեր իրադրությունների ժամանակ երեխաների ուշադրությունը պետք է բևեռել շրջապատող առարկաների և երևույթների վրա, ցուցադրել, թե ինչպես կարելի է օգտվել կենցաղային առարկաներից և խաղալիքներից, տալ խոսքի ճիշտ, գրագետ օրինակ, խթանել ընդօրինակումը՝ օգտագործելով քառյակներ, զվարճախոսություններ, ստեղծել գրավիչ իրադրություն, ուրախ տրամադրություն, որոնք երեխային կմղեն իրենց խոսքում օգտագործելու շրջապատում գտնվող մարդկանց, առարկաների, բույսերի, կենդանիների, գործողությունների անուններ և անվանումներ: Անհրաժեշտ է ստեղծել իրադրություններ երկխոսությունների համար, որոնք կարող են խթանել ընդարձակ նախադասությունների օգտագործումը, հնչընդօրինակման բառերն ընդհանուր գործածական բառերով փոխարինումը (օրինակ՝ տիկ-տակ-ժամացույց):

Երեխաներին պետք է հնարավորություն տալ կատարելու այն ամենը, ինչ կարող են: Երեխայի ակտիվ մասնակցությունը կերակրման, հանվել-հագնվելու գործողություններին կենտրոնացնում է ուշադրությունը: Կենտրոնանալով ակտիվ, ինքնուրույն գործողությունների վրա, նա դառնում է ավելի կազմակերպված, ինքնուրույն, հանգիստ: Իրերի հետ գոր-

ծողություններով ուղեկցվող բառային ցուցումները զարգացնում են խոսքի հասկանալը և ակտիվությունը:

Երեխաներին պետք է ներգրավել մաքրության և կարգուկանոնի պահպանման գործընթացների մեջ: Օրինակ՝ երեխային ցույց տալով իր կեղտոտ դեմքը, մեծահասակը մաքրում է թաշկինակով: Երկու տարեկանից հետո երեխան, առանց զգուշացման ինքնուրույն է դա անում:

Երեխաների հետ խոսակցելու ամենաբարենպաստ միջոցներն են՝ *զբոսանքները, խաղերն ու պարապմունքները(դիդակտիկ նյութերով և խաղալիքներով, առարկաներով գործիքներով, կառուցողական նյութերով)*: Ջրոսանքների, դիտումների ժամանակ քարերի, բնական նյութերի, բույսերի բազմազանությունը երեխաներին տեղեկատվություն հաղորդելու անսպառ աղբյուր է: Դրա համար պետք է օգտագործել յուրաքանչյուր առիթ:

Խաղերի, ինքնուրույն գործունեության, *նկարների դիտման* կազմակերպումը ապահովում է երեխաների առույգ վարքը և դրական հուզական վիճակը:

Լարովի, սյուժետապատկերավոր խաղալիքների ցուցադրումը, խաղ-զվարճությունների անցկացումը երեխաների մեջ առաջացնում է հետաքրքրություն և դրական-հուզական վերաբերմունք:

Այս տարիքում երեխաներն ավելի հաճախ են մենախոսում, տարբեր հնչյուններ, վանկեր արտաբերելուց հետո արտասանում են առանձին բառեր: Աստիճանաբար երեխան ինքն իրեն անցնում է իր խաղը ներկայացնելու-պատմելու գործին՝ պատմումները մասնակիորեն ուղղելով խաղալիքներին կամ իր մոտ գտնվող մեծահասակին:

Կյանքի երկրորդ տարվա վերջում երեխաների խոսքն ավելի բազմազան է դառնում, երբ նրանք դիմում են մեծերին, պատասխանում նրանց հարցերին, հաղորդում են իրենց զգացածը, պատմում բառերով, իսկ ինքն իր հետ խոսելը բազմազանություն չունի: Չենց դա էլ համարվում է խոսքի վարժեցման մեթոդներից մեկը: Երեխաներն ամենից շատ խոսում են խաղալիքների հետ՝ հիմնականում օգտագործելով դաստիարակի խոսքում և կենցաղում հնչած բառերը: Սակայն բոլոր երեխաները չէ, որ խաղալիս խոսում են: Խոսքի ակտիվացման համար

հարկավոր է, որ երեխաները սովորեն՝ ինչպես կերակրել տիկնիկին, ինչպես լողացնել նրան և այլն:

Խաղերի մեջ *առարկա փոխարինողների*, երևակայական առարկաների օգտագործումը նպաստում է, որ երեխաները տիրապետեն առարկաների ճիշտ անվանմանը և նշանակությանը, ինչպես նաև հասկանան խաղի իմաստը:

Այս տարիքում դաստիարակչական հիմնական մեթոդը *ուղղություն սովող ցուցումն է*, այլ ոչ թե քարոզը: Արդյունավետ է նաև վտանգավոր և վատ արարքներից ուշադրության շեղումը, ինչպես նաև «ցուցադրում՝անվանելով» մեթոդը: Վերջինս կարելի է կիրառել՝ ներգրավելով նաև մի քանի երեխաների և կազմակերպել խմբային պարապմունք:

«Ցուցադրում՝ անվանելով» մեթոդն օգտագործելիս պետք է նկատի ունենալ, որ գնալով ավելի արագ են ձևավորվում դեպի հասկանալը տանող կապերը: Բազմաթիվ կրկնությունները և միաժամանակ ցույց տալը, «Ցուցադրում՝ անվանելով» մեթոդի կիրառումը 1,5 տարեկանից հետո հարկ չկա կազմակերպել որպես հատուկ պարապմունք: Պետք չէ պնդել, որ հարկավոր է երկու տարեկանում առանձին՝ ընդգծված ձևով իրականացվեն «Ցուցադրում՝ անվանելով» և «ձայնանմանեցման» մեթոդները:

Հաճախ մեծահասակը երեխայի խնդրանքը լուռ կատարում է կամ զրուցում այլ հարցերի շուրջ՝ բաց թողնելով երեխայի խոսքի զարգացման բարենպաստ պահը: Անհրաժեշտ է երեխային հուշել պարզ, հեշտ արտաբերվող բառեր, որոնցով կարտահայտվի նրա խնդրանքը, և մի քանի անգամ կրկնելով երեխան կծգտի ընդօրինակման: Պարզ է, որ երեխան հետո կօգտվի այդ բառից: Խորհուրդ է տրվում օգտվել ինչպես վերը նշված, այնպես էլ *«Անհրաժեշտ բառի հուշում»* մեթոդներից: Դրանք խոսքի ուսուցման անմիջական ու հիմնական ձևեր են:

Մեկուկես տարեկանում մեծի խոսքը երեխայի համար որոշ չափով կորցնում է իր յուրահատկությունն ու հետաքրքրությունը: Այդ ժամանակ սովորական առաջադրանքը տրվում է ավելի միջնորդավորված (օրինակ՝ դաստիարակը երեխայի քնելու պահից առաջ կարող է հարցնել

խաղացող երեխային, թե արդյոք քնելու ժամանակը չէ: Դա նրա համար դիմելու նոր ու անսովոր ձև է, ուստի երեխան կարող է մոտենալ մահճակալին, իսկ դաստիարակը՝ օգնել նրան միաժամանակ խոսելով հագուստի, գործողությունների և տվյալ պահին համահունչ շատ այլ հարցերի շուրջ՝ կրկնելով ուսուցանվող բառերը և երեխային մղելով կրկնության: Կամ տատիկը կարող է թռնիկին հանձնարարել, որ մորը հիշեցնի՝ իրեն ուղեկցել քնելու և այլն): «Ասա», «Կրկնի՛ր» բառերի իմաստը հասկանալը նոր նշանակություն է տալիս ընդօրինակմանը և վարժեցնում երեխաներին հնչարտաբերման: Հենվելով երեխային վարժեցնելու կարճ միջոցի վրա (երեխան իր ցանկությունն արտահայտում է ժեստով, բղավոցով, շարժումով), նրան տրվում է նոր բառեր՝ «Թո՛ղ», «Նստի՛ր», «Արի՛», «Տու՛ր» յուրացնելու հնարավորությունը և այլն: Հարկավոր է երեխաներին վարժեցնել օգտագործելու «Կարելի՛ է», «Թու՛յլ տուր» կամ նման բառեր, որոնք կանխում են վեճերը երեխաների միջև:

Պետք է երեխաներին մասնակից դարձնել զվարճություններին, տոնական ցերեկույթներին, զգացնել տալ նրանց այդ օրերի հանդիսավորությունը՝ խմբասենյակի զարդարմամբ, ուրախ երաժշտությամբ, բարձր տրամադրությամբ, գեղեցիկ հագուստով:

Չի՛ կարելի երեխային հանձնարարություն տալ, երբ նա զբաղված է խաղով, ուշադիր ինչ-որ բան է դիտում կամ զրուցում: Եթե երեխան անմիջապես չի կռահում առաջադրանքը, կարելի է հուշել կամ օգնել նրան՝ կատարելու պահանջված գործողությունը:

Խոսքի արագ զարգացման հետ կապված՝ երեխաների մեջ զարգանում և փոփոխվում է հոգեկան գործընթացների բնույթը (հիշողություն, ընկալում և այլն): Ուստի երեխայի հետ կարելի է խոսել ոչ միայն այն մասին, թե ինչ են անում կամ տեսնում խոսակցության պահին, այլև զրուցել, թե ինչ է եղել իրենց ոչ այնքան վաղ փորձում, կամ իրենց կյանքում հաճախ կրկնվող իրավիճակների ու շատ ծանոթ առարկաների մասին:

Մեկ բառով պատասխաններից հետո երեխան սովորում է տիրապետել 2-3 բառերից կազմված նախադասություններով պատասխանների:

Նրանք մտապահում են շատ կրկնված երկտող բանաստեղծություններ, երգերի վերջին տողերը: Երգել կարելի է նաև այն ժամանակ, երբ երեխաները խաղում են կամ զբաղված են որևէ այլ գործով:

Նշված մեթոդները չեն կարող բավարար համարվել: Խոսքի զարգացման համար կարևոր է նաև երեխայի *կյանքի ճիշտ կազմակերպումը*: Այն ներառում է տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառումը, ռեժիմի պահպանումը, խաղի և պարապմունքի բովանդակությունն ու բնույթը, երեխաների կողմից անգործունյա և սպասողական վիճակի ու շտապողականության բացառումը, երեխաների ներգրավումը համատեղ աշխատանքի մեջ:

Խոսքի զարգացում և շրջապատում կողմնորոշման ընդլայնում

Ամենօրյա կյանքում, ռեժիմային տարբեր պահերի, խաղերի և զբոսանքների ժամանակ հարկավոր է երեխաների ուշադրությունը հրավիրել շրջապատի առարկաների և դրանցից օգտվելու եղանակների(մի քանի գործողությունների)վրա: Պետք է խթանել, որպեսզի երեխան ձգտի շփման մեջ մտնել մեծերի և մյուս երեխաների հետ: Խոսքի մեջ տալ ճիշտ օրինակ՝ զարգացնելու համար ընդօրինակումը, կատարելագործել արտասանությունը, խթանել պարզ նախադասություններով պատասխանելու փորձերը, դաստիարակել խոսքային հաղորդակցման պահանջ:

Կյանքի երկրորդ տարվա ընթացքում պետք է ձևավորել երեխայի խոսքային բոլոր տեսակի ռեակցիաները, զարգացնել խոսքը հասկանալու, ընդօրինակելու կարողությունները, նպաստել բառապաշարի հարըստացմանը, խոսքի հնչարտասանության և հնչերանգի զարգացմանը:

Երկրորդ կիսամյակում նշված խնդիրների հետ մեկտեղ հարկավոր է կատարելագործել ակտիվ խոսքի զարգացումը:

1 տարեկանից 1,5 տարեկաններ

Խոսքը հասկանալու զարգացում

Այս փուլում ընդլայնվում է երեխայի հասկանալի բառապաշարը (բառեր, որոնք նշանակում են առարկաների, կենդանիների, գործողությունների անուններ և անվանումներ, ինչպես նաև երեխաներին հասկանալի, վառ արտահայտված առարկաների հատկանիշներ):

Երեխան պետք է իմանա իր և մտերիմ մարդկանց, ծանոթ կենդանիների և բույսերի անունները, ավելի հաճախ օգտագործվող առարկաների, փոխադրական միջոցների անվանումները, ճանաչի մարդու և կենդանու մարմնի մասերը նշանակող բառեր(ձեռք, ոտք, գլուխ, բերան, աչք, ականջ):

Չարկավոր է երեխային սովորեցնել՝ հասկանալ տիկնիկներով, խաղալիքներով կատարվող 1-3 գործողություններից կազմված, փոքրիկ բեմականացումներ, որոնք արտացոլում են ծանոթ կենցաղային և զվարճալի իրադրություններ, բեմականացումներում ներդնել փոխադրական միջոցներ՝ սայլակ, ավտոմեքենա, խաղալիք, առարկա, 2-3 տեսակի ամանեղեն, կահույք, հագուստ: Միաժամանակ պետք է սովորեցնել հասկանալ ամբողջական նախադասությունների իմաստը, զարգացնել պատկերվող իրադրությունների ընթացքին հետևելու կարողություն:

Անհրաժեշտ է շարունակել սովորեցնել ընդհանրացնել առարկաներն իրենց էական հատկանիշներով, հասկանալ տիկնիկով կատարվող բեմականացման բովանդակությունը, որն արտահայտում է ոչ միայն 1-3 պարզ գործողություն, այլև միմյանց հետ փոխկապակցված, իրարից բխող դեպքերի շղթա (օրինակ՝ տիկնիկը հիվանդ է, նրան այցելում է բժիշկը, չափում ջերմությունը, տալիս դեղահաբեր):

Դաստիարակը պետք է հետևողականորեն ստեղծի երեխայի կողմից խոսքը հասկանալու նախադրյալներ: Երեխան մեծի խնդրանքով գտնում է առարկան, ճանաչում այն առարկայական, ապա և սյուժետային նկարներում: Կատարում է խոսքի հասկացման ընդհանրացում՝ միանման առարկաների խմբավորում:

Այս հասակում երեխաները պետք է կարողանան ունկնդրել և փորձել վերարտադրել ծանոթ քառյակներ, ժողովրդական ստեղծագործությունների, երգերի փոքրիկ, դյուրահունչ տեքստեր, կատարել ռիթմին համապատասխան խաղային գործողություններ՝ դոփ-դոփ, ծափիկ-ծափիկ և այլն:

Ընդարձակվում է երեխաների կենցաղին, խաղին վերաբերող հասկանալի բառերի պաշարը:

Ձարգանում են իրադրությամբ չամրապնդվող խոսքը հասկանալու նախադրյալներ:

Երեխաները կարողանում են կատարել «Չասկանալի խոսքն ընդհանրացնող» (գտնել, ցույց տալ էական ընդհանուր հատկանիշներ ունեցող առարկաներ) առաջադրանքներ:

Չարկավոր է շարունակել զարգացնել արտահայտիչ խոսքի ընկալումը՝ գեղարվեստական ստեղծագործության համապատասխան հարցական, բացականչական ձայներանգներով:

Ակտիվ խոսքի զարգացում

Շարունակել խթանել առանձին բառերով ակտիվ թոթովանքը:

Սովորեցնել ընդօրինակել և կրկնել մեծի կողմից հաճախ լսվող հնչյունակապակցություններն ու բառերը՝ վախ, զարմանք, ուրախություն, վրդովմունք արտահայտող ինտոնացիաներով:

Սովորեցնել կառուցել երկու բառից կազմված նախադասություն, որն արտահայտում է առարկայի և գործողության հարաբերություն:

Երեխաները պետք է կարողանան մատչելի խոսքային միջոցներով պատասխանել հարցերին, կատարել մեկ գործողությունից կազմված պարզ հանձնարարություն՝ անվանելով առարկան և կատարվող գործողությունը:

Ռեժիմային տարբեր պահերին, ինքնուրույն գործունեության ընթացքում պետք է երեխաներին մղել ճիշտ արտասանելու և կրկնելու տարբեր արտահայտչականությամբ (վախ, զարմանք, ուրախություն, վրդովմունք և այլն) առանձին հեշտ բառեր՝ օգտագործելով գրավիչ իրադրություններ:

Շարունակել լրացնել ակտիվ բառապաշարը՝ անուններով, անվանումներով, ամենօրա գործողություններ ցույց տվող բառերով:

Սովորեցնել համապատասխանաբան նշանակությամբ առարկա-խաղալիքներով կատարել գործողություն և ներկայացնել խոսքով (օրինակ՝ «Լիլիթ, արի՛ տիկնիկին կերակրե՛նք», «Տու՛ր ինձ տիկնիկի ափսե՛ն, Նարե՛»):

Սովորեցնել գտնել և անվանել առավել ծանոթ առարկաները՝ անկախ գույնից, չափից և ձևից:

Բեմականացման ժամանակ օգտագործել սիրված խաղալիքներ:

Որպես հաղորդակցման միջոց դիմախաղերից ու շարժումներից ձևավորել խոսքային մատչելի միջոցներին անցնելու կարողություն:

Ջարգացնել երեխաների խոսքային հաղորդակցումը մեծերի հետ, նախաձեռնողական և պատասխան խոսքը:

Դիմախաղից ու ժեստերից անցնել մատչելի խոսքային միջոցի:

Վարժեցնել արտահայտելու երկու բառից կազմված նախադասություն:

1,5 տարեկանից 2 տարեկան

խոսքը հասկանալու զարգացում

Ամրապնդել նախորդ ենթախմբի ծրագրային խնդիրները. մարդկանց, կենդանիների, բույսերի առարկաների և դրանց հատկությունները նշանակող բառերը հասկանալը:

Ամրապնդել և ընդարձակել մարդկանց և կենդանիների գործունեություն (օրինակ՝ ցանկանալ ուտել), ֆիզիկական վիճակ (օրինակ՝ թաց է), օգնություն (օրինակ՝ օգնենք հիվանդ տիկնիկին) արտահայտող բառերի պաշարը:

Սովորեցնել հասկանալ առարկաների որակը, չափը, գույնը, ձևը, յուրահատկությունը արտահայտող բառեր, որոնք ըմբռնել են տեսողական, լսողական, շոշափելիքի զգայական ընկալմամբ և արժևորմամբ (լավն է, վատն է), ինչպես նաև մատչելի տարածական(այստեղ), ժամանակի (հիմա) հարաբերություններն արտահայտող բառեր:

Սովորեցնել հասկանալ բնակելի շենքի սենյակների անուններ, ազատ կողմնորոշվել, իմանալ դրանց նշանակությունը:

Հասկանալ տարբեր իրադրություններ՝ սեղանի վրա, այստեղ, այնտեղ, վրա, տակ, մեջ:

Ընդարձակել երեխայի խոսքը՝ շրջապատի մարդկանց և առարկաների, մի քանի կենդանիների ու բույսերի, նրանց մասերի, գույնի, ձևե-

րի և հատկությունների անուններն ու անվանումներն արտահայտող բառերով:

Հասկանալ մեծի խոսքն ու նրա ցուցումները, կատարել միմյանց հետ կապված 2-3 գործողություններ արտահայտող ոչ բարդ հանձնարարություններ:

Բառային ցուցումով, ընտրության բարդացված իրավիճակում կարողանալ գտնել ձևով նման առարկա-խաղալիքներ (օրինակ՝ գնդակ-գնդիկ):

Երեխաների հետ շփվելիս օգտագործել քառյակներ, զվարճախոսություններ՝ ուրախ տրամադրություն ստեղծելու նպատակով:

Շարունակել սովորեցնել ընդհանրացնել առարկաներն իրենց էական հատկանիշներով, հասկանալ տիկնիկով կատարվող բեմականացման բովանդակությունը, որն արտահայտում է ոչ միայն 1-3, այլև միմյանց հետ փոխկապակցված, իրարից բխող դեպքերի շղթա (օրինակ՝ տիկնիկը հիվանդ է, նրան այցելում է բժիշկը, չափում ջերմությունը, տալիս դեղահաբեր):

Սովորեցնել հասկանալ ոչ բարդ պատմվածք՝ սյուժետային նկարներով, ապա համառոտ պատմվածք կամ հեքիաթ՝ առանց երեխայի փորձի մեջ եղած դեպքերի նկարների ցուցադրման:

Ծանոթացնել թռչունների և այլ կենդանիների 2-3 տարբերակիչ առանձնահատկություններին, սովորեցնել ճանաչել դրանք ոչ բարդ սյուժետային նկարներում:

Ամրապնդել և դաստիարակել հետաքրքրություն՝ մեծերի աշխատանքի նկատմամբ, արթնացնել համատեղ աշխատանքում ներգրավվելու ցանկություն:

Ընդարձակել մեծերի աշխատանքը ներկայացնող հասկանալի բառերի պաշարը:

Օգնել երեխաներին՝ հասկանալու խաղալիքների, նկարների և գործողությունների ցուցադրմամբ ուղեկցվող, ընթերցված պարզ բովանդակությամբ պատմվածքների, քառատողերի, բանաստեղծությունների իմաստը:

Ակտիվ խոսքի զարգացում

Խթանել մեծի բառերն ու նախադասությունները ընդօրինակելու, կրկնելու, վերարտադրելու ձգտումները, ավարտել մեծի հնչեցրած երգը, բանաստեղծությունը:

Խրախուսել երեխայի կողմից ձայնաընդօրինակման, բառերը գործածական բառերով փոխարինելու մղումները (օրինակ՝ հաֆ-հաֆ՝ շուն): Ընդօրինակել մեծի կողմից ասված ոչ միայն բառերը, այլև նախադասությունները:

Պարապմունքների ժամանակ խթանել երեխաների ակտիվ խոսքի զուգակցումը առարկաների հետ կատարվող գործողություններին (օրինակ՝ «Ի՞նչ հագցնենք տիկնիկին»...):

Սովորեցնել խաղալիքով և նկարով ճանաչել տարբեր սեռի մարդկանց՝ ըստ արտաքին տեսքի և հագուստի, տարիքի և կարգավիճակի (հայր, մայր, տատ, պապ, թոռնիկ և այլն):

Տեղեկություններ հաղորդել երեխաներին ծանոթ մի քանի փոխադրամիջոցների մասին: Կարողանալ դրանք գտնել նկարներում:

Ճանաչել և անվանել մի քանի ընտանի կենդանիներ՝ խաղալիքներով և նկարներով, հասկանալ կենդանիների նկատմամբ մարդու վերաբերմունքն արտահայտող բառեր և ցանկություն ունենալ վերարտադրել այդ իմաստները: Կենդանիներին դիտելիս արտահայտել նրանց որոշիչ առանձնահատկությունները, անվանել նրանց մարմնի մասերը:

Ակտիվացնել երեխաների պասիվ բառապաշարը:

Ձևավորել շրջապատի հետ փոխհարաբերություններ սահմանող բառերից (ուզում եմ, տու՛ր,գնա՛ մի կողմ, թո՛ղ...) օգտվելու կարողություն:

Ստեղծել երկխոսության զարգացմանը նպաստող իրադրություններ: Սովորեցնել անցնելու 3-4 բառից կազմված ընդարձակ նախադասությունների՝ օգտագործելով ածականներ և դերանուններ:

Խրախուսել հնչընդօրինակման բառերն ընդհանուր գործածական բառերով (տիկ-տակ՝ ժամացույց) փոխարինելու երեխայի փորձերը:

Ձևավորել հարցեր տալու, իրենց ցանկությունը, խնդրանքը արտահայտելու, տեսածը մի քանի բառով պատմելու կարողություն:

Երկրորդ տարվա վերջում սովորեցնել ունկնդրել ոչ ծավալուն բանաստեծություններ, հեքիաթներ և պատմվածքներ, որոնցում նկարագրվում են մարդկանց և կենդանիների արարքները, բնական երևույթներ, այլև արձագանքել դրանց բովանդակությանը:

Սովորեցնել դիտել գրքի նկարագրողումները:

Սովորեցնել հստակ արտասանել ձայնավոր և մատչելի բաղաձայն (բ, պ, մ, տ, գ) հնչյունները:

Ձարգացնել խոսքը՝ որպես շրջապատողների հետ հաղորդակցման հիմնական միջոց օգտագործելու միջոց, խթանել տարբեր առիթներով մեծերին և երեխաներին դիմելու, հարցեր տալու, խնդրանք արտահայտելու երեխայի ցանկությունը:

Սովորեցնել մի քանի բառով պատմել տեսածը:

Կյանքի երկրորդ տարում խոսքի զարգացման պարապմունքներն այդ ուղղությամբ տարվող ողջ աշխատանքի էական մասն են կազմում: Յուրաքանչյուր պարապմունքի բնորոշ հատկանիշն այն է, որ որոշակի նյութի ընտրությունը և պարապմունքի բովանդակությունը սերտորեն կապված են դրա նպատակի հետ: Խոսքի զարգացման հնարներին լավ տիրապետելով՝ դաստիարակը կարող է ցանկացած պարապմունք օգտագործել որպես խոսքային վարժություն, թեև դրա հիմնական նպատակը կարող է այլ լինել: Խոսքի զարգացման պարապմունքների ընթացքում դաստիարակի առջև դրված կարևորագույն խնդիրն է՝ գտնել այնպիսի բովանդակություն, որը թույլ կտա լայնորեն օգտագործել մեթոդական տարբեր հնարներ, պարապմունքը կառուցել հետաքրքիր, որպեսզի երեխաները ակտիվորեն ընդգրկվեն գործընթացի մեջ:

Պարապմունքի անցկացման համար անհրաժեշտ նյութի ընտրությունը

Պարապմունքի համար անհրաժեշտ է ունենալ հատուկ առարկաներ (խաղալիքներ, նկարներ): Դրանք պետք է օգտագործել միայն վերո-

Աշխարհայայտագրական և պատմական երեխաների համար անհասանելի վայրում:
Խոսքի զարգացման համար հիմնական դիդակտիկ նյութեր են հանդիսա-
նում խոշոր խաղալիքները և մեծ չափերի նկարները: Դրանք հիմնակա-
նում օգտագործվում են բոլոր տեսակի ցուցադրումների ժամանակ, իսկ
մանր խաղալիքները և ոչ մեծ չափերի նկարներն օգտագործվում են
տարբեր խաղերի ընթացքում:

Ծանոթացում բնությանը

Ընդարձակել երեխաների պատկերացումները շրջակա միջավայրի մասին: Ձևավորել հետաքրքրություն, գեղագիտական ընկալում և հոգատարություն բնության հանդեպ:

Տարրական կողմնորոշում՝ անկենդան բնության մեջ

Լրացնել երեխաների պատկերացումները ջրի վերաբերյալ՝ թափվում է, տաք (սառը) է, ջրում լողանում են: Մեկուկես տարեկանից սկսած՝ ավազը չոր (խոնավ) է, թափվում է:

Մեկուկես տարեկանից երեխաները պետք է դիտեն բնության երևույթներ, անվանեն դրանք և հաղորդեն մի քանի տեղեկություն. անձրև է գալիս, ամեն տեղ թաց է, զբոսնել չի լինի, արև է և այլն:

Ջրով խաղերը կազմակերպվում են մանկապարտեզի բակում կամ սենյակում՝ սկսած վաղ տարիքից: Փոքրիկը մի տարայից ջուրը լցնում է մյուսի մեջ, լողացնում տիկնիկին, լվանում խաղալիքները: Խաղահրապարակում նրանք հավաքվում են ջրափոսերի մոտ, նավակներ, թեթև և ծանր առարկաներ գցում ջրի մեջ, տեսնում, որ դրանք սուզվում են կամ ոչ: Դեռևս վաղ տարիքում երեխաներն արդեն իմանում են, որ ջուրը հոսում է և իր մշտական ձևը չունի:

Ձյունով խաղերը սովորեցնում են ձյան ձևափոխման մասին իմացություն: Դաստիարակը փոքրիկներին առաջարկում է ձյունից ծեփել ձնագունդ, գազար, նապաստակ և այլն: Այդ կերպ երեխաներն իմանում են, որ ձյունը կաչուն է:

Ավազով խաղեր երեխաները սիրում են բոլոր տարիքներում: Նրանք մեծերի օգնությամբ ծեփում են բլիթներ, տորթեր, ցանկապատ և այլն: Օգտագործում են նաև կաղապարներ:

Չարկավոր է երեխաներին հնարավորություն տալ գործողություններ կատարել տարբեր գույնի, ձևի և մեծության քարերով: Դիտել բնության երևույթներ, անվանել և խոսել այդ մասին:

Տարրական կողմնորոշում` կենդանի բնության մեջ

Ձբոսանքների ժամանակ հարկավոր է երեխաների ուշադրությունը հրավիրել ծառերի, ծաղիկների ու խոտի վրա: Մինչև մեկուկես տարեկան երեխան մեծի խնդրանքով պետք է ընտրի, գտնի միևնույն գույնի ծաղիկը: Երկու տարեկանը մեծի խնդրանքով պետք է ընտրի, գտնի որոշակի գույնի ծաղիկ, ինչպես նաև դիտի, համեմատի, գտնի, ընտրի նույն գույնի ծաղիկը, խոտը, ծառը և անվանի դրանք:

Անհրաժեշտ է երեխաներին ծանոթացնել բանջարեղենին, դրանց տեսքին, անվանումներին, հիմնական հատկություններին(հոտ, համ, գույն):

Նրանք պետք է կարողանան տարբերել դրանք բնական վիճակում և նկարներում, դիտել, ցույց տալ և անվանել խաղալիքների ու նկարներում պատկերված ձկների, թռչունների, կենդանիների մարմնի մասերը:

Թռչունի արգելափակումը վանդակում երեխաների վրա բացասական բարոյական ներգործություն է ունենում, այդ պատճառով խմբասենյակում (տանը) արգելվում է ունենալ թռչնի վանդակ: Հակացուցված է նաև խրտվիլակների օգտագործումը:

Անհրաժեշտ է ձևավորել հոգատար վերաբերմունք կենդանական և բուսական աշխարհի նկատմամբ:

Կարդալու և պատմելու, բեմականացնելու նյութերի օրինակելի ցանկ

(կարդալու պահանջմունքի և հետաքրքրության ձևավորման նպատակով)

Ժողովրդական բանահյուսության նմուշներ, քառատողեր.

«Ծիվ-ծիվ, աքլորածիվ», «Թըռ-թըռ», «Դոփ-դոփ արա», «Մատիկներով խաղ», «Նանիկ արա», և այլ խաղիկներ, որոնք երգեցիկ են, պարունակում են ձայնավոր հնչյուններ, կրկնություններ:

«Շաղգամը»` Կ. Ուշինսկի, «Ուլիկը»` Հ. Թումանյան` «Նորելուկը», «Բայ-բայ», «Հավիկ-հավիկ», Ս. Կապուտիկյան` «ճուտիկը», Ս. Մկրտչյան` «ճագարիկ», Ժ. Կոնդակչյան` «Ծիտիկ-ծիտիկ», Փ. Պողոսյան` «Ձի-ձի, փայտե ձի» Գ. Բորյան և այլն:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Տվյալ տարիքում շարունակվում են ձևավորվել երեխաների երաժշտական կարողությունների զարգացման հիմքերը: Հատկապես ակտիվ է զարգանում հուզական արձագանքը երաժշտության հանդեպ, առաջին հերթին երաժշտության ունկնդրման ժամանակ, ինչպես նաև մանկական տարրական կատարողական գործունեության ընթացքում:

Ջարգանում է երաժշտականության զգայական (սենսորային) հիմքը. երեխաները սկսում են արձագանքել երաժշտական հնչյունների արտահայտչականությանը՝ տենբրին, ուժգնությանը, բարձրությանը:

Սկսում են զարգանալ երաժշտական մտածողության և հիշողության հիմքերը:

Տարվա վերջում երեխան ունենում է երաժշտական տպավորությունների պաշար՝ կապված իրեն շրջապատող աշխարհի հետ:

Նա ճանաչում է ծանոթ ստեղծագործություններ, առանձնացնում առանձին մասերը, լսում արտահայտիչ հնչերանգները:

Երեխաների երաժշտական կարողությունները հաջողությամբ են զարգանում երաժշտության ընկալման, ինչպես վոկալ, այնպես էլ գործիքային երաժշտության միջոցով: Երեխան կարող է ինքնուրույն գտնել ձայնի աղբյուրը, նստել դրան մոտիկ և հաճույքով լսել երաժշտությունը:

Այս տարիքում երեխաները 3-4 րոպեի ընթացքում կարող են լսել երկուսից երեք երգ:

Երաժշտության մեջ երեխաները զգում են տրամադրությունը, ընդհանուր բնույթը, առանձին հնչերանգները. հուզականորեն են արձագանքում դրանց:

Այս տարիքում ակտիվանում է ֆիզիկական և հոգեկան զարգացումը, զարգանում է նաև երաժշտական ակտիվությունը: Երեխաները աշխուժանում են երգչային գործունեության մեջ, սկսում են նմանակել և երգի ունկնդրման ընթացքում ձայնակցել առանձին վանկերով՝ «հա՛ֆ-հա՛ֆ», «մյաու՛-մյաու՛» և այլն:

Երաժշտության ուղեկցությամբ շարժվելու ժամանակ նրանք դառնում են առավել ակտիվ, զարգանում են նաև նմանակման կարողությունները: Ի հայտ են գալիս նոր շարժումներ: Երեխաներն այնքան են ակտիվանում, որ սկսում են մեծերին ցույց տալ, թե ինչպես պետք է կատարել այս կամ այն շարժումը տվյալ պարային երաժշտության հնչյունների ներքո: Երեխաները սիրում են պարել երգերի ուղեկցությամբ, կատարում են պարզագույն տարրեր՝ զանազան պարագաներով:

Երաժշտության ուղեկցությամբ սյուժետային խաղերում նույնպես երեխաներն ակտիվանում են: Նրանց հատկապես դուր են գալիս այն խաղերը, որտեղ խաղային կերպարի դերը կատարում է խաղալիքը, որը ղեկավարվում է սկզբից մեծի, ապա երեխայի կողմից: Նրանց համար հետաքրքրաշարժ են այն խաղերը, որտեղ իրենք փախչում են խաղալիքից, իսկ հետո՝ բռնում են նրանց:

Երեխաների գործունեության մեջ առաջ են գալիս նախնական երաժշտաստեղծագործական սաղմեր: Այսպես՝ մեծերի կողմից «ճագարիկ» երգի կատարումից հետո երեխան կատարում է բովանդակությանը համապատասխան շարժումներ՝ կերակրում և շոյում է ճագարիկին:

Ձարգացման խնդիրները

1. Ձարգացնել երաժշտության գեղագիտական ընկալումը:

- Ձևավորել կայուն հետաքրքրություն երաժշտության հանդեպ:
Երգելու ընթացքում ծանոթացնել՝
- շրջապատող աշխարհին,
- ծանոթ մարդկանց հետ,
- ընտանի կենդանիներին և թռչուններին՝ կով, ձի, աքլոր, հավ,
- խաղալիքներին՝ կենդանիներ և թռչուններ,
- նվագարաններին՝ ակորդեոն,

- զարգացնել երաժշտականության հիմքերը, առաջացնել հուզական արձագանք տարբեր բնույթի, տեմպի և ուժգնության երաժշտության, ինչպես նաև հասկանալի երգչային հնչերանգների հանդեպ,

- զարգացնել լսողական կենտրոնացումը, խթանել լսելու և տարբերելու ունակությունը. երաժշտական հնչյունների արտահայտչականությունը՝ հակադիր հնչողությամբ, հնչերանգով, ուժգնությամբ, հնչյունի բարձրությամբ,

- զարգացնել երաժշտական հիշողությունը, խթանել մտապահելու քիչ թվով գործիքային երաժշտական ստեղծագործություններ, երգեր, պարեր:

2. Զարգացնել երեխաների ակտիվությունը երաժշտական գործունեության ընթացքում:

- խթանել երաժշտության ունկնդրման ընթացքում ցույց տալու սեփական հույզերը երաժշտական կերպարի և բնույթի հանդեպ՝ արտաբերելով հույզերը ձայնով, դիմախաղով և շարժումներով,

- երգի մեջ խթանել տարրական երգչային գործունեությունը՝ ձայնակցել առանձին վանկեր, բառեր և այլն,

- պարային գործունեության մեջ խթանել կատարելու պարզ պարային շարժումներ՝ երգի բովանդակության համապատասխան ծափ տալ, դոփել մեկ և երկու ոտքով, ճոճվել ոտքերի վրա, անհատապես և զույգերով մեծահասակների հետ միասին,

- խաղային գործունեության մեջ խթանել կատարելու պարզ խաղային գործողություններ՝ փնտրել արջուկին, փախչել տիկնիկից, թռչել ինչպես ծիտիկը,

- խթանել երեխաների պարզ ստեղծագործական ինքնուրույնությանը:

Ձարգացման ցուցանիշները

Մեկ տարեկանից մինչև մեկ տարեկան վեց ամսական

- Բավականին զարգացած է երաժշտական ընկալունակությունը, երեխան կարող է լսել երաժշտություն՝ մոտավորապես 20 վայրկյան: Գործունեության տեսակների փոփոխումից հետո նորից պատրաստ է լսել երաժշտություն:

- Ձարգացած է հուզական արձագանքը՝ հակադիր բնույթի երաժշտության ուժգնության, տեմբրի և արտահայտչամիջոցների նկատմամբ:

- Երեխան ցուցաբերում է երաժշտական ակտիվություն:

- Ցուցադրում է իր վերաբերմունքը երաժշտության հանդեպ:

- Երգեցողության մեջ նմանակում է մեծահասակի երգչային հնչերանգները, ձայնակցում առանձին վանկերով՝ «լա-լա», «հեյ-հեյ» և այլն:

- Մեծահասակի հետ և ինքնուրույն ուրախ պարային երաժշտություն լսելուն պես սկսում է պարել, ի հայտ են գալիս նոր շարժումներ: Կատարում է նաև երգի բովանդակությանը համապատասխան շարժումներ՝ դոփյուններ, պտույտներ:

- Խաղային գործողությունները դառնում են բազմազան՝ փնտրում է, վազում, ցատկում և այլն:

Մեկ տարեկան վեց ամսականից մինչև երկու տարեկան

- Բավականին զարգացած է երաժշտական ընկալունակությունը, կա կայուն հետաքրքրություն երաժշտության հանդեպ, կարող է ունկնդրել մոտ 20 վայրկյան, երբեմն մի քիչ ավելին:

- Գիտի քիչ թվով երաժշտական ստեղծագործություններ, առանձնացնում սիրված ստեղծագործությունները. շատ գոհ է, երբ մեծահասակը կատարում է երգն իր ցանկությամբ:

- Հետաքրքրությամբ լսում է երգը մեծահասակի կատարմամբ, ինչպես նաև երգի մեղեդին՝ մանկական նվագարանով:

- Հուզականորեն արձագանքում է տարբեր բնույթի երաժշտությանը և առանձին երգչային հնչերանգներին՝ ուրախ, տխուր, հարց ու պատասխան, ինչպես նաև տարբեր երաժշտական խաղային պատկերներին:

- Տարբերում է առավել վառ, արտահայտիչ, բարձրությամբ, ձայներանգով հակադիր երաժշտական հնչյունների հարաբերությունները՝ մեծ և փոքր շնիկի հաչոցը, զանգակ և թմբուկ:

Երաժշտական ակտիվության զարգացում

- Երեխան միանում և ձայնակցում է մեղեդային կառուցվածքով պարզ, կրկնվող բառերով երգերի կատարմանը՝ «Նապաստակ - նապաստակ», կամ էլ քառյակային (կրկնվող բառատողեր) երգի մասի կրկնությանը «բայ -բայ»:

- Հաճույքով ընդգրկվում է պարերի մեջ՝ հատկապես մեծի կատարմամբ և ցուցադրմամբ. կարող է ինքնուրույն կատարել պարզ պարային շարժումներ՝ ծափեր, հարվածներ ծնկներին, ցատկեր, դոփյուններ, ճոճումներ մեկ ոտքից մյուսին, թեթև զսպանակ. շարժումները կարող են լինել շրջանաձև, զույգերով. հրավիրում են միմյանց պարելու, փորձում են ինքնուրույն շրջան կազմել, մեծի օգնությամբ փոքրացնում և մեծացնում են շրջանը:

- Հեշտությամբ միանում է խաղին՝ ստանալով գերագույն հաճույք. ըմբռնում է խաղային գործողություններից շատերը. կերակրել թռչնակին, խղճալ փիսիկին. փոփոխում է խաղային գործողությունները՝ համապատասխան երկմասանի հակադիր բնույթի երաժշտությանը. առաջին մասում քնում է, երկրորդ մասում՝ պարում, հուզականորեն արձագանքում իրեն հասկանալի խաղային իրավիճակներին՝ ցուցաբերելով երաժշտությունն ամբողջ խաղի ընթացքում լսելու պահանջ:

- Երեխան ի հայտ է բերում տարրական ստեղծագործական նախաձեռնություն. ինքնուրույն ընտրում է շարժումներ՝ խաղալիքով, տարբեր բնույթի երաժշտությանը համապատասխան:

Անճանաչելի երեխաների հետ կազմակերպվում են երաժշտական խաղեր և երաժշտության ունկնդրումներ:

Երաժշտական նյութերի ցանկ

Ներկայացված երգերն ուղեկցվում են խաղային և պարային շարժումներով.

- 1.«Ա՛յ ծիտիկ»՝ ժողովրդական
- 2.«Ծաղիկ ջան», երաժշտությունը՝ ժողովրդական, խոսք՝ Ն.Միքայելյանի
- 3.«Սեյրանի», երաժշտ.՝ ժողովրդական, խոսք՝ Ս. Կապուտիկյանի
- 4.«Փիսիկ», երաժշտությունը՝ Ա. Լուսինյանի, խոսք՝ Ն. Միքայելյանի
- 5.«Շվի», հայկական ժողովրդական
- 6.«Ուրախ պար», երաժշտությունը՝ Ա. Մանուկյանի
- 7.«Էծիկ», երաժշտությունը՝ Դ.Ղազարյանի. խոսք՝ Զ.Աղաբաբի
- 8.«Օրօր» երաժշտությունը՝ ժողովրդական, խոսք՝ Վ.Տալանի
- 9.Կատակ երգ-պար, երաժշտությունը՝ ժողովրդական, խոսք՝ Ն.Միքայելյանի
- 10.«Ձանգակներ»,երաժշտությունը՝ Ա.Լուսինյանի
- 11.«Ձան ծաղիկ», խոսք և երաժշտություն՝ ժողովրդական
- 12.«Գնդակախաղ», երաժշտությունը՝ Գ. Զքյանի
- 13.«Հովիվ», երաժշտությունը՝ ժողովրդական, խոսք՝ Ս.Կապուտիկյանի
- 14.«Թիթեռնիկ», երաժշտությունը՝ Ա.Լուսինյանի, խոսք՝ Լ.Պողոսյանի
- 15.«Մառան մտա», խոսք և երաժշտություն՝ ժողովրդական
16. «Նախշուն հավիկ», երաժշտ.՝ Ալ. Օհանյանի, խոսք՝ Գ.Գեղունու

Տոներ և զվարճանքներ

Տոնական ցերեկություններ

Ծրագրով նախատեսված են և համաժողովրդական տոների օրերին անցկացվում են ցերեկություններ՝ «Աշնան տոն», «Ամանոր», «Գարնան տոն» և այլն: Երեխաներն այդ օրերի անսովորությունը պետք է զգան իրենց և դաստիարակի արտաքին տեսքից և բոլորի բարձր տրամադրությունից, խմբասենյակի ձևավորումից: Այդ օրը երեխաների համար ցուցադրվում են սեղանային, տիկնիկային թատրոնի ուրախ և հետաքրքիր ներկայացումներ: Նրանք խաղում են, պարում, կատարում ծանոթ շարժումներ:

Զվարճանքներ

Երեխաներին պետք է մասնակից դարձնել զվարճանքներին: Մեծահասակների առաջադրանքով երեխան կատարելու է պարզ շարժումներ. հասնել նապաստակին, բռնել ծիտիկին, վարել ձիուկը և այլն: Հետաքրքրություն առաջացնել զավեշտական խաղալիքների նկատմամբ՝ կտցող թռչնակ, պարող տիկնիկ, թմբկահար նապաստակ, և առաջացնել դրանց գործողություններին հուզականորեն արձագանքելու ցանկություն:

Երեխաների համար ծաղրածուի մասնակցությամբ կարելի է ցուցադրել փոքրիկ պատկերներ. սեղանային խաղալիքներ, թատրոնի կերպարներ՝ տատիկ, պապիկ շնիկ, փիսիկ և այլն:

Տոների և զվարճանքների մոտավոր ցանկ

1. Ամանորի հանդես՝ «Տոնածառ»
2. Պատմվածքներ երաժշտական ձևավորումներով՝ «Անտառում», «Նվագարաններ»

3. Խաղեր երգերի ուղեկցությամբ՝ «Նունիկի փիսիկը», «Գնդակ», «Գորտը», «Աքլորիկ»

4. Ձվարճանքներ՝ «Հյուր ենք տիկնիկ Անուշիկին», «Հյուր ենք խաղալիքներին», «Ձմռան խաղեր», «Լուսիկ տիկնիկի ծննդյան օրը», «Ո՞վ է տնակում ապրում», «Կրկեսում», «Գազանանոցում» և այլն

5. Թատերականացված խաղեր՝ հայկական ժողովրդական հեքիաթների բեմականացումներ

6. Տիկնիկային ներկայացումներ, սեղանային, մատիկներով թատրոն

Մեթոդական ցուցումներ

Երաժշտական պարապմունքներն այս խմբում անցկացվում են հետևյալ հաճախականությամբ՝

1- 1,6 տարեկանում՝ շաբաթական 2-3 անգամ, 5-7րոպե,

1,6- 2 տարեկանում՝ շաբաթական 2 անգամ, 10րոպե:

Դաստիարակը կարող է օգտագործել նաև նվագարկիչ և այլ նվագարաններ:

Այս տարիքը բնութագրվում է երեք կարևոր ձեռքբերումներով. երեխան սկսում է խոսել, քայլել և տիրապետել առարկայով պարզ գործողություններ կատարելու միջոցներին: Երեխայի խոսքը դառնում է միջոց շրջապատի հետ շփվելու համար, իսկ մեծահասակի խոսքը կարևոր միջոց է նրանց դաստիարակության գործում: Այս ամենն իր հերթին նպաստում է երաժշտական կարողությունների զարգացմանը:

Մեկ տարեկանից մինչև մեկ տարեկան վեց ամսական

Կարևոր է այս տարիքում երեխաներին ընտելացնել երաժշտության ունկնդրմանը: Այդ նպատակով դաստիարակը ցույց է տալիս այն նվագարանը, որով հնչելու է երաժշտությունը, և որից հետո ասվում է «երաժշտություն» բառը:

Հետագայում բավական է դաստիարակը հնչեցնի այդ բառը, որպեսզի երեխաներն անմիջապես տրամադրվեն ունկնդրելու: Հայտնի է, որ այս տարիքում երեխաներն ակտիվ են և շարժուն, ուստի ունկնդրումն անցկացվում է խաղի ձևով: Դասիարակը ցույց է տալիս նվագարանն ու ասում «երաժշտություն» բառը, որից հետո հնչում է մեղեդին: Ունկնդրելուց հետո նվագարանը դնում է հատակին, այն ծածկում ծածկոցով և ասում. «Չկա երաժշտությունը, ու՞ր է այն»., ձեռքի շարժումով ցույց է տալիս, որ երաժշտությունը չկա: Երեխաները վազում են, կամ սողում դեպի նվագարանը և բացում ծածկոցը: Բարձրացնում են նվագարանը հատակից՝ ասելով. «Ահա երաժշտությունը»: Նորից ունկնդրում են մեղեդին: Սովորաբար նման խաղային պահից հետո երեխաներն ավելի մեծ հետաքրքրությամբ են ունկնդրում երաժշտությունը:

Այս տարիքում երեխաները հուզականորեն են արձագանքում երաժշտությանը, նրանց մեջ ի հայտ են գալիս պարզագույն երգչային կարողություններ, կարող են երգել առանձին վանկեր:

Երգչային խնդիրներն են՝

- սովորեցնել լսել աշխույժ և հանգիստ երգեր՝ դրանք զուգակցելով համապատասխան շարժումներով,

- ընտելացնել՝ լսել մեղեդին և տարբերել երգի բառերը, ճանաչել դրանք,

- խթանել երեխաներին՝ ձայնակցելու մեծահասակին և վերարտադրել առանձին վանկեր,

- զարգացնել նախնական երգչային հնչերանգները:

Ձայնակցել և երգել սովորեցնելու համար պետք է ընտրվեն հատուկ երգեր՝ մեղեդային պարզ կառուցվածքով, բառերի քիչ քանակով, կրկնվող բառակապակցություններով, օրինակ՝ «Նապաստակ», «ճագարիկ», «Փիսիկ» և այլն:

Երաժշտաշարժական ցուցադրումներն օգտագործվում են լայնորեն, քանի որ այս տարիքում երեխաները շատ են շարժվում, և կարողա-

նում են կողմնորոշվել իրենց շրջապատող տարածքում: Օգտագործվում են սյուժետային խաղալիքներ և տիկնիկներ: Տիկնիկների շարժումներն ուղեկցվում են երգով, հայացքներով, ձայնանմանակումներով: Դա երեխաներին հարստացնում է նոր երաժշտական տպավորություններով, մղում է նրանց՝ վերարտադրելու մեղեդու առանձին հնչերանգներ, պարզ բառեր, ինչպես նաև որոշ շարժումներ: Օրինակ՝ ծիտիկի մասին երգի ուսուցման ժամանակ երգի վերջում ծիտիկը թռչում է, իսկ դաստիարակն ասում է «Թըռ» և ձեռքերով ցույց տալիս ծիտիկի թռչելը: Երեխաները նմանակում են դաստիարակի շարժումները: Նրանք բացականչում են «ախ», երբ դաստիարակը ցույց է տալիս տիկնիկին, լռում են, երբ օրորում է, և պարում են, երբ դաստիարակը պարեցնում է տիկնիկին: Նոր խաղալիքի հետ սկզբում ծանոթանում են, հետո նոր միայն կատարում են երգը:

Խաղեր, պարեր

Երեխաները ցուցաբերում են սիրված պարային շարժումներ, որոնք համապատասխանում են հնչող մեղեդիներին: Պարերի ժամանակ նրանք զսպանակում են, դոփում ոտքերով, պտտվում տեղում, ծափ տալիս, շարժվում կից քայլերով՝ բռնած դաստիարակի ձեռքից: Երեխաները հաճույքով պարում են զույգերով՝ մեծահասակի հետ:

Ժամանակի ընթացքում երեխաները հասկանում են, որ երաժշտության ավարտի հետ պետք է ավարտել նաև շարժումները: Դրանում օգնում է դաստիարակը, որն ամեն անգամ երաժշտության ավարտին զուգընթաց տարածում է ձեռքերը՝ ցույց տալով, որ երաժշտությունն ավարտվել է: Սկզբից երեխաներն ուշացնում են դադարեցնել շարժումը, սակայն աստիճանաբար նրանք սկսում են ժամանակին դադարեցնել շարժումները:

Խաղերում երեխան սկսում է երաժշտության բնույթի փոփոխմանը զուգընթաց փոփոխել իր շարժումները, օրինակ՝ տիկնիկին քնեցնում են, պարեցնում, մոտենում արջուկին և փախչում նրանից:

Երեխաների խաղային շարժումները հարստանում են և դառնում ավելի ինքնուրույն, երբ դաստիարակը հաճախ փոփոխում է ուսուցման մեթոդական հնարները՝ մեկ մասնակցում է նրանց խաղին, մեկ ցույց է տալիս շարժումները, մեկ հուշում խոսքով կամ երգի բառերով:

Մեկ տարեկան վեց ամսականից մինչև երկու տարեկան

Երաժշտության ունկնդրում

Երաժշտության ունկնդրումը իրականացվում է բազմաթիվ նվագարանների ուղեկցությամբ, ընդ որում, դաստիարակը ծանոթացնում է նվագարաններին. «Սա շվի է, սա քանոն, մետաղաֆոն... և այլն»: Ունկնդրումը կազմակերպելու համար երեխաներին նստեցնում են կիսաշրջանաձև դասավորված աթոռակներին: Դաստիարակը ցույց է տալիս նվագարանը և նշում, որ ինքը նվագում է մեղեդի անձրևի, տիկնիկի, շնիկի մասին և կատարում այն 10-15 վայրկյան: Դադար է տալիս և հարցնում. «Ուզու՞մ եք նորից լսել այս մեղեդին»: Այսպես՝ 2-3 անգամ: Սովորաբար երեխաները հաճույքով են ունկնդրում երաժշտություն, դիմախաղով, ժեստերով արտահայտում են իրենց ապրումները: Որպեսզի երեխաների մեջ պատկերացումներ ձևավորվեն երաժշտության կերպարայնության մասին, կարելի է երգել ծանոթ երգի մեղեդին առանց բառերի՝ նախապես զգուշացնելով, որ երգում է ծիտիկի մասին երգի մեղեդին:

Երաժշտաշարժողական ցուցադրումներում դաստիարակը աստիճանաբար երեխաներին ցուցադրման կատարումից անցնում է խոսքային կատարման:

Երաժշտաշարժողական ցուցադրումը հանդիսանում է ուսուցման մեթոդական հնար: Այն խթանում է երեխաների՝ խաղային- պարային գործունեությամբ զբաղվելու մղումները, կիրառվում են նաև նկարագրողումներ, որոնք օգնում են շարժումների արագ յուրացմանը: Ոչ սյուժետային պարագաների ցուցադրման դեպքում՝ դափ, դրոշակ,

դրանց հետ գործողությունները որոշվում են երգի բառերով: Խաղերում մեծահասակի նախնական ցուցադրության միջոցով բացատրվում է խաղալիքի գործողությունների իմաստը: Այն օգնում է հասկանալու ծայնային հարաբերությունները. շունը հաչում է, արջը՝ մռնչում, մեծ և փոքր թռչունը՝ ժլվլում:

Խաղեր և պարեր

Խաղերն ու պարերը կատարվում են երաժշտական ստեղծագործության բնույթին և ձևին համապատասխան: Այս տարիքում երեխաների հետ կազմակերպվում են սյուժետային խաղեր, որտեղ կերպարի դերը կատարում է խաղալիքը: Սկզբից խաղը ղեկավարում է դաստիարակը, իսկ հետո երեխաներն ինքնուրույն են խաղում: Երեխաների գործողությունները կարգավորվում են խոսքով և երաժշտությամբ: Օրինակ՝ երեխաները զբոսնում են, հետո կքանստում ասելով. «Երեխաները հանգստանում են»: Նրանք կանգնում են՝ պատրաստ պարելու, երբ հնչում է՝ «Երեխաները պարում են» հրահանգը: Սկզբում երեխաները փախչում են, երբ տեսնում են շնիկին, իսկ հետո այլևս չեն երկնչում, երբ առանց տեսնելու լսում են շան հաչոցը: Պարերում ձգտում են կատարել շարժումներ ոչ միայն մեծերի, այլև ընկերների հետ:

Թվարկենք այս տարիքի երեխաների երաժշտական զարգացման ցուցանիշները՝

1. «Երաժշտություն» բառը լսելուն պես, երեխաները մոտենում են դաստիարակին. լուռ և ուշադիր ունկնդրում են 10-15 վայրկյան դաստիարակի նվազը որևէ նվագարանով: Այնուհետև աթոռակներին նստած շարունակում են ունկնդրել ևս 40-45 վայրկյան:

2. Հետաքրքրությամբ դիտում են սյուժետային խաղալիքների երաժշտաշարժական ցուցադրություններ և ձայնակցում՝ արտասանելով երգերի պարզ բառեր: Հանգիստ լսում են ծանոթ մեղեդիներ:

3. Դաստիարակի ցուցումով կատարում են երգի բառերին համապատասխան շարժումներ: Դա անում են նաև առանց դաստիարակի ցուցումի:

4. Երաժշտական դաստիարակին տեսնելուն պես սկսում են երգել ծանոթ երգերի մեղեդիներ. հիշում են ծանոթ խաղերից և երաժշտաշարժական ցուցադրություններից հատվածներ և սեփական նախածեռնությամբ վերարտադրում դրանք:

5. Մտապահում և կատարում են երգի բառերի հետ կապված իրար հաջորդող շարժումներ: Ձայնակցում են երաժշտական խաղերի առանձին դրվագներ:

6. Պարային երաժշտություն հնչելիս սկսում են ինքնուրույն պարել: Հրավիրում են պարելու դաստիարակին կամ ընկերոջը: Դաստիարակի ցուցումով կատարում են բազմազան պարային շարժումներ:

7. Դաստիարակի բանավոր ցուցումով երեխաները կատարում են շարժումներ, որոնք նախկինում տեսել կամ սովորել են երաժշտաշարժական ցուցադրությունների ժամանակ: Այնուհետև տեղափոխում են դրանք ինքնուրույն խաղերի մեջ՝ առաջնորդելով ձայնանմանակմամբ կամ բառերով:

Դիտարկենք երգի ուսուցման պարապմունքի մեկ տարբերակ «Նախշուն հավիկ», երաժշ.՝ Ալ.Օհանյանի, խոսք. Գ.Գեղունու:

Դաստիարակը նստում է աթոռակին՝ դեմքով դեպի երեխաները: Դռան հետևից լսվում է հավիկի կտկտոցը: Դաստիարակն ասում է, որ հիմա հավիկն է գալու: Կտկտոցը դադարում է, սակայն հավիկը չի գալիս: Այդ ժամանակ դաստիարակը հատակին «ցանում» է երևակայական ցորենի հատիկներ: Նորից լսվում է հավիկի կտկտոցը: Դրանից հետո մեծահասակը ներս է բերում խաղալիք հավիկը՝ բերանին ցորենի հատիկ: Հավիկը սկսում է վազել խմբասենյակում, հետո նստում է աթոռակին: Դաստիարակը կատարում է համապատասխան երգ և վերջին խոսքերի ժամանակ արտասանում՝ «Դու ինձ օրը մի ձու տուր»: Երեխաները ձեռքերով «ձու» են ցույց տալիս:

Երգը կարելի է կրկնել, սակայն այս անգամ հավիկը նստում է դահլիճի այլ մասում:

Երբ երեխաներն արդեն գիտեն երգը, կարելի է այն զուգակցել դիմախաղով և ժեստերով:

Այս նույն օրինակով կարելի է սովորեցնել մյուս բոլոր երգերը:

Տարվա վերջում երեխաները ծայնակցում են «բայ-բայ» ծայնակապակցությամբ, երբ օրորում, «հեյ-հեյ» են ասում և պարեցնում տիկնիկին:

1-1,6 տարեկանում երեխաներն ունկնդրում են կարճ երգերի մեղեդիների կատարումներ մետաղաֆոնով:

1,6-2 տարեկանում դաստիարակը երգերը կատարում է առանց խաղալիքի ցուցադրման՝ ուղեկցելով երգը համապատասխան շարժումներով:

Առարկաներով վարժությունների և պարերի ընթացքում երեխաները սկզբից կատարում են շարժումներ դաստիարակի ցուցադրմամբ, իսկ հետո վերարտադրում են շարժումները՝ ելնելով երգի բառերից:

Պարերում կատարում են դոփյուններ մեկ ոտքով, տեղափոխվում են մեկ ոտքից մյուսին, վազում են տեղում, պտտեցնում են դաստակները ձեռքերի տարբեր դիրքերում:

1,6-2 տարեկան երեխաները հաճույքով են քայլում խմբասենյակում՝ երգի ուղեկցությամբ, դաստիարակի ցուցումով՝ ձգտելով լավ բարձրացնել ոտքերը:

Երաժշտական պարապմունքներն այս խմբում անցկացվում են շաբաթական 2 անգամ՝ 10 րոպե տևողությամբ:

Դաստիարակը կարող է օգտագործել նաև նվագարկիչ և այլ նվագարաններ:

Նկարչություն

Երեխաներին պետք է նկարել սովորեցնել: Նկարել կարելի է սովորեցնել անխտիր՝ բոլոր երեխաներին: Պետք է առաջարկել նկարել ձեռքով կամ վրձինով: Ոչ ավանդական նկարչության միջոցներով. ձեռքի ափերի հպումով հետք թողնել թղթի, թափված մանրածավարի (մաննի) վրա: Դա շատ զվարճալի է: Նկարել կարելի է անգամ ուղղակի լոգարանում, որ «փոքրիկ նկարիչը» հետո անմիջապես լվացվի:

Նախադպրոցական հաստատությունում նկարչության ուսուցումը սկսվում է երկու տարեկանից: Որպեսզի գրագետ իրականացվի այդ գործընթացը, դաստիարակը պետք է իմանա՝ ինչպես արթնացնել նկարելու ցանկություն, և երեխան իր զարգացմանը զուգընթաց ինչ փուլեր պետք է անցնի:

Մեկ տարեկանից, երբեմն ավելի ուշ, երեխան սկսում է ձեռքով բռնել գդալ, փայտիկ, մատիտ և տանել թղթի վրայով: Դա կատարվում է աստիճանաբար՝ փուլերով: Սկզբում երեխան բռնուցքի մեջ սեղմած, անգամ ամբողջ թևը շարժելով, մատիտով սկսում է անընդհատ հարվածել թղթին՝ հաճույք ստանալով շարժումների կրկնությունից ու հարվածների ծայրից:

Սակայն շուտով երեխան նկատում է թղթի վրա մատիտի թողած հետքը: Նա կրկնում է շարժումները, որպեսզի կրկին ու կրկին տեսնի այդ գծերը, որոնց ուղղությունները սկզբում պատահական են, չնշմարվող, քառսային, և անկանոն մատիտի վրա ճնշման ուժը: Պատահում է, որ մատիտի ծայրի սեղմումից պատռվում է թուղթը: Կետերի և գծերի օգնությամբ երեխան յուրացնում է թղթի մակերեսը: Աստիճանաբար մատիտով կատարած ձեռքերի շարժումներն ավելի կոորդինացվում են: Երեխան տեսողական հիշողության օգնությամբ արդեն ունակ է դառնում կրկնել միանման շարժումներ, թեպետ տեսողական վերահսկումը դեռևս թույլ է: Գծիկները մշտապես դուրս են գալիս թղթի սահմաններից, քանի որ կանոնավորված չէ ձեռքերի շարժումների կոորդինացիան: Որոշ ժամանակ անց ձեռքերի ավելի պարզունակ շարժումները (ուղիղ և հետադարձ)

բարդացվում են, փոխվում է դրանց ուղղությունը. կորագծերը վերածվում են պտուտակածն գծերի, տարածվում է ամբողջ թղթի վրա, զսպանակները վերածվում են ավելի բարդ կլորների: Ձեռքի մատիտով կրկնվող միանման ու անընդհատ շարժումները ռիթմիկ են դառնում է, և դա բավականություն է պատճառում հենց երեխային:

Երկու տարեկան երեխան կարող է գծագրել մի քանի թուղթ՝ չկտրվելով մատիտի հետք թողնելու մտքից: Այս փուլը համարվում է «կարակուլի» շրջան: Նկարչության նման տեսակը նախորդում է կերպարվեստային գործունեությանը՝ նպաստելով նկարի բովանդակության հանդեպ հետաքրքրության առաջացմանը, շարժումների կոորդինացմանը, տեսողական վերահսկմանը:

Գունավոր մատիտներով աշխատանքներում ուշադրություն է հրավիրվում վառ գույներին: Երեխային ուրախացնում է գույնը, նա ձգտում է գծել մուգ՝ մոտեցնելով գծիկները և ամուր սեղմելով մատիտը: Նպատակային պատկեր դեռևս չկա: Երեխան չի կարող նպատակ դնել նկարել ինչ-որ բան: Բայց այդ ժամանակ նա ճանաչում է նյութերի (թուղթ, մատիտ) հատկանիշները, ընկալում է գույնը, թղթի վրա ի հայտ եկած գծիկների կախվածությունը սեփական ձեռքերի շարժումներից, նայում է և ուշադրություն դարձնում մատիտի հետքերին:

Այս շրջանում աստիճանաբար զարգանում են ձեռքի և աչքի կոորդինացված շարժումները: Մեծահասակի ուղղորդող ուշադրության ներքո, երեխան արդեն բռնում է մատիտը, յուրացնում մատիտով ամենատարրական շարժումները, տանում թղթի վրայով, որպեսզի ստանա տեսանելի հետքեր: Այս փուլում կարևոր է երեխայի գործողությունները չթողնել ինքնահոսի, այլ ցույց տալ, թե ինչպես է պետք բռնել մատիտը, թուղթը: Կարևոր է նաև ուշադրությունը հրավիրել երեխայի ընդհանուր աշխատանքին (գծեր, ուղղություններ):

Այս տարիքում խմբային հատուկ նկարչական պարապմունքներ չի նախատեսվում: Երեխաներին հնարավորություն է տրվում իրենց ցանկությամբ զբաղվել նկարչությամբ: Դա կներգործի կերպարվեստային գործունեության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու հանգամանքի

վրա: Մեկուկես տարեկանում երեխաներին տրամադրվում են թուղթ և մատիտ: Եթե երեխան մանկապարտեզ չի հաճախել, և տանը չեն նկարել, ապա գործունեության զարգացումը նշանակալից կերպով կուշանա (2-2,5 տ.): Դրա համար այդ խնդիրը տեղափոխվում է փոքրերի առաջին խումբ:

Ներկայացնենք սույն ծրագրով համակարգված աշխատանքի դեպքում ակնկալվող արդյունքները՝ չափորոշիչների տեսքով:

Խաղ և ինքնուրույն գործունեություն

Ինքնուրույն գործունեության տարբեր ձևերի ժամանակ պետք է ապահովել միջավայր՝ երեխաների առույգ վարքի և դրական հուզական վիճակի համար: Կազմակերպելով խաղեր և ինքնուրույն գործունեության տարբեր ձևեր՝ պետք է հատուկ ուշադրություն դարձնել երեխաների իմացական և շարժողական ակտիվության վրա: Քայլքի, վազքի, սողանցման միջոցով երեխաների շարժումների զարգացմանը նպաստելով հարկավոր է հետևել, որ յուրաքանչյուր երեխա բավարար չափով շարժվի: Խթանել դիտածի մասին պատմելու ցանկությունը, երեխաների շարժախաղերը. գնդակախաղ, սայլակի և գլորանների վարում, բարձրանալ և իջնել աստիճաններից, վազել ուղիղ ճանապարհով և այլն: Շարժախաղերը հարկավոր է հերթագայել հանգիստ խաղերով:

Երեխաներին պետք է ներգրավել նկարներ դիտելու, պատկերվածի մասին խոսելու զբաղմունքի մեջ: Հարկավոր է նրանց համար կարողալ(արտասանել) կրկնվող փոքրիկ բանաստեղծություններ, քառատողեր, կատակ-խաղիկներ՝ առաջացնելով ուրախ տրամադրություն, լսածը կրկնելու ցանկություն: Դիտել, թե ինչպես է նկարում դաստիարակը: Զբոսանքի ժամանակ խթանել ավազի կամ ձյան վրա նկարելու ցանկությունը:

Երեխաների մեջ դաստիարակել հետաքրքրություն սյուժետապատկերավոր խաղալիքների նկատմամբ: Սովորեցնել ցույց տալ և անվանել խաղալիքը՝ առաջադրանքի համաձայն, բացատրության արդյունքում իմանալ խաղալիքների նշանակությունը: Կրկնելով մեծերին՝ կատարել պարզ գործողություններ(քնեցնել տիկնիկին, կերակրել շնիկին): Մեկուկես տարեկանին մոտ երեխաներին անհրաժեշտ է սովորեցնել խաղի համար գտնել անհրաժեշտ խաղալիքը (վերմակը, որպեսզի քնեցնի տիկնիկին): Խթանել, որպեսզի խաղային միևնույն առաջադրանքը կատարեն տարբեր խաղալիքներով (պառկեցնել քնելու մեծ ու փոքր տիկնիկին, կերակրել շնիկին, նապաստակին, արջուկին), անվանել խաղալիքներով կատարվող գործողություններ: Մեկուկես տարեկանից

երեխաներին պետք է մղել սեփական նախաձեռնությամբ արտացոլելու շրջակա միջավայրը, սովորեցնել՝ խաղային խնդրի լուծման համար օգտագործել մի քանի խաղալիքներ, խաղի մեջ արտացոլել մի շարք փոխկապակցված գործողություններ (տիկնիկին նստեցնել աթոռակին, ափսեմ դնել սեղանի վրա և կերակրել կամ հագցնել տիկնիկին և տանել զբոսանքի):

Խրախուսանքի արժանի է, երբ դաստիարակը հասել է այնպիսի հաջողության, որ երեխաները երբեմն(երկու և ավելի տարիքում) հասկանալով խաղային խնդիրը՝ խաղի մեջ օգտագործում են առարկա փոխարինողներ (օրինակ՝ փայտի կտորը՝ օճառի փոխարեն, մատիտը որպես կախարդական գավազան) և երբեմն՝ երևակայական առարկաներ:

Պետք է սովորեցնել խաղալ կողք-կողքի և փոքրիկ խմբերով, փոխանակել կամ զիջել խաղալիքը:

Նպաստել խաղերի ժամանակ ինքնուրույն լուծելու խնդիրները՝ չանելով նրանց համար այն, ինչ իրենք կարող են:

Մեծ չափերի կառուցողական խաղերի համար հարկավոր է տրամադրել սյուժետային խաղալիքներ՝ խաղային բովանդակությունը հարստացնելու նպատակով:

Ձմռանը ձյունով խաղերի համար պետք է տրամադրել ոչ սուր փայտե բահեր, քերիչներ, դուլեր և այլն:

Ավագով խաղերը հետաքրքիր և բովանդակալից դարձնելու համար երեխաներին պետք է ոչ միայն տրամադրել բահեր, քերիչներ, դուլեր, այլև տարբեր կաղապարներ, խոնավ ավազից «կարկանդակներ» և այլ առարկաներ պատրաստելու համար:

Երկու տարեկանում երեխան սկսում է խաղալ ուրիշ երեխաների հետ և սովորում է շփվել խմբում: Նա հուզվում է, երբ չի կարողանում անել ցանկացածը և ստիպված է ենթարկվել մեծամասնության ցանկությանը: Սակայն և՛ համերաշխ խաղի, և՛ վեճի մեջ նա սովորում է համակեցությամբ ապրել կոլեկտիվում: Վեճերը կարևոր են, որովհետև դրանք զարգացնում են սեփական նախաձեռնությունները: Վեճերը ծագում են տարբեր պատճառներով. երեխան հաղթում է, զիջում է կամ

պատասխան է տալիս: Օրինակ՝ երկու տարեկանների վեճը պասիվ է, իսկ երեք տարեկան երեխաներն իրենք են նախաձեռնում: Դա նշանակում է, որ երեք տարեկանը սկսում է արտահայտել իր սեփական «ես»-ը: Երեխաների մեջ անհամաձայնություններ կարող են լինել խաղալիքի, ճոճանակի, սահնակի կամ այլ բանի համար: *Առանց պատճառի վեճ չի լինում:* Վեճերի վատ լինելու մասին, առանց պատճառների բացատրության, ցանկացած փորձ չի կարող համագործակցություն զարգացնել: Կարելի է կարծել, որ երեխաների վեճերին անհարկի խառնվելը նշանակում է խանգարել նրանց՝ ապրել կոլեկտիվում: Երեխաներն ունեն սեփական տրամաբանություն և յուրովի շփվելու մոտեցումներ: Եթե մենք փորձենք համոզել նրանց, որ կռվելը վատ է, նշանակում է երեխան կամփոփվի ինքն իր մեջ և կմեկուսանա ընկերներից:

Վեճերը կոլեկտիվում ապրելու առաջին դասերն են:

Ավելորդ նյարդայնությունից խուսափելու հիմնական ելքը երեխային կարգուկանոնի վարժեցնելն է, քանի դեռ չի լրացել երեխայի մեկուկես տարին:

Աշխատանք ծնողների հետ

Երեխայի լիարժեք զարգացումը դժվար է պատկերացնել առանց ծնողների մասնակցության: Դա ամենօրյա ջանք պահանջող աշխատանք է, որը պետք է կատարվի սիրով և հաճույքով, քանզի այն արվում է երեխայի համար, նրա առողջությանը և համակողմանի զարգացմանը նպաստելու համար:

Ծնողների հետ համագործակցության ժամանակ պետք է՝ հնարավորինս մեծ ուշադրություն դարձնել երեխայի հետ շփմանը, խոսել նրա հետ՝ օգտագործելով տարբեր առիթներ,

- կատարել ֆիզիկական վարժություններ,
- օղափոխել երեխայի սենյակը,
- ավելացնել զբոսանքների և մաքուր օդում քնելու ժամանակահատվածը,
- ապահովել բնակարանի անվտանգությունը. երեխան սիրում է մատիկները մտցնել անհարմար և վտանգավոր տեղեր. վարդակի անցքերը և այլն,
- համատեղ խաղերը պետք է դառնան ավելի բովանդակալից՝ «Ծափիկ-ծափիկ», «Ծիվ-ծիվ», բազմազան խաղեր՝ մատիկների մերսումով և ծալումով («Այս մատիկը») և այլն,
- խոսել երեխայի հետ՝ անվանել շրջապատում գտնվող առարկաները, իր մարմնի մասերը և այլն,
- ժամանակն է ձեռք բերել հարմարավետ կոշիկներ՝ բնական նյութից պատրաստված, ամբողջական ամուր ներբաններով, փոքրիկ կրունկով և ներդիրով («սուպինատոր»), ինչը կանխարգելում է հարթաթաթությունը,
- խթանել և աշխուժացնել երեխայի արթնությանը, առավոտյան և ցերեկը՝ կատարել մերսում, ֆիզիկական վարժանքներ (այդ ամենը արագացնում է նյութափոխանակությունը և բարենպաստ ազդում երեխայի ինքնազգացողության վրա),
- ուշադրություն դարձնել երեխայի օրվա ռեժիմին, զբոսանքներին:

Ծնողների խնդիրն է՝

- ծանոթացնել առաջին գրքերին,
- հաճախակի կազմակերպել համատեղ խաղեր («Պահմտոցի»)՝ երեխայի կամ մեծահասակի դեմքը ծածկելով թաշկինակով, անձեռոցիկով, գլխաշորով,
- առավել ակտիվացնել համատեղ խաղերը,
- հնարավորինս շատ խոսել երեխայի հետ,
- ազատ խաղալու հնարավորություն տալ նրան,
- հետևել, որպեսզի ստանա իր տարիքին համապատասխան բավարար տեղեկատվություն:

Նայելով երեխաներին, անգամ առանց որևէ բան հարցնելու, կարելի է հասկանալ, թե նա ինչպես է օրն անցկացրել մանկապարտեզում, կամ դիտելով խաղերը, իմանալ, թե ինչպիսին է եղել իրավիճակն ընտանիքում:

Ծնողների համար ստեղծված մանկավարժական վահանակը պետք է ապահովի տեղեկատվություն՝ երեխաների զարգացման ընթացքի, ծրագրային խնդիրների, ծնողների իրավունքների, պարտականությունների և այլ խնդիրների մասին:

Հնարավորության դեպքում պետք է ունենալ հատուկ սենյակ կամ «անկյուն»՝ ծնողների հետ կազմակերպելու կողմնորոշման հանդիպումներ՝ երեխաների՝ մանկապարտեզին հարմարման, խնամքի և դաստիարակության, խմբից խումբ սահուն անցնելու, երեխայակենտրոն ուսուցման և այլ խնդիրների վերաբերյալ:

Ծնողներին տրվող անհատական և խմբային խորհրդատվությունների թեմատիկա

- Ռեժիմը և դրա նշանակությունը երեխայի կյանքում
- Ինչպես նախապատրաստել երեխային՝ հաճախելու մանկապարտեզ
- Փոքրիկի ճիշտ սնուցումը:
- Ազդեսիվ երեխա. ի՞նչ անել:

-
- Եթե ձեր երեխան ամոթխած է:
 - Խաղը զվարճալի է, բայց զվաճալիք չէ:
 - Ի՞նչ խաղալիքներ ունենալ տանը և ինչու:
 - Կամակորության վերացման ուղիները:
 - Ձախլիկ երեխա:
 - Ինչպիսի՞ն է ձեր երեխայի խոսքը:
 - Ընկերական փոխհարաբերությունների դաստիարակումը խաղի շրջանակում:

- Խաղացե՛ք երեխաների հետ:
- Ե՞րբ երեխան լավ կխաղա:
- Ճանաչու՞մ եք ձեր երեխային:
- Սովորեցրե՛ք երեխաներին շփվել:
- Տանը և մանկապարտեզում երեխայի դաստիարակության ընդհանրությունը (ընդհանուր տողը):

• Երեխայի առողջության համար համապատասխան պայմանների ստեղծումը:

Հարկավոր է տանը հատուկ պայմաններ ստեղծել երեխաների խաղերի (անհրաժեշտության դեպքում համագործակցելու) համար:

խորհուրդներ ծնողներին

• Երեխայի հետ խաղալիս ձևացրե՛ք, որ շատ հաճույքով եք ուզում խաղալ:

- Երեխայի համար գնե՛ք խաղալիքներ:
- Երեխային նվիրե՛ք խաղեր և խաղալիքներ:
- Հաճախակի վերցրե՛ք երեխային ձեռքի վրա:
- Մի՛ խուսափեք երեխային պառկեցնել ձեզ հետ՝ անկողնում:
- Երբեք մի՛ խոսեք երեխայի հետ նրա լեզվով:
- Անգամ նորածինն է զգում ծնողների վեճը՝ չհասկանալով բառերի իմաստը:

- Տանը ստեղծե՛ք հաճելի մթնոլորտ:

- Վեճերը երեխայի մեջ առաջացնում են շփման ունակություն:
- Նյարդայնությամբ մի՛ վարակեք երեխաներին:
- Վաղ տարիքում երեխաները արագ են զարգանում, ուստի հաճախակի՝ փոխեք խաղալիքները:

• Հնարավորություն տվեք գործելու նաև առարկաներով, որոնք 12 ամսականում նպաստում են լսողության և տեսողության զարգացմանը. 2-3 ամսականում՝ խոշոր սյուժետային խաղալիքներ և հնչեղ խաղալիքներ, 5-6 ամսականում՝ պլաստմասե, ռետինե, փայտե գնդակներ և գնդիկներ, 7-8 ամսականում՝ տարբեր գույների ու չափերի թեմատիկ խաղալիքներ, 8-9 ամսականում՝ փափուկ խաղալիքներ, բացվող և փակվող խաղալիքներ, 10-12 ամսականում՝ գլորվող գնդակ, բացվող-փակվող տուփեր, տակառիկներ, 1 տարեկանում՝ մուրճ, խաղալիք բահ, լարովի խաղալիքներ և այլն:

• Տատիկի և պապիկի ներկայությունը բարենպաստ միջավայր է երեխաների զարգացման համար:

- Երբեք մի՛ ծաղրեք երեխային:
- Լավ է երեխային գովել, քան նախատել:
- Երեխայի հետաքրքրությունների զարգացման լավագույն միջոցը կրկնությունն է:

• Ուտանավորի ուսուցումը զարգացնում է հիշողությունը:

• Նկարելու ստանդարտ թուղթը ձևավորում է ստանդարտ մտածողություն:

- Խաղալիքների ավելցուկը ցրում է երեխայի ուշադրությունը:
- Երեխային պետք է շրջապատել այնպիսի խաղալիքներով, որոնց շոշափումը հաճույք է պատճառում:

• Մարզեք երեխայի ձախ ձեռքը՝ աջի նման:

Կյանքի երկրորդ տարում առաջարկվում են բոլոր տեսակի խաղալիքները: Երեխաները սիրով խաղում են կենդանիների, ձկների հավաքածուներով, սայլակներով, սահնակներով, ավտոմեքենաներով, լոտոներով, կառուցողական անվտանգ նյութերով և դրանց լրացնող սյուժետային խաղալիքներով:

Դաստիարակը պարտավոր է ոչ միայն ծնողների ուշադրությունը հրավիրել երեխաների ինքնուրույն խաղերի զարգացման համար ստեղծված պայմանների վրա, այլև աջակցել՝ ելնելով երեխայի զարգացման աստիճանից. նա պետք է որոշի, թե ի՞նչ և ինչպե՞ս սովորեցնել երեխային, ի՞նչ խաղալիքներ տրամադրել և ինչու՞, ու՞ր գնալ երեխայի հետ, և ի՞նչ դիտել, ի՞նչ ցուցադրել, ինչպե՞ս խաղալ նրա հետ և այլն: Առանց մեծերի ուսուցողական ներգործության ոչ մանկապարտեզում, ոչ ընտանիքում հնարավոր չէ ապահովել երեխաների մտավոր լիարժեք զարգացումը:

Ծնողների հետ համագործակցելիս պետք է նկատի ունենալ, որ այսօր երեխան այլ է, քան երեկ: Նա ֆիզիկապես և մտավորապես շատ արագ է զարգանում յուրաքանչյուր փուլում: Այդ պատճառով կարևոր է, որ ծնողները առավել ուշադիր հետևեն, թե ի՞նչ և ե՞րբ է հարմար երեխայի համար, ի՞նչն է հետաքրքիր: Միշտ պետք է որսալ առանց զարգացման բարենպաստ ազդեցության ճիշտ ժամանակը: Հավանաբար բոլոր երկրներում մեծերը երեխաների հետ հաճախ խոսում են «մանկական» լեզվով՝ մտածելով, որ երեխան «մեծերի» լեզուն չի հասկանա: Նման մոտեցման դեպքում երբեք չեն զարգանա երեխայի լեզվական ունակությունները: Երկու տարեկան երեխան հանգիստ հասկանում է անգամ հեռուստահաղորդումների լեզուն: Անշուշտ, նոր խոսող երեխան, ինչ-որ անհասկանալի բաներ է ասում, սակայն ոչ այն պատճառով, որ նա չի հասկանում, այլ այն, որ դեռևս զարգացած չէ խոսակցական հնչարտաբերման համակարգը, և այն «չի հասնում» նրա խոսելու ցանկության հետևից:

Ծնողները և ընտանիքի բոլոր անդամները պետք է գիտակցեն, որ ամենևին կարևոր չէ ինչ-որ արտակարգ բան անել երեխայի վաղ զարգացմանը նպաստելու համար: Այդ հարցում առավել էական են ընտանեկան համերաշխ, հաճելի մթնոլորտը և ընտանիքում ստեղծված ջերմ ու ներդաշնակ հարաբերությունները: Ընտանեկան միջավայրով, երեխաների նկատմամբ դրսևորած վերաբերմունքով պայմանավորվում է

նաև այն հազամանքը, թե ինչպիսին կմեծանա ընտանիքի ավագ, միջնեկ, կրտսեր կամ՝ միակ երեխան:

Մինչ հիմա գործող ծրագրերում և մեթոդական ցուցումներում հատուկ ուշադրության չեն արժանացվել երեխայի նկատմամբ կիրառվող մոտեցումները՝ ըստ նրա ընտանիքում ունեցած կարգավիճակի. ընտանիքի որերորդ երեխան է, և ինչ զգացողություններ ունի որպես այդպիսին:

Կանոններ ծնողների համար

- Երեխաներին մի՛ վախեցրեք և մի՛ սպառնացեք:
- Խոստումներ մի՛ կորզեք:
- Մի՛ դրսևորեք *չափից ավելի* ուշադրություն. այն կարող է կանխել երեխաների ինքնուրույն որոշումների կայացումը:
- Մի՛ պահանջեք, որ նա անմիջապես ենթարկվի ձեզ:
- Մի կատարեք երեխայի բոլոր քմահաճույքները:
- Երեխաների հետ խոսե՛ք դանդաղ, հանգիստ, սիրալիիր և անընդհատ կրկնեք բառերը. մի՛ օգտագործեք մանկական կամ աղավաղված բառեր
- Շատ մի՛ խոսեք:
- Պետք չէ դառնալ ձանձրալի խրատախոս:

Տարեվերջում երեխաները պետք է իմանան և կարողանան

- հեշտությամբ, հաջորդական քայլերով իջնել և բարձրանալ աստիճաններով,
- նետել գնդակը 60-70 սմ հեռավորությամբ նպատակակետին,
- ուտել բավականին կոկիկ,
- փորձել մասնակիորեն հանվել և հագնվել, դասավորել հագուստը,
- բառապաշարում ընդգրկված բառերի թիվը հասնում է 200-ի,
- սկսում է օգտագործել 3-4 բառից կազմված նախադասություններ,
- խոսքը դառնում է մեծահասակի հետ շփվելու միջոց,
- պարապմունքներում յուրացրած գործողությունները փոխադրում է ինքնուրույն գործունեության մեջ,
 - ընդհանրացնում է առարկաներն ըստ հատկանիշների,
 - նմուշին համապատասխան ընտրում է ձևով նման առարկաներ,
 - տարբերում է 3 հիմնական գույները,
 - հասկանում է նկարի պարզ սյուժեն,
 - հարցեր է տալիս և պատասխանում հարցերին,
 - խաղի ժամանակ հեշտ վերարտադրում է հաճախ ընկալած առանձին երևույթներ,
 - խաղի ընթացքում վերարտադրում է առանձին հաջորդական գործողություններ,
 - կառուցում է պարզ շինություններ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015թթ. ռազմավարական ծրագիր, ՀՀ կառավարություն, 2008թ:
2. ՀՀ ԿԳՆ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչներ, Երևան, 2011թ:
3. Լ.Լ. Մանուկյան, Սուրմանկապարտեզում վաղ տարիքի երեխաների դաստիարակության մի քանի հարցերի մասին, Հանրապետական նախադպրոցական գիտամեթոդ կաբինետ, 1972թ:
4. Մանկապարտեզի երեխաների դաստիարակության և ուսուցման ծրագիր, Հանրապետական նախադպրոցական գիտամեթոդ կաբինետ, 1986թ:
5. Ռ. Առաքելյան, «Շարժախաղեր», Երևան 2009թ:
6. Ա. Ն. Ջիմինա, Երաժշտական դաստիարակության և զարգացման հիմքերը, Մոսկվա, «Վլադոս», 2000թ:
7. Ա. Լուսինյան, Կ. Ղազարյան, Երաժշտությունը մանկապարտեզում, «Ձանգակ 97», Երևան 2009թ:
8. Ռ. Ծառուկյան և ուրիշներ, Ծնողական կրթություն, Վերապատրաստողների ուղեցույց, Երևան, 2005թ:
9. Ռ. Ղազարյան և ուրիշներ, Ներկայացումների սցենարներ և խաղեր, ՀԿ, Վայոց Ձոր, 2007թ:
10. Կ. Ղազարյան, Երաժշտադիդակտիկ խաղեր, Երևան 2007թ.
11. Լ. Մանուկյան և ուրիշներ, Նախադպրոցական կրթական համալիր ծրագիր, «Ձանգակ 97», 1999թ:
12. Մանկապարտեզի երեխաների դաստիարակության և ուսուցման տիպային ծրագիր, Երևան 1986թ:
13. Ս. Մարության, Ա. Դալլաքյան, Նախադպրոցական մանկավարժություն, «Ձանգակ 97», Երևան, 2008թ.
14. Մանկապարտեզի դաստիարակության ծրագիր, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1973թ.
15. «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես:
16. «Նախադպրոցական կրթություն» գիտամեթոդական հանդես
17. Ս. Հովեյան, «Հայկական ազգային շարժախաղերը նախադպրոցական կրթական համակարգում», Երևան, «ՎՄՊրինտ», 2010թ:
18. Լ. Պողոսյան, Եկեք երգենք ու խաղանք, «Արևիկ», Երևան, 1997թ:
19. Ֆիզիկական կուլտուրան մանկապարտեզում, հանրապետական գիտամեթոդական կաբինետ, Երևան, 1985թ:

-
20. Н.М. Аксарина и др., "Развитие и воспитание ребенка от рождения до трех лет", "Просвещение", Москва, 1965г.
 21. М.М. Алексеева и др., Методика развития речи и обучения родному языку дошкольников, Москва, 2000г.
 22. Программа "Истоки" Москва, 2003г.
 23. М. А. Васильева и др., Программа воспитания и обучения в детском саду, Москва, 2008г.
 24. М. А. Васильева, "Программа воспитания и обучения в детском саду", Москва, 2005г.
 25. М. А. Васильева, В. В. Гербова Программа обучения в детком саду, Москва, 2011г.
 26. В.В. Гербова, "Развитие речи в детском саду", Москва 2010г.
 27. Общеобразовательная программа дошк. Образования "От рождения до школы", Москва, 2010г.
 28. Программа воспитания и обучения в детском саду "Радуга", Москва, 2006г.
 29. Программа для родителей и воспитателей "Из детства в отрочество", Москва, 2006г.
 30. Программа развития и воспитания детей в детском саду", СПб 2004г.
 31. А. В. Антонова и др. Примерная оснавная общеобразовательная программа дошкольного образования "От рождения до школы", Москва, 2010г.
 32. Журнал "Дошкольное воспитание".

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<i>Ներածական խոսք.....</i>	<i>5</i>
<i>Դաստիարակության հիմնական խնդիրները.....</i>	<i>10</i>
<i>Վաղ տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության խնդիրներն ու մեթոդները.....</i>	<i>13</i>
<i>Օրվա մոտավոր կարգացուցակ (ռեժիմ).....</i>	<i>15</i>
<i>Վաղ տարիքի երեխաների մտավոր դաստիարակության խնդիրներն ու մեթոդները.....</i>	<i>21</i>
<i>Հոգեկան գործընթացների ձևավորումը.....</i>	<i>22</i>
<i>Զգացմունքների զարգացում.....</i>	<i>24</i>
<i>Խաղեր և պարապմունքներ.....</i>	<i>25</i>
<i>Պարապմունքների պլանավորում.....</i>	<i>28</i>
<i>Խոսքի զարգացում և կողմնորոշում շրջապատում</i>	<i>30</i>
<i>Դաստիարակի նախապատրաստումը խոսքի զարգացման պարապմունքների համար.....</i>	<i>39</i>
<i>Բարոյական և գեղարվեստագեղագիտական դաստիարակության խնդիրներն ու մեթոդները.....</i>	<i>42</i>
<i>Վաղ տարիքի առաջին խումբ.....</i>	<i>49</i>
<i>Նորածնի սենյակի և խմբասենյակի ձևավորմանը ներկայացվող պահանջները</i>	<i>50</i>
<i>Զրոսանքներ մաքուր օդում.....</i>	<i>54</i>
<i>Երեխաների կաթնատամների դուրս գալու հերթականությունը.....</i>	<i>56</i>
<i>Առաջին բառերը հասկանալը և թոթովանքի զարգացումը</i>	<i>62</i>
<i>Խաղ-պարապմունքներ.....</i>	<i>64</i>
<i>Ֆիզիկական դաստիարակություն.....</i>	<i>72</i>
<i>Մեթոդական ցուցումներ.....</i>	<i>77</i>
<i>Երաժշտական դաստիարակություն.....</i>	<i>79</i>
<i>Մեթոդական ցուցումներ.....</i>	<i>86</i>
<i>0-12 ամսական երեխայի զարգացման չափանիշներն ըստ ամիսների</i>	<i>91</i>

<i>Վաղ տարիքի 2-րդ խումբ.....</i>	<i>102</i>
<i>Ֆիզիկական դաստիարակություն.....</i>	<i>113</i>
<i>Մեթոդական ցուցումներ.....</i>	<i>118</i>
<i>Օրվա մոտավոր կարգացուցակ /ռեժիմ/.....</i>	<i>120</i>
<i>Խնայողի զարգացում և շրջապատում կողմնորոշման ընդլայնում.....</i>	<i>127</i>
<i>Ծանոթացում բնությանը.....</i>	<i>135</i>
<i>Երաժշտական դաստիարակություն.....</i>	<i>137</i>
<i>Տոներ և զվարճալիքներ.....</i>	<i>143</i>
<i>Մեթոդական ցուցումներ.....</i>	<i>144</i>
<i>Նկարչություն.....</i>	<i>151</i>
<i>Խաղ և ինքնուրույն գործունեություն.....</i>	<i>154</i>
<i>Աշխատանք ծնողների հետ.....</i>	<i>157</i>
<i>Տարեվերջում երեխաները պետք է իմանան և կարողանան.....</i>	<i>163</i>
<i>Օգտագործված գրականության ցանկ.....</i>	<i>164</i>

